

Ա. ՍԱՐԿԵԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Դ Ր Ա Մ Ա

Զ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ



PRINTED IN GREECE

891.99

Ս-28

Փ Ա Ր Ի Զ
1935

1061

891.99
U-28
Ա. ՍԱՐԿԱԶԵԱՆ

6 FEB 2009

ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Դ Ր Ա Մ Ա

Զ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ

PRINTED IN GREECE

Փ Ա Ր Ի Զ
1935

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

	Տարիք
ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ՝ րանսիե,	50
ՄԱԳԹԱՂ՝ նրա կինը,	45
ՍԻՐԱՔ՝ նրանց սուսգ որդին,	27
ԱՇԽԷՆ՝ նրանց աղջիկը,	19
ՎԱՀԱՆ՝ նրանց կրտսեր որդին,	17
ԱՆԱՀԻՏ՝ նրանց հարսը (Բ. արարից),	20
ԱՐՏԱԿ՝ նրանց փեսան (Բ. արարից),	26
ԱՇՈՏ՝	25
ՎԱՐԴԱՆ՝ (Սիրաֆի կուսակցական	32
ՄՈՒՇԵՂ՝ (ընկերները	23
ԳԵՂԱՄ՝ Վահանի կուսակցական ընկերը	22
ԱՂԱԲԱԲՈՎ, ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՎԻՉ Հաճախակի,	45
ԱԿՈՓՈՎ, ՎԱՐԴԱԶԱՐ ԱՌԱՔԵԼՈՎԻՉ՝ գործարանատեր,	50
ԲԱՂՐԱՄՈՎ ԲՈՒՂԴԱՆ ՍԵՐԳԷՅԻՉ՝ գործարանատեր,	55
ՍՈՒՐՀԱՆԴԱԿ,	20-25
Երկու զինուած երիտասարդներ («մսուղերիս»)	20-25

Գործող անձինք նշանակուած ստիֆն ունին այն արա-
րում, երբ հանդես են գալիս առաջին անգամ: Հետագայ արա-
րներում, նրանց ստիֆն ու դիմագծերը համապատասխանորեն
փոխում են:

Առաջին արարը՝ Թիֆլիսում 1914 թ. Յուլիան,
Երրորդ արարը՝ Թիֆլիսում 1917 թ. Հոկտեմբերին
Երրորդ արարը՝ Երևանում 1920 թ. Օգոստոսին
Չորրորդ արարը՝ 19... թ. աշնանը

ՍԱՀՏԻՏԻ
ԱՆՎԱՆ
ՏԵՆԱԴԱՐԱՆ



842-2009

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Քեմը ներկայացնում է ընդունարան:

Խորքի պատի մէջստից մի դուռ՝ դէպի նախասենեակը. աչ պատից մի դուռ՝ դէպի բնակարանի միւս մասերը, իսկ ձախ պատի վրայ՝ երկու լուսամուտ:

Կանաւորութիւնը կիս սերտապական եւ կիսաարեւելեան: Խորքի պատի ձախ կողմը եւ ձախ պատի երկու լուսամուտների միջեւ մի-մի քալս՝ ծածկուած գորգերով եւ բարձերով: Խորքի պատի աջ կողմը մի գրադարան՝ լիք գեղեցկակազմ գրքերով: Աջ պատի կողմը, նախաբեմին մօտ, մի բազմոց եւ երկու բիկնաթոռ: Դրանց առաջը՝ սալոնի փոքրիկ սեղան: Սենեակի զանազան մասերում փափուկ արքունիք: Բազմոցը, բիկնաթոռները եւ արքունիքը կտակ պատեանների մէջ են, ինչպէս լինում է, սովորաբար, ամառ ժամանակ:

Դռների եւ լուսամուտների վրայ վարագոյրներ:

Պատերի վրայ կախուած են Բաժժիի, Խրիմեան Հայրիկի, Ղ. Ալի-Շանի եւ Վարդան Մամիկոնեանի նկարները:

ՏԵՍԻԼ 1.

ԱՐՏԱԿ ԵՒ ԱՇԽԷՆ

Աւելցնը նստած է բազմոցի վրայ, իսկ Արտակը՝ բազկաթոռի վրայ, եւ ետք դէպի հանդիսականները:

ԱՐՏԱԿ.— Սակայն Վահանն ուշացաւ: Կարծում եմ, մինչեւ անգամ, որ սպասելու աւելորդ է: Յանձնեցէք նրան այս գիրքերը (Հանում ե պայուսակիւ երեք գիրք եւ սալիս Աշխէնին) եւ ասացէք, որ անցնի ինձ մօտ:

ԱՇԽԷՆ.— Դուք էլի գրքեր էք բերել:

ԱՐՏԱԿ.— Այո՛, ի՞նչ կայ որ:

ԱՇԽԷՆ.— Այն՝ որ Վահանն խաղառ մտահան է աւել իր վերաքննութիւնները: Մինչեւ սեպտեմբեր հազիւ ամիս եւ կէս է մնացել, իսկ նա գիշեր-ցերեկ ընթերցանութեամբ է զբաղուած:

ԱՐՏԱԿ.— Վահանն աշնքան ընդունակ տղայ է, որ մի ամիսն էլ բաւական է, որպէսզի վերաքննութիւններէն պատրաստ լինի: Բայց եւ աշնպէս, հետը կը խօսեմ այս մասին:

ԱՇԽԷՆ.— Խօսողին լսող է հարկաւոր: Անցեալ օրը Աշոտն էլ գալիս աւետարան կարդաց գլխին, բայց...

ԱՐՏԱԿ.— Ձէ, Վահանն ինձ կը լսի: Ի դէպ՝ Աշոտն այսօր ձեզ մօտ չի՞ լինելու:

ԱՇԽԷՆ.— Ձգիտեմ: Ինչո՞ւ էք հարցնում:

ԱՐՏԱԿ.— Մայրիկս քիւֆթա է պատրաստել եւ պատուիրել է, որ առանց Աշոտի տուն չգառնամ երեկոյեան:

ԱՇԽԷՆ.— Եթէ գայ, կ'ասեմ: Բայց վերջին օրերս, չգիտեմ ինչո՞ւ, նա խոյս է տալիս մեր տնից:

ԱՐՏԱԿ.— Պատճառն այն է, որ, նրա ասելով, ձեք հայրիկն է զրդում Սաֆարովին, որ գործադուլաւորներին ոչ մի դիմում չանի:

ԱՇԽԷՆ (Բորթոխաւ).— Ո՛չ, իմ հայրիկն ընդունակ չէ այդ բանին:

ԱՐՏԱԿ.— Ճիշդն ասած, իմ հաւատս էլ չի գալիս: Բայց ամէնքն էլ պնդում են, թէ Սաֆարովը նրա խորհրդով է շարժւում: Դուք պէտք է գիտէիք այս առաւօտ Աշոտի վրդովմունքը, երբ նա տեսաւ ձեք հայրիկին Սաֆարովի զրասենեակից ելնելիս: (Ոսկի եղնելով) Դէ՛, ես գնացի:

Չանգահարութիւն

ԱՇԽԷՆ.— Սպասեցէք: Գուցէ Վահանն է: (Մտնում է նախասենեակի. Նախասենեակում՝ կշատբանով): Լա՛ւ ես յարգում ժամադրութիւնդ:

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՐԱՆՔ ԵՒ ՎԱՀԱՆ

ՎԱՀԱՆ (Հեւայով).— Ներեցէք, ընկ. Արտակ: Մոռացել էին լուր տալ Գարաշիլիին եւ Բուդնեւին այսօր—

ուան ժողովի մասին: Ստիպուած էի ինքս հանդիպել նրանց. դրա համար ուշացայ:

ԱՐՏԱԿ.— Այո՛, սիրելիս, բայց իմ տրամադրուած թեան տակ այնքան քիչ ժամանակ է մնում, որ աւելի լաւ է մի ուրիշ օրուան ձգենք այս ժողովը:

ՎԱՀԱՆ (Վճռական).— Անկարելի է, ընկ. Արտակ: Թէկուզ մի բուլետով էլ լինի՝ պիտի գաք: Հաղիւ եմ ընկերներին իրար բերել: Մի քանի հոգի բնաւ չէին ուզում գալ այսօրուան ժողովին: Բայց երբ իմացան, որ դուք Չուրիցերիայից անձամբ ծանօթ էք Լենինին՝ շատ հետաքրքրուեցին:

ԱՐՏԱԿ.— Որ այդպէս է՝ շտապինք: Հա՛, չմոռանամ ասել, որ բերել եմ քեզ համար Մարքսի «Կապիտալ» եւ վարձու աշխատանք՝ ը, Էնգելսի «Ընտանիքի, պետութեան եւ մասնաւոր սեփականութեան ծագումը» եւ Լասալի «Ի՞նչ է սահմանադրութիւնը»:

ՎԱՀԱՆ (Յափշտակաբար).— Ո՞ւր են:

ԱՇԽԷՆ.— Մօտս են: Երբ վերադառնաս՝ կը տամ քեզ:

ԱՐՏԱԿ.— Դէ՛, գնանք: Ընկ. Աշխէն, ցտեսութիւն:

ԱՇԽԷՆ.— Ցտեսութիւն:

Երեկով միասին դէպի նախասենեակ: Այս միջոցին, բացառիկ շարժում է դրսի դրան մէջ:

ՄԱԳԹԱՂ (Նախասենեակում).— Բարեւ, Պ. Արտակ: Ի՞նչ է, ես գալիս եմ, դուք գնո՞ւմ էք:

ՎԱՀԱՆ (Նախասենեակում).— Մայրիկ, խնդրում եմ, մեզ մի զբաղեցնի: Մի վայրկեան խօս ժամանակ չունենք:

Տ Ե Ս Ի Լ 3.

ԱՇԽԷՆ ԵՒ ՄԱԳԹԱՂ

ՄԱԳԹԱՂ (Գլխարկով եւ մի երկու կապոց ձեռքին).— Հրդեհ է պատահել, ի՞նչ է: Ո՞ւր էին այդպէս շտապում: ԱՇԽԷՆ.— Վահանը ժողով ունի:

ՄԱԳԹԱՂ.— Հիմա էլ դա է խելքը ժողովների տուեղէ
Հայրիկը տանը չէ՞: (Գլխարկը դնում և սեղանին և դիմելով
հովանարում):

ԱՇԽԷՆ.— Ոչ: Իսկ դո՞ւ ուր էիր:

ՄԱԳԹԱՂ.— Գնացի Անահիտի մօտ, մտածելով, թէ
կարող է պատահել նոր լուր ունենայ Սիրաքից: Խեղճ
աղջկայ աչքը ջուր կտրեց սպասելով:

ԱՇԽԷՆ (Նայելով քելի ժամացոյցին).— Դեռ մինչեւ
Ռուսաստանի գնացքը քառորդ ժամ կայ: Ով գիտէ, գու՞
ցէ . . .

ՄԱԳԹԱՂ.— Բանի՛ր քանի՛ աղալիսի գնացքներ եւ
կան ու վերադարձան . . .

Տ Ե Ս Ի Լ 4.

ՆՐԱՆԵՑ ԵՒ ՆԱՀԱՊԵՏԸ

ՄԱԳԹԱՂ (Յանկարծ տեսնելով Նահապետին).— Այս
ե՞րբ եկար:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց հիմա:

ՄԱԳԹԱՂ.— Նոր բան իմացա՞ր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ոչ: Հիմա պատահեցի Պ. Վարդանին և
Աշոտին: Նրանք էլ նոր լուր չունէին: Ի դէպ, Աշխէն ջան,
այս գլխարկը եւ իրերը վերցրու սեղանից: Նրանք հիմա
ուր որ է կը գան:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ կայ որ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ասացին, որ ուղղում են մեղ մօտ ան-
ցրենել: Կարծում եմ, որ գործադուլի մասին են ուղղում
խօսել: Սափարովը, ինչպէս երեւում է, բաւական նեղն է
լինել դրանց, իր յամառութեամբ: Բիթերը շատ կախած
էին երևում:

ԱՇԽԷՆ.— Հայրիկ, քիչ առաջ երեք պարոններ քեզ
էին հարցնում: Ասացին, որ շտապ գործ ունեն հետդ եւ
ժամը 6-ի մօտերը նորից կը գան:

ՆԱՀԱՊԵՏ.— Ովքե՞ր էին:

ԱՇԽԷՆ.— Չգիտեմ: Ահա՛ իրենց այցետուները:
ՆԱՀԱՊԵՏ (Կարդում և ուսական տառապարտութեամբ).
— Աղապով, Բազրամով, ինժիներ Ագաբաբով: Ի՞նչ գործ
ունեն սրանք ինձ հետ . . .

Զանգահարութիւն

Աւստին գլխարկն ու իրերն առնելով՝ մտնում է նախասենեակ:

Տ Ե Ս Ի Լ 5.

ՄԱԳԹԱՂ, ՆԱՀԱՊԵՏ, ՎԱՐԴԱՆ, ԵՒ ԱՇՈՏ

ՎԱՐԴԱՆ.— Բարեւ, տիկին Նահապետեան:

ԱՇՈՏ.— Բարեւ ձեզ (Հարկուրում և Մագրապի ձեռ-
քը):

ՄԱԳԹԱՂ.— Բարեւ, բարեւ: Նստեցէք խնդրեմ: Աշոտ,
քանի օրէ չես երեւում: Ի՞նչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղեղակով).— Մե՛ծ գործերի վրայ է . . .

ԱՇՈՏ (Չարտքեամբ).— Ի՞նչ օր: (Մագրապին) Ու-
րեմն այսօր էլ լուր չկայ Սիրաքից:

ՎԱՐԴԱՆ.— Չարմանալի է թէ ինչո՞ւ այսքան ու-
շացաւ: Երէկ մենք մինչեւ անգամ ենթադրում էինք, թէ
այս գիշեր մի լաւ քէֆ ենք անելու նրա հետ միասին:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդպէս է երիտասարդների ճակատա-
գիրը: Նրանք ենթադրում են, իսկ ուրիշներ կարգա-
դրում:

ԱՇՈՏ.— Վնաս չունի: Հեռու չէ այն օրը, երբ մենք,
երիտասարդներս, ոչ միայն ենթադրող, այլ նաեւ կար-
գադրող պիտի լինենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Անշու՛շտ, անշուշտ . . . Յաւը այն է
միայն, որ դրանից մի առանձին բարիք չի ծնւելու:

ԱՇՈՏ.— Նայած թէ ում համար:

ՆԱՀԱՊԵՏ.— Ամենից առաջ՝ մեր ժողովրդի համար:

ԱՇՈՏ.— Նայած թէ ժողովուրդ ասելով, ով ի՞նչ է
հասկանում:

ՆԱՀԱՊԵՏ.— Մինչեւ այժմ գոնէ, հայ ժողովուրդ

ասելով, ամէն ոք հասկանում էր այն մարդկանց, որոնք հայ են ծնունդով եւ իրենց հայ են համարում:

ԱՇՈՏ.— Հիմա ժամանակները մի քիչ փոխուել են: Աժմուան հասկացողութեամբ, հայ աշխատաւորներն են միայն կազմում հայ ժողովուրդը:

ՆԱՀԱՊԵՏ (Հեզնաւնով).— Հայ առեւտրականը, հայ գործարանատէրը, ընդհանրապէս հայ ունեւորը հայութիւնն էր դուրս են, անշուշտ:

ԱՇՈՏ.— Այո՛, մենք նրանց հայ ժողովուրդ չենք համարում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչքա՞ն երջանիկ կը լինէին այն մարդիկ, եթէ ուրիշներն էլ երբեմն նրանց դուրս նկատէին հայ ժողովրդի ցանկերից:

ՎԱՐԴԱՆ.— Ուրիշներն ովքեր են:

ՆԱՀԱՊԵՏ.— Ա՛յ, օրինակ, թուրքերն ու քրդերը, որոնք թալանում եւ ջարդում են սահմանի այն կողմի հայերին: Ա՛յ օրինակ, հարեւան թաթարները, որոնք, մի քանի տարի առաջ, ուղղում էին ընաջնջի այստեղի հայութիւնը: Ա՛յ, օրինակ, ուսու իշխանաւորները, որոնք ուղղում են քայքայել, խեղճացնել հայութիւնը թէ՛ այստեղ եւ թէ՛ այնտեղ: Այս բոլոր ուրիշները, իրենց հարուածները հայ ժողովրդի դէմ ուղղելիս, որքան գիտեմ, ունեւոր ու չունեւոր չեն հարցնում, կամ, եթէ հարցնում են, միմիայն նրա համար, որ առաջին հերթին հայ ունեւորները ոչնչանան: Սա կարծեմ շատ ձեռնտու է ձեզ համար, այնպէս չէ՞, «ընկեր» Աշոտ, հա՛, հա՛, հա՛ . . .

ՄԱԳԹԱՂ (Նահապետիկ՝ կոստանով).— Ինչպէս եւրեւում է, դու այսօր ձախ ոտքի վրայ ես վեր կացել: Առաւօտից հետո խօսել չի լինում: Գոնէ հիւրերի հետ . . .

ՆԱՀԱՊԵՏ (Զուարթ).— Դու էլ բա՛ն ասացիր: Պ. վարդանն ու Աշոտը ի՞նչ հիւրեր են մեզ համար: Նրանք տանու մարդիկ են: Բայց (Ծիծաղով) եթէ դու սրանց հիւրերի տեղ ես դնում՝ գոնէ մի երկու չի՛ գարեջուր բեր դիր առաջները:

ՄԱԳԹԱՂ (Ոսֆի եղնելով).— Ես էլ, խկապէս, ականջա

տուել եմ ձեր վէճերին, ու . . . (Շատով եղնուլ հ աջ դրուով):

ՎԱՐԴԱՆ.— Սւելորդ է, տիկին, նեղութիւն մի կը բէք:

ՆԱՀԱՊԵՏ.— Վնաս չունի, թո՛ղ մի բան բերի խմենք: Քէֆս էլ այսօր մի քիչ տեղը չէ:

ՎԱՐԴԱՆ.— Պատճառն ի՞նչ է, Պ. Նահապետեան:

ՆԱՀԱՊԵՏ.— Պատճառը դուք էք:

ՎԱՐԴԱՆ.— Ե՛ս:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, դուք և ձեր ընկերները:

ՎԱՐԴԱՆ.— Մենք ի՞նչ ենք արել, որ:

ՆԱՀԱՊԵՏ.— Դուք ձեր կազմակերպած գործադուլով Սահարովի գործարանը փակման վտանգի տակ էք դրել:

ԱՇՈՏ (Գրգռուած).— Շատ էլ լաւ ենք արել: Եւ եթէ Աղաբաբովը, Ակոփովը եւ Բաղրամովը մեր ներկայացրած պահանջները չընդունեն՝ նրանց գործարաններն էլ պիտի փակուեն:

ՆԱՀԱՊԵՏ.— Կեցցե՛ս . . . Իսկ դու մտածե՛լ ես այն աշխատաւորների մասին, որոնց դու հայ ժողովուրդ ես համարում, և որոնք փողոց են նետում:

ԱՇՈՏ.— Հոգ մի՛ արէք, նրանք անգործ չեն մնայ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վ պէտք է նրանց գործ տայ: Սա՞ մա՞րցւր թէ Արաշիճէն . . . Իսկի հետաքրքրուել՝ ես, թէ դրանց գործարաններում աշխատող հարիւրաւոր բանուորներին քանիսն են հայ: (Յուզուած՝ վարդանին) Ես կարող եմ դեռ հասկանալ, Պ. վարդան, որ Աշոտի պէս ջահելները անխոհեմ քայլեր են կատարում: Բայց դուք և ձեր միւս տարեց ընկերները ինչպէ՞ս է որ չէք կշռադատում ձեր արածի հետեւանքները:

ՎԱՐԴԱՆ.— Զուր էք կարծում, Պ. Նահապետեան, թէ մենք գործադուլի մի քանի անպատեհութիւնները չենք գիտակցում: Բայց դուք էլ այժմ թող էք անում այն անխիղճ չահագործութիւնը, որին ենթարկում են հայ կապիտալիստներից շատերն իրենց բանուորներին՝ իմանալով

հանդերձ, որ վերջիններս ջախջախիչ մեծամասնութեամբ հայերից են կազմուած:

ՆԱՀԱՊԵՏ.— Հայ կապիտալիստը կապիտալիստ է, ինչպէս եւ միւսները, և նրանց պէս պիտի շահագործի իր բանուորներին՝ լինին նրանք հայ թէ ոչ-հայ: Բայց այս հաւատար պայմաններում իսկ, չէ՞ որ հայ ունեւորը մեզ համար գերադասելի է քան օտարը:

ԱՇՈՏ.— Ինչո՞վ է գերադասելի:

ՆԱՀԱՊԵՏ (Գրգռում).— Եթէ ուրիշ բան էլ չլինի՝ հէնց թէկուզ նրանով, որ տաճկահայկական յեղափոխութեան եւ հայ-թաթարական կռիւների ժամանակ, դուք հայ ունեւորների օգնութեանն էիք դիմում, ղէնք գնելու համար:

ԱՇՈՏ.— Դեռ ոչ մի հայ հարուստ մեր կուսակցութեանը դրամ չի տուել, առանց դաշոյնի ծայրը զգալու:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, բայց ինչո՞ւ դուք ձեր դաշոյնի ծայրը օտարազգի հարուստներին էլ չէիք ցոյց տալիս:

ՎԱՐԴԱՆ.— Անշուշտ, մենք որոշ տարբերութիւն դրել ենք եւ դնում ենք հայ եւ օտար հարուստների միջեւ՝ հէնց թէկուզ այն պատճառով, որ առաջինները հայ անուն են կրում եւ, հետեւեալ, պէտք է որոշ պարտականութիւններ ստանձնեն հայութեան հանդէպ:

ՆԱՀԱՊԵՏ (Դառնալով Աշոտին).— Այդպէս է չէ՞, սիրելի Աշոտ: Երբ որ այդպէս է, երբ որ դուք հայ հարուստին ազգային որոշ պարտականութիւնների ենթակայ էք նկատում, իսկ օտար հարուստին ոչ՝ ապա ուրեմն, դուք անթոյլատրելի պէտք է համարէիք, որ հայի գործարանը փակուի. մինչդեռ օտարինը բանում է: Եւ յետոյ արդար եղէք խոստովանելու, պարոններ՛, որ հայ հարուստը միշտ բռնութեան տակ չէ ազգային պարտականութիւններ կատարել: (Յէտ խաշելով յաւանուսի վարագոյրը) Նայեցէ՛ք, այս հոյակապ դպրոցին, որ հարիւր հազարներ է նստել: Մի՞թէ դաշոյնի զօրութեամբ է ստացուել այդ հսկայական գումարը դպրոցի բարերարից: Մեր եկեղեցիներից, վանքերից, դպրոցներից, բարեգործական եւ կուլտուրական հաս-

տատութիւններից շատերը ի՞նչ վիճակի մէջ կը լինէին, և առհասարակ գոյութիւն կ'ունենայի՞ն, եթէ հայ ունեւորը յօժարկամ նուիրատութիւնները չլինէին... (Շուրջը նայելով) Բայց մեր դարեջուրն ի՞նչ եղաւ: Կոկորդս չորացաւ, իսկ սրանք Նոյի ագռաւն են դարձել: (Շարժում ե դիպի աջ դուռը):

ՎԱՐԴԱՆ.— Աւելորդ է, Պ. Նահապետեան: Միւսնոյն է, երկար նստել չենք կարող:

ՆԱՀԱՊԵՏ.— Զէ, սպասեցէք մի տեսնեմ: (Ելնում ե աջ դուռով):

ԱՇՈՏ.— Կատարեալ բուրժուական իդէօլոգ: Կարծում եմ, հիմա դու էլ կասես որ միանգամայն աւելորդ է ունէ յոյս դնել Պ. Նահապետեանի միջնորդութեան վրայ: Այս առաւօտ, եթէ տեսնէիր նրա մթափնած դէմքը, երբ դուրս եկաւ Սաֆարովի գրասենեակից, դու էլ չէիր պընդել, որ դիմենք նրա միջնորդութեանը: Ես այլեւ կասկած չունիմ որ նա է խորհուրդ տուել Սաֆարովին, որ գործարանի փակման սպառնալիքը յայտարարի:

ՎԱՐԴԱՆ.— Զիշդն ասած, ես այդքան վատ կարծիքի չեմ Պ. Նահապետեանի մասին. բայց առ այժմ ես էլ անօգուտ եմ նկատում խօսել նրա հետ գործադուլի մասին:

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՐԱՆԻ, ՄԱԳԹԱՂԸ ԵՒ ՆԱՀԱՊԵՏԸ

ՆԱՀԱՊԵՏ (Դնելով սեղանի վրայ մի սխռեղ՝ վրան գաւերի շիշ, գաւաթներ, պտուղ, պնակներ եւ պաստաւաղներ).— Մինչեւ ձեռքս չհասցրի՝ դուրս չեկաւ:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ անեմ. տանը սառնարան չկայ, որ ուզածդ վայրկեանին պաղ դարեջուր հանեմ: Մինչեւ խանութից բերել տուի...

ՆԱՀԱՊԵՏ.— (Լեցնելով գաւաթները).— Լա՛ւ, լա՛ւ, մի՛ նեղանայ: Գիտենք, որ ժրջան տանտիկին ես: Դէ, վերցրէք դաւաթներդ: Կենդանութիւն, ողջ լինէ՛ք, ուրախ (Զրիխաջնում եւ իսկում) Կեցցես, Մագթաղ, մեր սպա-

սեղը արժեց:

ՎԱՐԴԱՆ.— Իրաւ որ շատ պաղ է:

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանին).— Հիմա մի քիչ էլ ձեր միւս գործերից պատմեցէք: Ի՞նչ լուր կայ Հօֆից եւ Վէստէնենգից:

ՎԱՐԴԱՆ.— Նրանք արդէն ճանապարհուել են իրենց պաշտօնավայրերը:

ՆԱՀԱՊԵՏ (Տամս կեղեկիւ).— Գիտէք ի՞նչ: Երկիւղ եմ կրում թէ այդ նոյնից արմատ թուրքերը դրանց էլ կաշտեն եւ իրենց ձեռքին գործիք դարձնեն:

ՎԱՐԴԱՆ.— Այդ մասին անհոգ եղէք: Պոլսի մեր ընկերները մօտիկից հսկում են նրանց քայլերին:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ ձեր ընկերները հսկում են նաեւ որ պահպանուի բարենորոգումների ծրագրի առթիւ տեղծուած ազգային համերաշխութիւնը:

ՎԱՐԴԱՆ.— Ինչո՞ւ համար էք հարցնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Լսեցի, թէ ձերոնք աշխատում են, որ ընդհանուր կուսակալութիւնների մէջ բացուած բոլոր գլխաւոր պաշտօնները տրուին ձեր ընկերներին: Եթէ այս տեղեկութիւնը ճիշդ է, կը նշանակէ, որ այս գործի շուրջը գոյացած ազգային համերաշխութիւնը վտանգի տակ է:

ԱՇՈՏ.— Բայց չեմ հասկանում, թէ ի՞նչ ազգային համերաշխութեան մասին է խօսքը:

ՆԱՀԱՊԵՏ (Ձայնը քարծրացնելով).— Այն համերաշխութեան, սիրելի՛ Աշոտ, որին պէտք է ձգտի ամէն հայ մարդ՝ ամբողջ ազգին վերաբերեալ գործերում:

ՄԱԳԹԱՂ.— Լա՛ւ, դուք էլ մի քիչ ուրիշ բաների մասին խօսեցէք: Շարունակ նոյն վէճերն եմ լսում ձեզանից: Աշոտ, դու պտղին չմօտեցար: Պ. Վարդան, դուք էլ փորձեցէք այս տանձը. չաքարի պէս քաղցր է:

ԱՇՈՏ (Վերցնելով մի կտոր տան).— Շնորհակալ եմ: Դէ, ընկեր Վարդան:

ՎԱՐԴԱՆ (Ոսֆի կնկելով).— Ես պատրաստ եմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Վա՛հ, ի՞նչ էք շտապում: Սպասեցէք, գոնէ այս շիւր վերջացնենք:

ՎԱՐԴԱՆ.— Ձէ, Պ. Նահապետեան, խիտ շտապողական մի գործ ունենք:

ՆԱՀԱՊԵՏ (Ոսֆի կնկելով).— Մեղքը ձեր շինքը: Ես մենակ կը կոնծեմ:

ՎԱՐԴԱՆ.— Դէ, ցտեսութիւն:

ՆԱՀԱՊԵՏ.— Ցտեսութիւն (Ողկցում եւ մեկնողներին նախասենեակ եւ, վերադառնալով իր սեղը, լեցնում զաւարը):

ՄԱԳԹԱՂ (Նահապետին).— Այ մարդ, ի՞նչ ես դու էլ ամէն անգամ կոխ սարքում այս երիտասարդներին հետ:

ՆԱՀԱՊԵՏ (Ընկելով զարեւոյթ).— Ես կոխ: Ինձանից խաղաղասէր մարդ որտե՞ղ կարող ես գտնել:

ՄԱԳԹԱՂ.— Խաղաղասէրը որ դու ես, հապա կըրուեսէ՞րն ուլ է:

ՆԱՀԱՊԵՏ.— Կուտասէրն նա է, սիրելիս, որ մարդկանց իրար է դցում, նրանց մէջ անմիաբանութիւն եւ հակառակութիւն սերմանում: Ես աշխատում եմ հայերի մէջ իրարհակացողութիւն եւ գործակցութիւն հաստատել: Հասկացա՞ր:

ՄԱԳԹԱՂ.— Բայց դրա համար ի՞նչ կարիք կայ ջղայնանալու եւ բորբոքուելու:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչպէ՞ս չջղայնանամ, երբ ամէն մէկը յամառութեամբ իր էջն է քշում, առանց միւսի կողմը նայելու: Այսօր էլ այդ ապուշ Սաֆարովի հետ ի՞նչ կոխ ունեցայ: Եթէ տարիներով ընկեր եղած չլինէինք՝ բարեւ տալն էլ շատ կը նկատէի նրա համար:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ.— Որոշել է գործարանը փակել:

ՄԱԳԹԱՂ.— Յետո՞յ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես, բնականաբար, խորհուրդ տուի համաձայնութեան գալ բանուորների հետ, մանաւանդ որ նրանց պահանջների մեծ մասը արդարացի է: Իսկ նա (հեղձակաւ) «սկզբունքային խնդիր» է դարձրել՝ ոչ մի զիջում չանել, որովհետեւ բանուորները գործադուլի են զիմել: Սաֆարով եւ սկզբունքը էշի գլուխ:

ՄԱԳԹԱՂ.— Բայց Աշոտի հե՞տ ինչ ունես:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն ունեմ, որ նա անհամուժիւններ չատ է անում այս գործում: Այսօր, երբ Սափարովի գրասենեակի լուսամուտից լսում էի նրա գրգռիչ խօսքերը փողոցում հաւաքուած գործադուլաւորների հետ՝ քիչ էր մնացել դուրս գալի եւ ականջներիցը մի պինդ քաշէի: ՄԱԳԹԱՂ.— Էհ, տաքարիւն երիտասարդ է էլի: Սիրաքն էլ այդպէս չէ՞ր:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդպէս էր որ կերաւ է՛: Հազար անգամ ասացի՝ ա՛յ տղայ, խոհեմ եղիւր, ա՛յ տղայ, փորձանք կը բերես մեր գլխին... Դեռ լաւ է որ կէս ճանապարհին բռնուեց: Եթէ ոտտիկանապետի դէմ եղած մահափորձի ժամանակ արդէն բանտարկուած չլինէր՝ ոտքով-գլխով կորած էր...

Զանգահարութիւն

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆԻՔ ԵՒ ԱՇԽԱՏ

ԱՇԽԱՏ.— Հայրիկ, այսօրուան երեք պարոններն են:

ՆԱՀԱՊԵՏ.— Ներս հրաւիրիւր:

ՄԱԳԹԱՂ.— Բիչ սպասի՛ր, այս բաները դուրս տանք: (Շտապով վերցնում է ակոսեղն ու պնակները եւ շարժում դեպի այդ դուռը) Նահապետ, այդ չիչն ու գաւաթներն էլ դու բեր: (Նահապետի հետ միասին ելնում է այդ դուռով):

Տ Ե Ս Ի Լ 8.

ԱՇԽԱՏ, Ի.Ժ. ԱՂԱՅԱՐԱՎ,
ԱԿԱՓՈՎ, ԵՒ ԲԱՂՐԱՄՈՎ

ԱՇԽԱՏ (Միւսներից առաջ մտնելով).— Հայրիկը հիմա կը գալ: Նստեցէք, խնդրեմ:

ԱՂԱՅԱՐԱՎ.— Շնորհակալութիւն, օրիորդ:

Աշխատե՛ք ելնում է այդ դուռով, իսկ միւսները տեղաւորուում են բազմաթիւների վրայ:

ԱԿՈՓՈՎ (Կանաց Աղաքաբովին).— Կարծում է՞ք բան ա դուրս գալու սրանի՞ց:

ԲԱՂՐԱՄՈՎ (Կանաց).— Ճիշդն ասած, ես էնքան եմ ըզզւել դրանց պահանջներից, որ ուզում եմ առանց այլևայլի լիկվիդացիա անեմ գործերս և գնամ զապրանիցա (ալտասահման):

ԱՂԱՅԱՐԱՎ (Կանաց).— Զապրանիցա գնալը հեշտ է, Բուդդան Սերգէյիչ, հունարն այն է, որ Սափարովին չուրախացնենք: Աչքներդ լա՛յն բաց արէ՛ք: Նա մեր գործարանների կանգնելուն է սպասում, որպէսզի ինքը բաւարարութիւն տայ իր բանուորներին և ամէնքիս հէ՛րն անի՛ր:

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՐԱՆԻՔ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնելով այդ դռնից).— Ներեցէ՛ք, պարոններ, որ ձեզ փոքր ինչ սպասել տուի: Բարե՛ւ, բարե՛ւ, այս ի՞նչ պատիւ է, որ դուք ինձ անում էք:


ԱՂԱՅԱՐԱՎ.— Ընդհակառակը, մեզ համար է մեծ պատիւ, որ ձեզ պէս պատուական մարդու յարկի տակ ենք գտնւում:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Առաջները մէկ-մէկ հանդիպում էինք կլուբում: Բայց քանի տարի ա, էնտեղ էլ չէք երեւում:

ԱԿՈՓՈՎ.— Երեւի ձեր որդուն պատահած դժբախտութիւնն ա պատճառը: Ո՛ւր ա հիմի, լաւ խաբարներ ունէ՞ք:

ՆԱՀԱՊԵՏ.— Երեք ու կէս տարի բանտերում քաշաբլելուց յետոյ՝ մի ամիս առաջ արձակեցին: Յոյս ունենք, որ այս քանի օրս կը վերադառնայ:

ԱԿՈՓՈՎ.— Դէ լաւ ա: Աստուած նոր փորձանքից հետո պահի:



ԱՂԱՐԱՐՈՎ.— Պարոն Նահապետեան, եկել ենք ձեզ մօտ մի խնդրով:

ՆԱՀԱՊԵՏ.— Աչքիս, յօնքիս, վրայ: Հրամայեցէք:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Երէկ աշտարակի մի գրութիւն ստացանք մեր բանուորներէր (Մեկնում է քուրքը Նահապետին, որ սկսում է աչի անցընել): Նոյնպիսի գրութիւններ ստացել են նաեւ Վարդապար Առաքելովիչը եւ Բուդդան Սերգէյիչը իրենց բանուորներէր:

ՆԱՀԱՊԵՏ (Շարունակ քղրին նայելով).— Յետո՞յ:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Ինչպէս տեսնում էք, վաղը ժամը 6-ին լրանում է պայմանաժամը, որից յետոյ բանուորները գործադուլ պիտի յայտարարեն, եթէ չընդունենք իրենց պահանջները:

ՆԱՀԱՊԵՏ.— Բայց ես ձեզ չեմ հասկանում... Ես ի՞նչ կապ ունիմ ձեր բանուորների հետ:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Մեր բանուորների հետ կապ չունէք, ի հարկէ, սակայն գործադուլի սպառնալիքը նրանցից չէ գալիս, այլ ուրիշներից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ուրիշներն ովքեր են:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Հայ յեղափոխականների կոմիտէտը:

ԲԱՂՐԱՐՈՎ.— Էդ մասին կասկած չկայ: Մեզ ամէն բան յայտնի ա:

ՆԱՀԱՊԵՏ (Ժպտալով).— Դուք երեւի կարծում էք, թէ ես էլ եմ պատկանում յեղափոխականների կոմիտէտին:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Ի՞նչ էք ասում, Պ. Նահապետեան, ինչպէ՞ս կարելի է, որ ձեզ պէս պատուաւոր մարդը յեղափոխական լինի... Սակայն մենք գիտենք, որ դուք ծանօթ էք այդ կոմիտէտի անդամներին՝ եւ կարող էք նրանց վրայ ազդել:

ՆԱՀԱՊԵՏ.— Ուրեմն դուք ի՞նչ էք պահանջում ինձանից:

ԲԱՂՐԱՐՈՎ.— Մենք ոչինչ չենք պահանջում: Մենք խնդրում ենք միայն, որ դուք խօսք հասկացնէք էդ մարդկանց: Թող ձեռք քաշեն մեր բանուորներից եւ չխառ-

նուեն մեր գործերի մէջ:

ԱԿՈՓՈՎ.— Էս էլ ասեմ Պ. Նահապետեան, որ խառնակիչներին անուն-անուն ճանաչում ենք: Եթէ ուզենանք, բոլորին էլ ծակը կը դնենք: Բայց դէ հայ ենք եւ չենք ուզում մեր ազգակիցներին վատութիւն անել:

ԲԱՂՐԱՐՈՎ.— Ճշմարտն ասած, եթէ սրանք չլինեն (Մասնանշում է Ալոյիովին եւ Աղաքարովին) ես ազգակից-մաղաղից չեմ հարցնի: Ի՞նչ ազգակիցներ են դրանք, որ մեր ոտի տակը քանդում են: Ի՞նչ ա, մենք հայ չե՞նք:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Հէնց որ մի կարիք է լինում, խաղոյն մեր դռներն են ծեծում: Իսկ երբ կարիքը վերանում է, մեզ դարձնում են բուրժուա եւ քարկոծում:

ՆԱՀԱՊԵՏ (Աղաքարովին).— Իսկ երբ ձեր դռները ծեծում են, դուք տալի՞ս էք:

ԱԿՈՓՈՎ.— Էլ տալիս ի՞նչպէս ա լինում, ախպեր: Տէրտէր-վարդապետի՝ տալիս ենք: Զորահէքին-Ջատկին աւետիս են ման գալիս՝ չենք խնայում: Թատրոնի բիլէթ են բերում՝ առնում ենք: Սովորական աղքատներն էլ հա կան ու կան: Որ հաշուէք՝ տարեկան մի հազարի չափ հէնց էս ճանապարհով ա գնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Բայց այդ հազարը, որ դուք տալիս էք, ձեր կարողութեան ո՞ր մասն է կազմում:

ԲԱՂՐԱՐՈՎ (Վրդովում).— Դա ի՞նչ խօսք ա:

ԱԿՈՓՈՎ.— Ո՞ւմ ինչ գործն ա, թէ ես ի՞նչ կարողութիւն ունեմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Դա ձեր գործն է, ի հարկէ: Բայց երբ դուք տալուց էք խօսում եւ պահանջում, որ ձեր տուածը իբրեւ աղքատիքութիւն գնահատուի, դուք հաշուի առնո՞ւմ էք, թէ այդ մարդիկ, որոնց դէմ բորբոքուած խօսում էք, իրենք ի՞նչ են տալիս ազգի համար:

ԲԱՂՐԱՐՈՎ (Գրգռում).— Էս իմ ոտքերս են տալիս: Ի՞նչ ունեն որ ինչ տան:

ՆԱՀԱՊԵՏ.— Զէ՛, Բուդդան Սերգէյիչ, նրանք ձեր ոտքերը չեն տալիս, այլ իրենց կեանքն են տալիս ազգի համար, հասկանո՞ւմ էք, իրենց կեանքը:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Ո՞վ, քուհաներում թրեւ եկող էդ լակոտները:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, այդ «լակոտները» եւ իրենց ընկերները: Դուք նրանց «թրեւ գալն» էք տեսնում. իսկ քաշածները: Դիտէ՛ք, թէ այդ «լակոտներից» քանի՞ քանիսն են մաշուել բանտերում եւ աքսորութեան մէջ: Դիտէ՛ք որ հազարների են հասնում դրանց ընկերները, որոնք կախաղանի վրայ կամ կռիւներում զոհ բերին իրենց կեանքը տաճկահայ եղբայրների աղատութեան համար:

ԱԿՈՓՈՎ.— Թո՛ղ հանգիստ վեր ընկնէին իրենց տեղը եւ զոհ չերթային: Ո՞վ ա մեղաւոր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչպէ՞ս հանգիստ վեր ընկնէին, երբ թուրքն ու քրիւտը թալանում, ջարդում էին մեր եղբայրներին, առեւանգում հայ կանանց եւ սղծում մեր կրօնական սրբութիւնները: Դուք ուրախ կը լինէի՞ք, եթէ այդ երկտասարդները հանգիստ վեր ընկնէին իրենց տեղը, երբ Բորչալուի թուրքերը, սրանից մի քանի տարի առաջ, ուղում էին քաղաքը ներխուժել եւ ձեր ծուխը մարել: Այն ժամանակ դուք ուրիշ երգ էիք երգում, Վարդազար Առաքելովիչ, այնպէս չէ՞: Այն ժամանակ դուք աղաչում-պաղատում էիք, որ այդ «լակոտները» գան պաշտպանեն ձեր կեանքն ու գոյքը: Իսկ հիմա բանտով էք սպառնում նրանց: Սա արդարութիւնն է, սա մարդութիւնն է:

ԱԿՈՓՈՎ (Բաղրամովին).— Բանից դուրս ա գալիս, Բուդղան Սերգէյիչ, որ մեր մէջ ո՛չ արդարութիւն կայ, ո՛չ մարդութիւն: Պարզ ա, ուրեմն, որ ով ինչ ուզի, կարող ա անի մեզ հետ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՛չ, Վարդազար Առաքելովիչ, բանից այդ չէ դուրս գալիս:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Բա ի՞նչ:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն՛ որ դուք պէտք է հանէք ձեր սրտից ատելութիւնը եւ աշխատէք համաձայնութեան գալ այդ մարդկանց հետ: Մեր փրկութիւնը իրար հասկանալու մէջ է, Բուդղան Սերգէյիչ: Բայց ներեցէ՛ք ինձ: Խօսքի բռնութեցի եւ մոռացայ, որ հազարից մի անգամ պատուել

էք իմ տունը: Թոյլ տուէք գոնէ մի գաւաթ կոնեակով հիւրասիրել ձեզ: (Շարժում ե դեպի այ դուռը):

ԱՂԱԲԱՅՈՎ.— Կարիք չկայ, Պ. Նահապետեան: Նրանց էք մեր խօսքը վերջացնենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, ինչպէ՞ս կարելի է: Սա հայի տունն է, վերջապէս: (Ելնում ե այ դուռով):

ԲԱՂՐԱՄՈՎ (Կառնաց Աղաքարովին).— Յնդածի մէկն ա եղել քո Նահապետեանը:

ԱԿՈՓՈՎ.— Ի՞նչ ցնդած. ափ-աշկարայ նրանցից ա:

ԱՂԱԲԱՅՈՎ (Կառնաց).— Ձէ, սխալ էք: Նրանցից որ լինէր՝ քաղաքային ընտրութիւններին չէին սեւցնի: Որդու խաթեր համար է, որ յարգում են:

ԱԿՈՓՈՎ (Աղաքարովին).— Լաւ, սրանից ի՞նչ ես սպասում մեր գործի համար:

ԱՂԱԲԱՅՈՎ.— Եթէ մի բան կարելի լինի անել՝ էլի սրա միջոցով է լինելու: Թէ չէ Սաֆարովի աչքը լոյս:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Ախպէր, իմ խելքը սրանից բան չի կտրում:

Տ Ե Ս Ի Լ 10.

ՆՐԱՆԻ ՆԱՀԱՊԵՏԸ ԵՒ ԱՇԽԵՆԸ

Աշխեն կոնեակի շիւր, գաւաթներ եւ անուեղէնը սեղանի վրայ է դնում եւ ելնում այ դուռով:

ՆԱՀԱՊԵՏ (Լեցնելով գաւաթները).— Մի-մի հատ թրջենք կոկորդներու:

ԱՂԱԲԱՅՈՎ (Ծիծաղով).— Լաւ թրջեցէք ձեր կոկորդը, որպէսզի աշխարհի լափը նոր ուժով թափէք մեր գլխին:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, էլ վերջացաւ: Հաւատացէ՛ք, որ սիրտս շատ է վառում, երբ հայերի մէջ սէրն ու միահարմարութիւնը պակաս եմ տեսնում: Դէ, ձեր կենացը Բաբով էք եկել մեր տունը: Յոյս ունիմ, որ սա վերջին անգամը չի լինի (Խնում ե):

ԱՄԷՆԲԸ.— Ձեր կենացը (Խնում ե):

ԱԿՈՓՈՎ.— Դուք էլ մի անգամ մեզ յիշեցէ՛ք: Մեր

գնանքն էլ միշտ բաց են ձեր առաջ:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Ի հարկէ, ի հարկէ:

ԱՂԱԲԱՐՈՎ.— Հիմա մի քիչ էլ մեր գործի մասին խօսենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձեր գործը շատ պարզ է, պարոններ: Պէտք է համաձայնութեան դաք բանուորների հետ:

ԱՂԱԲԱՐՈՎ.— Ինչպէ՞ս:

ՆԱՀԱՊԵՏ.— Զիջումներ անելով:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Այսինքն հազուստներս թողնենք գործարանում և տկլոր դուրս գանք է՞լի:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, ինչո՞ւ:

ԱՂԱԲԱՐՈՎ.— Լաւ, կոնկրետ խօսելով՝ ի՞նչ ենք անում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ահա թէ ինչ: Ես այս գիշեր կը ծա-
նոթանամ այս թղթի մէջ գրուած պահանջներին: Վաղը
մինչև կէսօր կը տեսնուեմ մի երկու կարեւոր մարդկանց
հետ եւ կ'իմանամ, թէ բանուորները ինչ կ'ենթադրեն
և քոզ են զիջելու: Իսկ կէսօրին, ամէնքս միասին կը հաւաք-
ուենք Արտեմ Պետրովիչի գրասենեակը և կը խօսենք ինչ
հարկն է: Համաձայն է՞ք:

ԱՂԱԲԱՐՈՎ.— Համաձայն ենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Սակայն, եթէ դուք տրամադիր էք
յամառօրէն մերժելու բանուորների բոլոր պահանջները,
աւելի՛ լաւ է այս գլխից ասէք, որպէսզի ես դուր տեղը...

ԱՂԱԲԱՐՈՎ (Ոսֆի եղևորով).— Ձէ, մենք յամառ

ԱԿՈՓՈՎ (Ոսֆի եղևորով).— Բայց դուք էլ մեզ չպի-

տի շատ զօր անէք:

չենք:

ՆԱՀԱՊԵՏ (Խնդրով).— Ի՞նչ էք այդքան տընք-
տնքում, Վարդապար Առաքելովիչ: Աշխարհ գիտէ, որ ձեր
մէջքը շատ պինդ է:

ԲԱՂՐԱՄՈՎ (Ոսֆի եղևորով).— Մի իրեն էլ հարցրու
է՞:

ԱՂԱԲԱՐՈՎ.— Ուրեմն վաղը կէսօրին: Ցտեսութիւն,
Պ. Նահապետեան: Շատ եւ շատ շնորհակալ ենք ձեր նե-
ղութիւնների համար:

ԱԿՈՓՈՎ.— Մենք նմանապէս:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Դէ, ձեզ տեսութիւն:

ՆԱՀԱՊԵՏ.— Ցտեսութիւն, պարոններ: Հիմա որ
մեր տան ճանապարհն իմացաք՝ յուսով եմ, որ... (Ու-
սելով ուղեկցում է մնացածներին նախասենեակ):

Տ Ե Ս Ի Լ 11.

ՆԱՀԱՊԵՏ, ՄԱԳԹԱՂ, ԱՇԽԷՆ

Նահապետ մտնում է նախասենեակից, իսկ Մագրադը եւ Աշխէնը
աչ դռնից: Վերջինս դուրս է ցանում կոնեակն ու անուշեղէնը եւ նորից
վերադառնում:

ՄԱԳԹԱՂ (Նահապետին).— Ի՞նչ էին ուզում:

ՆԱՀԱՊԵՏ.— Նորից քո Աշոտը: Մի երկու հայ գոր-
ծարան է մնացել. մինչև փակել չտայ՝ չի հանգստանա-
լու:

ՄԱԳԹԱՂ.— Էլի՞ գործադուլի խնդիր է:

ՆԱՀԱՊԵՏ.— Հապա ի՞նչ:

ԱՇԽԷՆ.— Հայրիկ, ինչո՞ւ ես խառնում այս տե-
սակ գործերի: Առանց այն էլ քո դէմ շատ են խօսում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ են խօսում, աղջիկս:

ԱՇԽԷՆ.— Ասում են, թէ դու կապիտալիստներին
պաշտպանութիւն ես անում:

ՆԱՀԱՊԵՏ.— Թո՛ղ ասեն, աղջիկս, վնաս չունի:

ՄԱԳԹԱՂ.— Բայց քո օգուտն ի՞նչ է, որ քեզ հա-
մար քնում, ուրիշի համար երազ ես տեսնում: Դու ո՛վ
Ակոփովն ու Բաղրամովն ո՛վ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ամէն մարդ իր ըմբռնած ձևով է կա-
տարում իր ազգային պարտականութիւնները: Ես էլ իմ
ըմբռնումներն ունիմ նրանց մասին:

Տ Ե Ս Ի Լ 12.

ՆԱՀԱՊԵՏ, ՄԱԳԹԱՂ, ԱՇԽԷՆ

ՆԱՀԱՊԵՏ (Վահանին, որ մտնում է նախասենեակից մի
զրոյիկ ձեռքով).— Լոյսը քեզ տեսնողին: Այս ո՞ւր ես ամ-
բողջ օրը:

ՎԱՀԱՆ.— Մի փոքրիկ գործ ունէի, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ գործ:

ՎԱՀԱՆ (Այլի տակով նայելով Աշխենին).— Ընկերներս
բիւ հետ էի:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ ընկերներ:

ՄԱԳԹԱՂ. (Նահապետին).— Դու էլ ի՞նչ ես երախա-
յիս յետեւիցն ընկել: Ի՞ր դասընկերի հետ է եղել. ուրիշ
ո՞ւմ հետ պիտի լինէր:

ՆԱՀԱՊԵՏ (Մագրադին).— Այդպէս ասա, որ հասկա-
նամ է՛: Դու գիտես, որ ես հիմա ընկեր խօսքից մի քիչ
խրտնում եմ: (Վահանին) Այդ ի՞նչ գիրք է ձեռքիդ. տո՛ւր
մի տեսնեմ: (Առնելով գիրքը նայում է վրան): Ըհ՛ը, սա
էլ... (Կարդում է) Կարլ Կառլսկի «Սոցիալական յեղափո-
խութեան յաջորդ օրը»: (Մագրադին) Աչքդ լո՛յս: Շուտով
սա էլ Սիրաքի եւ Աշոտի պէս առաւօտից մինչեւ երեկոյ
մեր գլուխը պիտի տանի. Մարքան այս ասեց, Էնգելսն
այն ասեց, Միխայիլովսկին այսպէս, Լաւրովն այնպէս...
(Վահանին ցոյց տալով ձեռքի գիրքը) Ի՞նչ կապ ունի սա քո
վերաքննութիւնների հետ:

ՄԱԳԹԱՂ.— Իմ Վահանը վերաքննութիւններին
կտրուողը չի: Եւ քանի որ ազատ ժամանակ ունի, լաւ է
անում որ ընթերցանութեամբ է պարապում և ոչ թէ ու-
րիշների պէս փողոցները չափիփում:

ՆԱՀԱՊԵՏ.— Զի՞ կարելի արդեօք, որ իր ազատ ժա-
մանակը (Յոյց տալով ձեռքի գիրքը) փոխանակ այսպիսի ծըր-
տի-պըտի բաներով զբաղուելու՝ հայոց պատմութիւնն սո-
վորի, որպէսզի իր ազգի չարն ու բարին հասկանայ և ա-
պագային իր ժողովրդի համար օգտակարութիւն ունենայ:

ՄԱԳԹԱՂ.— Լաւ ես ասում, ի հարկէ, բայց ժամա-
նակները փոխուած են: Պէտք է մի քիչ էլ հիմակուան
երիտասարդների կամքով շարժուենք:

ԱՇԽԵՆ.— Հայրիկն առհասարակ չէ նկատում, որ
մենք այլեւս երէկուան երախաները չենք: (Փաղաճախով)
Ինձ հետ էլ, հայրիկ ջան, երբեմն այնպէս ես խօսում,
կարծես դեռ տասը տարեկան լինեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Շոյելով Աշխենի մագերը).— Ճիշդ ես աս-
ում, աղջիկս: Երբեք չեմ կարողանում վարժուել այն
մտքին, որ դու արդէն օրիորդ ես դառել: Ինձ միշտ այն-
պէս է թւում, թէ դու դեռ այն պատի՛րկ, պատի՛րկ բա-
լիկն ես, որին այնքա՛ն հաճոյքով գրկիս մէջ օրօրում
էի, որպէսզի քնացնեմ: Գիտե՞ս ինչ լացկան անպիտանն
էի: (Քնիջօրէն հաւքաւում է Աշխենին):

Զանգահարութիւն

ՄԱԳԹԱՂ.— Վահան ջան, մի տես... (Վահանը
մտնում է նախասենեակ):

ՎԱՀԱՆ (Նախասենեակում).— Վա՛յ, Սիրաքը...

ԱՇԽԵՆ (Նեւտելով նախասենեակ).— Սիրա՛քը, Սի-
րաք եղբայր... (Վազում է նախասենեակ):

Տ Ե Ս Ի Լ 13.

ՆՐԱՆՔ, ՍՐԱՆՔ ԵՒ ԱՆԱՀԻՏԸ

ՍՐԱՆՔ (Հանդիպելով Մագրադին նախասենեակի շեւ-
քին՝ ձգում է ճանապարհորդական քայուսկը եւ նեւտում Մագ-
րադի գիրքը).— Մայրիկ... (Դառնալով դեպի Նահապետը
եւ գրկախառնուելով հետը) Հայրիկ ջան, էլի նոյնն ես մնա-
ցել. իսկ գրում էիք թէ... (Գրելով Աշխենի մեջքը եւ հաւ-
քաւում է հետը) Մի սրա՛ն նայեցէք. կատարեալ օրիորդ
է դառել... (Դառնալով դեպի Վահանը) Իսկ մեր այս ճու-
տիկը. տեսէք ի՛նչ հասակ է առել: (Ջերմօրէն հաւքաւում
է): Մայրիկ, չես նեղանայ անշուշտ եթէ ասեմ, որ բան-
տի մէջ ամենից շատ այս անպիտանին էի կարօտում:
(Նորից հաւքաւում է Վահանին):

ՄԱԳԹԱՂ. (Այլերը արելով).— Ինչո՞ւ պիտի նեղա-
նամ, որդի: Տան պղտիկը միշտ ամենից քաղցրն է լի-
նում:

ՆԱՀԱՊԵՏ (Նայելով դեպի Անահիտի կողմը, որ կանգ-
նած է շուարած վիճակի մեջ).— Վա՛յ, Անահիտն էլ այս-
տեղ է եղել: (Մօտնում է եւ գրկում նրա մեջքը) Դո՛ւ որ-

տեղից լոյս ընկալի:

ԱՆԱՀԻՏ (Ծիփորուած).— Ես...

ՍԻՐԱՔ.— Պատահաբար կառքս սրանց փողոցով անցաւ, ասացի լաւ կը լինի Անահիտին էլ հետս առնեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղնակսն խնդրով).— Ա՛խ անպիտան կառապան, որ չգիտէ էլ, թէ կայաբանից այստեղ գալու համար, հարկ չկայ ահագին չըջան անել մինչեւ Անահիտենց փողոցը...

ՍԻՐԱՔ (Ծիծաղելով).— Զէ, հայրիկ, ճշմարիտն ասաց...

ՄԱԳԹԱՂ.— Լաւ ես արեւ որդի, որ Անահիտին էլ բերել ես: (Համբուրելով Անահիտին) Բո աչքդ էլ լոյս, աղջիկս: Բո հոգիդ էլ բերանդ ելաւ, այնքան սպասեցիր:

ԱՇԽԷՆ (Սիրայիկ).— Բայց խկապէս, ինչո՞ւ այդքան ուշացար:

ԱՆԱՀԻՏ.— Երեւի որոշել էր մի քիչ թանկ ծախել իրեն:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ թանկ ծախել, Անահի՛տ, վերջին երկու շաբաթը ուղղակի շունչ քաշելու ժամանակ չունէի:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ կար որ:

ՍԻՐԱՔ.— Մի քանի առկալս մնացած գործեր կային Ռոստովում եւ վրատիկավկազում...

ՆԱՀԱՊԵՏ.— Էլի «գործեր»։ Այս երեք տարուան մեր քաջածնեբը բաւական չեղա՞ն:

ՄԱԳԹԱՂ (Նահապետին).— Լա՛ւ, դու էլ մի՛ սկսիր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչպէս չսկսիմ, այ կնիկ, չես տեսնո՞ւմ, որ դեռ բանտի հոտը վրայից չթօթափած, էլի «գործերի» մասին է խօսում:

ՍԻՐԱՔ (Զուարթ).— Լաւ, հայրիկ, այսօր այլ եւս գործերից չեմ խօսի: Ուրիշ բաներից հարցնենք, է՛, Վահան ջան, ինչո՞ւ չես խօսում: Երկու տարի մնաց մինչեւ աւարտելդ, այնպէս չէ՞:

ՎԱՀԱՆ.— Այո՛, Սիրաք եղբայր: Բայց դա հետաքրքրական չէ: Աւելի լաւ է, մի քիչ քո բանտային կեանքից պատմիր:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ պատմեմ:

ՎԱՀԱՆ.— Ա՛յ, օրինակ, թէ քաղաքական բանտարկեալներն ինչպէ՞ս են թխթխկացնելով խօսում իրար հետ՝ սենեակից-սենեակ...

Դրսից աղմուկի ձայներ են լսում, որ մեր ստոկանում են եւ մեր մօրում: Ամէ՛նը շուտաւ իրար են նայում:

ԶԱՅՆԵՐ (Լուսամուտների սակ).— «Ե՛րբ ո՞ւր են վազում այդպէս»: «Վաղիր տեսնենք»: «Հորիզո՞ն»: «Մշա՛կ»: «Բարձրագոյն մանիֆեստ»: «Այ տղայ, մի թերթ տուր»...

ՆԱՀԱՊԵՏ (Մօտենալով շուստուտին).— Ի՞նչ է այս:

ՍԻՐԱՔ.— Վահան, մի հատ «Հորիզոն» բերե՛ս: (Մօտենում է միւս շուստուտին եւ հակում դեպի փողոց: Վահանը վազելով մտնում է նախասենեակ. խուշ աղմուկ փողոցում):

ՆԱՀԱՊԵՏ (Սիրայիկ).— Ի՞նչ պէտք է լինի սա:

ՍԻՐԱՔ.— Ոչինչ չի հասկացուում: Աղմուկը կարծես թէ քաղաքային հրապարակի կողմից է գալիս: (Աղմուկը սատկանում է):

ԶԱՅՆԵՐ (Լուսամուտների սակ).— «Բարձրագոյն մանիֆեստ գործողովի մասին»: «Հորիզո՞ն»: «Մշա՛կ»: «Զօ՞րաժողով»: «Պատերազմ»: «Պատերազմ է, պատերազմ»...

ՆԱՀԱՊԵՏ.— Պատերազմ: Ո՞վ, ո՞ւմ դէմ:

ՄԱԳԹԱՂ (Անհանգիստ).— Ի՞նչ եղաւ Վահանը:

ԱՇԽԷՆ (Խնդրով).— Կարծում ես պատերազմ տարան:

ՏԵՍԻԼ 14.

ՆՐԱՆՔ ԵՒ ՎԱՀԱՆԸ

ՎԱՀԱՆ (Շնչափաս ներս ընկնելով նախասենեակից՝ քեռքը ձեռքին).— Սոսկալի բան է: Ռուսաստանը, Ֆրանսան, Գերմանիան եւ Աւստրո-Հունգարիան պատերազմի մէջ են: Թշնամական գործողութիւններն արդէն սկսուած են ռազմակաների վրայ...

ՆԱՀԱՊԵՏ (Խելով քեռքը Վահանի ձեռքից).— Ինչե՛ր

տեղից լոյս ընկար:

ԱՆԱՀԻՏ (Շփոթում)։— Ես...

ՍԻՐԱՔ.— Պատահաբար կառքս սրանց փողոցով անցաւ, ասացի լաւ կը լինի Անահիտին էլ հետս առնեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղինակն խնդրով)։— Ա՛խ անպիտան կառապան, որ չգիտէ էլ, թէ կայարանից այստեղ գալու համար, հարկ չկայ ահագին շրջան անել մինչեւ Անահիտենց փողոցը...

ՍԻՐԱՔ (Ծիծաղելով)։— Զէ, հայրիկ, ճշմարիտն ասաց...

ՄԱԳԹԱՂ.— Լաւ ես արել որդի, որ Անահիտին էլ բերել ես: (Հանքուրելով Անահիտին) Բո աչքդ էլ լոյս, աղջիկս: Բո հոգիդ էլ բերանդ ելաւ, այնքան սպասեցիր:

ԱՇԽԷՆ (Սիրային)։— Բայց իսկապէս, ինչո՞ւ այդքան ուշացար:

ԱՆԱՀԻՏ.— Երեւի որոշել էր մի քիչ թանկ ծախել իրեն:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ թանկ ծախել, Անահիտ, վերջին երկու շաբաթը ուղղակի չունչ քաշելու ժամանակ չունէիր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ կար որ:

ՍԻՐԱՔ.— Մի քանի առկախ մնացած գործեր կային Ռոստովում եւ վաւերացվազում...

ՆԱՀԱՊԵՏ.— Էլի «գործեր»։ Այս երեք տարուան մեր քաջածնեքը բաւական չեղա՞ն:

ՄԱԳԹԱՂ (Նահապետին)։— Լա՛ւ, դու էլ մի՛ սկսիր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչպէս չսկսիմ, այ կնիկ, չես տեսնո՞ւմ, որ դեռ բանտի հոտը վրայից չթօթափած, էլի «գործերի» մասին է խօսում:

ՍԻՐԱՔ (Զուարթ)։— Լաւ, հայրիկ, այսօր այլ եւս գործերից չեմ խօսի: Ուրիշ բաներից հարցնենք: Է՛, վահան ջան, ինչո՞ւ չես խօսում: Երկու տարի մնաց մինչեւ աւարտելդ, այնպէս չէ՞:

ՎԱՀԱՆ.— Այո՛, Սիրաք եղբայր: Բայց դա հետաքրքրական չէ: Աւելի լաւ է, մի քիչ քո բանտային կեանքից պատմիր:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ պատմեմ:

ՎԱՀԱՆ.— Ա՛յ, օրինակ, թէ քաղաքական բանտարկեալներն ինչպէ՞ս են թիթիկակցներով խօսում իրար հետ՝ սենեակից-սենեակ...

Դրսից աղմուկի ձայներ են լսում, որ մեր սառնարանում են եւ մեր մօրում: Ամենքը շուտաւ իրար են նայում:

ՉԱՅՆԵՐ (Լուսամուտների սակ)։— «Նյդ ռ՞ւր են վազում այդպէս»: «Վաղիր տեսնենք»: «Հորիզոն»: «Մշա՛կ»: «Բարձրագոյն մանիֆեստ»: «Այ տղայ, մի թերթ տուր»...

ՆԱՀԱՊԵՏ (Մօսկաւով շուտամուտին)։— Ի՞նչ է այս ՍԻՐԱՔ։— Վահան, մի հատ «Հորիզոն» բերե՛ս:

(Մօսկաւում է միւս շուտամուտին եւ հակում դէպի փողոց: Վահանը վազելով մտնում է նախասենեակ: Խուշ աղմուկ փողոցում):

ՆԱՀԱՊԵՏ (Սիրային)։— Ի՞նչ պէտք է լինի սա:

ՍԻՐԱՔ.— Ոչինչ չի հասկացուում: Աղմուկը կարծես թէ քաղաքային հրապարակի կողմից է գալիս: (Աղմուկը սասկամում է):

ՉԱՅՆԵՐ (Լուսամուտների սակ)։— «Բարձրագոյն մանիֆեստ գործողովի մասին»: «Հորիզոն»: «Մշա՛կ»: «Զօրաժողով»: «Պատերազմ»: «Պատերազմ է, պատերազմ»...

ՆԱՀԱՊԵՏ.— Պատերազմ, ո՞վ, ո՞ւմ դէմ:

ՄԱԳԹԱՂ (Անհանցիտ)։— Ի՞նչ եղաւ վահանը:

ԱՇԽԷՆ (Խնդրով)։— Կարծում ես պատերազմ տարան:

ՏԵՍԻԼ 14.

ՆՐԱՆՔ ԵՒ ՎԱՀԱՆԸ

ՎԱՀԱՆ (Շնչախաս ներս ընկնելով նախասենեակից՝ քեր. քր ձեռքին)։— Սոսկալի բան է: Ռուսաստանը, Ֆրանսան, Գերմանիան եւ Աւստրո-Հունգարիան պատերազմի մէջ են: Թշնամական գործողութիւններն արդէն սկսուած են ռազմականների վրայ...

ՆԱՀԱՊԵՏ (Խելով քերքը վահանի ձեռքից)։— Ինչե՛ր

ես ասում, ա՛յ տղայ: (Բոլորն էլ, բացի Մազբաղից, հաւաք-
ւում են Նահապետի շուրջը եւ աշխատում կարդալ քերթը):

ՄԱԳԹԱՂ.— Սիրտս հատաւ: Մի բան ասացէք իմա-
նամ է՛:

ՆԱՀԱՊԵՏ (կոր մտածում).— Էլ ի՞նչ ասենք: Աչ-
խարհն իբար է անցել...

ՄԱԳԹԱՂ. (Այգերը երկինք յառելով եւ դեմքը խաչա-
կնիքով).— Տէ՛ր Աստուած... Տէ՛ր Աստուած...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Բեմը ներկայացնում է ընդունարան, որ միեւնոյն ժամանակ աշ-
խատանքի կարիքն է:

Խորհի պատից մի դուռ բացւում է դէպի նախասենեակը, աջ պա-
տից մի դուռ՝ դէպի Մազբաղի եւ Նահապետի սենեակը եւ ձախ պատից
մի դուռ՝ դէպի բնակարանի միւս մասերը:

Կահաւորութիւնը նոյնն է, ինչ որ նախորդ արարում՝ այն ար-
բերութեամբ, որ ձախ պատի կողմը, նախաբեմին մօտ, դրւած է մի գրա-
սեղան, իր քիկնաքոռով, քղթերի կողովով եւ այլ գրեական պարագա-
ներով:

Պատերի վրայ Բաժճիի, Քրիստփոր Միֆայէլեանի, Ս. Զաւարեանի,
Ժ. Ժողէսի եւ Միխայիլովսկիի նկարները:

Տ Ե Ս Ի Լ 1.

Գրասեղանի շուրջը նստած են ՍԻՐԱՔ, ԱՇՈՏ, ՎԱՐԴԱՆ
ԵՒ ՄՈՒՇԵՂ.

ՍԻՐԱՔ (Վերցնելով սեղանից մի գրութիւն).— Օրա-
կարգի վերջին խնդիրն է Բիւրօյի շրջաբերականը բոլ-
շեւիկների դաւերի շուրջ, որ քիչ առաջ կարդացինք: Ի՞նչ
կ'ասէք այս մասին:

ՄՈՒՇԵՂ.— Ես այն կ'ասէի, որ եթէ Բիւրօն ժա-
մանակին կտրուկ հրահանգներ տար բոլշեւիկների դէմ՝
նրանց չարագործութիւնների ծայրն այսօր զօրքին չէր
հասնի:

ՎԱՐԴԱՆ (Մոռնալով).— Մեր կուսակցութեան յե-
ղափոխութեան աւանդութիւններն աչքի առաջ ունենա-
լով՝ Բիւրօն ի հարկէ չէր կարող տալ քո ակնարկած կըտ-
րուկ հրահանգները, բայց սա չէ նշանակում թէ նա ան-

տարբեր է եղել դէպի բոլնիկեան դաւերը:

ՍԻՐԱՔ (Մուշեղիմ).— Ճիշդ է ասում ընկ. Վարդանը: Այս ամառուան մեր այնքան յաջող պայքարը բոլնիկեան դէմ Բիւրօյի հրահանգով չեղա՞ւ:

ՄՈՒՇԵՂ (Սիրայիմ).— Դու էլ շատ ես ուռեցնում այդ պայքարի նշանակութիւնը:

ԱՇՈՏ.— Ուռեցնելը ո՞րն է: Մինչև անգամ Վահանը, որ չէր քաշուում միտինգներում յայտարարել, թէ Դաշնակցութեան շէֆերին պէտք է կախել տայ սլալատի սիւններից՝ ծախել է իր պոչը: Քաղաքային զինապահեստը զբաւելու անյաջող փորձից յետոյ՝ նա այլևս հրապարակով չի երեւում:

ՄՈՒՇԵՂ (Աշոտիմ).— Ճիշդ է, հրապարակում չէ երեւում, բայց տեղույս մեր հրացանակիր գնդի մէջ, դեռ մի քանի օր առաջ, նա էր դրդում զինուորներին, որ գնդակահարեն հայ սպաներին: (Սիրայիմ) Ինչպէ՞ս է որ դու չես կարողանում ազդել այդ տղայի վրայ:

ՍԻՐԱՔ.— Այնպէս է տարուած բոլնիկեան դադափարներով, որ նոյնիսկ Լենինը չի կարող զսպել նրա մոլեռանդութիւնը:

ՎԱՐԴԱՆ.— Ձի՞ կարելի արդեօք նրան մի կերպ հեռացնել այստեղից:

ԱՇՈՏ.— Արդէն իր ընկերները որոշել են, ինչ որ գործով, նրան Հիւսիսային Կովկաս դրկել: Այս էլ պէտք է ասեմ, որ Վահանը խորքով վատ տղայ չէ: Նա կատաղի է իբրև հակառակորդ, որովհետեւ շատ անկեղծ է իր համոզմունքների մէջ և շատ ուժեղ տեմպերամենտ ունի: Եթէ նրա պայքարը մեր դէմ յաճախ սղեղ ձեւեր է առնում, դա պէտք է բացատրել Գեղամի եւ նրա նման մի քանի բոլնիկեան ազդեցութեամբ, որոնք սրբութիւն չեն ճանաչում ո՛չ անհատական և ո՛չ էլ հանրային գործերի մէջ:

ՍԻՐԱՔ.— Լա՛ւ, դառնա՞նք մեր գործին: Բիւրօյի չրջաբերականի մասին ուրիշ ասելիք ունի՞ք (Լուսին) Զուռիք: Ուրեմն կը հաղորդենք Զինուորական Մարմին

և կոմիտէներին ի գործադրութիւն: Օրակարգի հարցերը սպառուած են:

ՎԱՐԴԱՆ.— Չմոռնաս, որ Պ. Նահապետեանը քիչ առաջ ցանկութիւն յայտնեց մի երկու ընկերով մեզ հետ խօսելու:

ՍԻՐԱՔ.— Այո, Սակայն նախապէս որոշենք մեր այսօրուան անելիքները: Ընկ. Աշոտ, այս երեկոյ Կ. Կ. կողմից դու պիտի մասնակցես Բիւրօյին նիստին:

ԱՇՈՏ.— Ինչո՞ւ ոչ դու:

ՍԻՐԱՔ.— Որովհետեւ երեկոյեան նորից պէտք է հանդիպիմ երդնկայից եկած սպաներին:

ԱՇՈՏ.— Իսկ Բիւրօյի օրակարգի վրայ ի՞նչ հարցեր կան:

ՍԻՐԱՔ (Վերցնելով քուրք սեյանից).— Կարեւոր հարցերն են՝ հայկական կորպուսի կազմակերպութիւնն արագացնելը և թուրքահայ ու ուսահայ Ալլաջին խորհուրդների միջեւ օրգանական կապ հաստատելը: Միւս կէտերը կազմակերպական մանր-մուշիկ հարցերի են վերաբերում: (Օրակարգը չալով Աշոտիմ) Կարգա՛ւ եւ տե՛ս:

ԱՇՈՏ (Առնելով քուրքը).— Լաւ:

ՍԻՐԱՔ.— Իսկ դու, ընկ. Մուշեղ, գրիւր անմիջապէս Զաւէնին, Տիգրանին և Սորէնին, որ կիրակի օրը անպատճառ այստեղ լինեն՝ լրիւ կազմով Կենտրոնական Կոմիտէի նիստ ունենալու համար:

ՄՈՒՇԵՂ (Նայելով քեռի ժամացոյցին).— Հիմա պէտք է անմիջապէս խորհուրդների նիստին գնամ: Նիստից յետոյ կը գրեմ:

ՎԱՐԴԱՆ (Մուշեղիմ).— Ձէ՞ որ այսօր խորհուրդների օրը չէ:

ՄՈՒՇԵՂ.— Այո՛, բայց ժամը հինգին արտակաջգ նիստ է նշանակուած՝ ինչ որ խիստ կարևոր խնդրով:

ՍԻՐԱՔ.— Լա՛ւ, Մենք էլ, ընկ. Վարդան, գնանք տեսնենք, թէ ի՞նչ վիճակի մէջ են թիւ 4 զինապահեստի աշխատանքները: Աշոտ, կ'ուզե՞ս մեզ հետ գալ:

ԱՇՈՏ.— Ո՛չ, չեմ կարող:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ ունիս որ . . .

ԱՇՈՏ.— Պէտք է հիմա գնամ Արտակի տեղափոխութեան խնդիրը կարգադրեմ:

ՍԻՐԱՔ.— Մի՞թէ Արտակը դեռ քեզ մօտ է պահւում:

ԱՇՈՏ.— Այո՛:

ՍԻՐԱՔ.— Աչո՛տ, ես քեզ ուղղակի չեմ հասկանում: Անցեալ օրուան քո եւ Մուշեղի այնքա՛ն ցաւալի վէճից յետոյ . . .

ԱՇՈՏ.— Սիրելիս, ես ի՞նչ անեմ, որ չկարողացայ յարմար թագստոց գտնել: Հօ չէի կարող նրա փողոց նետել, որպէսզի Գուրամաշւիլիներն իրենց նպատակին հասնէին . . .

ՎԱՐԴԱՆ.— Ճիշդն ասած, չեմ հասկանում, թէ ի՞նչ է ներկայացնում այդ Արտակը, որ մենք նրա պատճառով այսքան գլուխ ենք ցաւացնում:

ԱՇՈՏ.— Ընկ. Վարդան, դու նախ դիտես, որ Արտակը իմ մանկութեան ընկերն է: Մենք գրեթէ մի յարկի տակ ենք մեծացել: Եւ յետոյ՝ նա մէկն է այն սակաւաթիւ բոլշևիկներից, որոնց հետ կարող ես մարդու պէս նստել, խօսք ասել և խօսք լսել: Ինքդ էլ շատ գո՛հ էիր չէ՞, որ Արտակն արգելում էր իր ընկերներին՝ բոլշևիկեան պրօպագանդ մղել հայկական գաւառներում՝ նկատի ունենալով հայ ժողովրդի բացառիկ վիճակը և ազգային ինքնապաշտպանութիւն կազմակերպելու անհրաժեշտութիւնը:

ՍԻՐԱՔ (Աշոտին).— Բայց դու վերջ ի վերջոյ ի՞նչ ես մտածել Արտակի մասին: Նրան ոչ մի պայմանով քեզ մօտ պահել չի կարելի: Ինձ թւում է, թէ Գուրամաշւիլին հոտ է առել նրա թագստոցի մասին:

ԱՇՈՏ.— Այսօր ամէն ինչ կը կարգադրուի:

ՍԻՐԱՔ.— Հաստա՞տ:

ԱՇՈՏ.— Հաստատ:

ՍԻՐԱՔ (Շարժուելով դեպի աջ դուռը).— Հիմա տեսնենք, ի՞նչ է ուզում ասել մեր հայրիկը:

ԱՇՈՏ.— Իմ ներկայութիւնն անհրաժեշտ չէ: Ես գիտեմ, թէ Պ. Նահապետեանն ինչի մասին պիտի խօսի, և կատարելապէս համամիտ եմ նրա առաջարկներին, Թո՛ղէ՛ք ես գնամ այս տեղափոխութեան գործը վերջացնեմ:

ՍԻՐԱՔ.— Ինչպէս կ'ուզես:

ԱՇՈՏ.— Ուրեմն ցտեսութիւնս (Եղևուս եւ Լախարեմեալ):

ՍԻՐԱՔ (Աջ դռնից ներս՝ կանչելով).— Հայրի՛կ . . . ՆԱՀԱՊԵՏ (Ներսից).— Այս բոլէիս: Մի վայրկեան միայն:

ՎԱՐԴԱՆ (Սիրաֆին, որ վերադառնալով նստւում է իր տեղը).— Նկատում ես, թէ վերջին տարուան ընթացքին ի՞նչ «անտանտ կորդիալ» է ստեղծուել Աշոտի եւ հայրիկի միջեւ:

ՍԻՐԱՔ (Ժպտալով).— Այո՛: Եւ երեւակայիք, որ հայրիկս հիմա ամէնքից շատ Աշոտին է հաւանում:

ՄՈՒՇԵՂ.— Ձեմ զարմանում, որովհետեւ ընկ. Աշոտը կատարեալ «ազգային» է դառել . . .

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՐԱՆՔ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնելով աջ դռնից, ձեռքին քրքեր).— Վերջացրեք ձեր գործը, հա՞:

ՍԻՐԱՔ.— Այո՛, հայրիկ, միայն նախազգուշացնում եմ, որ շատ ժամանակ չուենք մեր տրամադրութեան տակ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես ձեզ երկար չեմ զբաղեցնի: Միայն երկու խնդիր ունիմ դնելու ձեր առջ:

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Տեսնենք էլ ի՞նչ հետաքրքրական հարցեր է արծարծելու մեր սիրելի Պ. Նահապետեանը:

ՆԱՀԱՊԵՏ.— Առաջին հարցս է, որ դուք ձեռնհաս մարտիկ ուժեր ղրկէք Բայազէտ, ինչու եւ Բուլանըս՝ տեղական փոքրաթիւ խմբերն ուժեղացնելու:

ՍԻՐԱՔ.— Ինչո՞ւ համար:

ՆԱՀԱՊԵՏ.— Դասալքութիւնը ռուսական զօրքերի մէջ օր ըստ օրէ մեծ չափեր է աճում, և դասալիքները յաճախ անկարգութիւններ են անում մեր նորակազմ գիւղերում: Եթէ այսպէս շարունակուի՝ մեր վերաշինական աշխատանքները լրջօրէն կը խանգարուեն:

ՎԱՐԴԱՆ.— Իսկ այդ աշխատանքները ներկայիս ի՞նչ աստիճանի վրայ են գտնուում:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն աստիճանի վրայ, Պ. Վարդան, որ Հայաստանը մեր աչքի առաջ յարուժիւն է աճում աւերակների միջից: Միայն Ալաշկերտում այս բողբոս աւերիքան 30,000 հայ է հաստատուած: Նոյնքան խնուում: Նոյնքան վանի չըջանում: Դիադինը, Բասէնը, Կարնոյ դաշտը, Դերջանը, Երզնկան նոյնպէս հետզհետէ վերակենդանանում են: Եթէ այսպէս գնայ՝ մինչեւ մի տարին մենք գրաւած հայկական նահանգներում 200-300 հազար հայ բնակչութիւն կ'ուենանք: Սա գիտէ՞ք ինչ է նշանակում:

ՎԱՐԴԱՆ (ժպտալով).— Ի՞նչ:

ՆԱՀԱՊԵՏ.— Սա նշանակում է մի հարուածով ի չիք դարձնել թէ՛ Էնվէր-թալաթեան ծրագիրը և թէ՛ «Եփրատեան Կողակութեան» դաւերը:

ՍԻՐԱՔ.— Շատ լաւ: Բո երկրորդ հօրցը որն է:

ՆԱՀԱՊԵՏ.— Երկրորդ հարցն է, որ դուք վերակենդանացնէք «Մի հայը մի ոսկի» ֆոնդի գործունէութիւնը, որպէսզի կարողանանք շարունակել հայ գերիների ազատագրութիւնը:

ՄՈՒՇԵՂ.— Բայց մենք ի՞նչ կարող ենք անել: Ֆոնդի գործունէութեան համար դրամ է պէտք, իսկ դրամը մեզ մօտ չէ գտնուում, այլ հայ հարուստների մօտ:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդ այդպէս է անշուշտ: Սակայն մինչև որ դուք, դաշնակցականերդ, այս գործի շուրջը հանրային տրամադրութիւն չստեղծէք, հայ հարուստից դրամ քաշելը դժուար է լինելու:

ՎԱՐԴԱՆ (ժպտալով).— Վերջապէս Պ. Նահապետեանը

խոստովանեց, որ մենք՝ դաշնակցականներս էլ մի բանի պէտք ենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Անարդար մի՛ լինէք, Պ. Վարդան, ես երբեք չեմ ուրացել ձեր օգտակար գործերը: Սակայն, քանի որ խօսքը տեղը եկաւ՝ թոյլ տուէք ասելու, որ ձեր մի ընթացքը ինձ դուր չի գալիս:

ՎԱՐԴԱՆ.— Ո՞ր ընթացքը:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն՝ որ դուք շատ էք պողահարում հայ բուլկիներին:

ՄՈՒՇԵՂ (Կիսահեգնալով).— Ի՞նչ կ'ուզէիք որ անէինք:

ՆԱՀԱՊԵՏ.— Պէտք է աշխատէք մի կերպ հասկացողութեան դալ նրանց հետ:

ՄՈՒՇԵՂ.— Ինչպէ՞ս հասկացողութեան գանք, երբ նրանք պահանջում են, որ կառավարութիւնը հանէ զօրքերը Տաճկահայաստանից, շրջապի (Մաղրանիով) «առանց անհետախաբի և առանց կոտորելութեան» հաշտութիւն կնքուի Տաճկաստանի հետ:

ՆԱՀԱՊԵՏ.— Եթէ մի քիչ մտեմօրէն խօսէք հայ բուլկիների հետ, կարելի կը լինի նրանց հասկացնել, որ այդ պահանջը տնաքանդութիւն է մեզ համար: Նրանց մէջ մի քանիսին գիտեմ, որոնք, հաւատացնում եմ ձեզ, ամէնքիս պէս հայ են և հայ ժողովրդի վիճակով նոյնքան են մտահոգուած, որքան դուք եւ ես:

ՎԱՐԴԱՆ.— Օրինակ:

ՆԱՀԱՊԵՏ.— Օրինակ՝ Պ. Արտակը:

ՄՈՒՇԵՂ (Գրգռաւ).— Հէնց այդ Արտակ կոչուածը չէ՞, որ Սարիղամիշում և Էրզրումում դրդում էր զօրքերին՝ դէն ձգել դէնքերը եւ վերադառնալ իրենց տունները:

ՆԱՀԱՊԵՏ.— Սխալուում էք, Պ. Մուշեղ. Հաստատ գիտեմ, որ Արտակն այդ կողմերը գնաց արգիլելու համար իր ընկերներին, որոնք այդպիսի յիմարութիւններ էին անում:

ՍԻՐԱՔ.— Սակայն, հայրիկ, դու ի՞նչ օգուտ ես

ակնկալում մեր եւ հայ բոլորիկների մերձեցումից:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց թեկուզ այն օգուտը, որ այս վտանգաւոր ժամանակներում, մեր ուժերը չեն ջլատուի ներքին կռիւներով:

ՍԻՐԱՔ.— Էլ ուրիշ հարց չունի՞ս, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՛չ:

ՍԻՐԱՔ.— Լաւ Բանի որ դրածդ երկու հարցերն էլ մեր Բիւրօյի իրաւասութեան մէջ են մտնում, ես կը յանձնարարեմ Աշոտին, որ այս երեկոյ խօսի նրանց մասին Բիւրօյի նիստին, իսկ վաղը քեզ պատասխան կը տանք: (Ոտի ելնելով) Հիմա մենք պէտք է գնանք: (Ելնում է նախասենեակով):

ՎԱՐԴԱՆ.— Ցտեսութիւն, Պ. Նահապետեան (Ելնում է Մուշեղին հետ միասին):

ՆԱՀԱՊԵՏ (Կտրդի բերելով իր քրքերը).— Ցտեսութիւն, պարոններ:

Տ Ե Ս Ի Լ 3.

ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՄԱԳԹԱՂ

ՄԱԳԹԱՂ (Մտնում է աջ դռնից՝ հագնուած ելնելու համար եւ գնումների պայուսակը ձեռքին).— Գնացի՞ն:

ՆԱՀԱՊԵՏ (Զբաղուելով իր քրքերով).— Այո՛:

ՄԱԳԹԱՂ.— Իսկ դու տո՛ւնն ես մնալու:

ՆԱՀԱՊԵՏ.— Մինչեւ երեկոյ տունն եմ:

ՄԱԳԹԱՂ.— Երեկոյեան ինչ ունիս:

ՆԱՀԱՊԵՏ.— Պ. Մաքարիոսեանի մօտ եմ լինելու:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ կայ որ:

ՆԱՀԱՊԵՏ.— Մի մասնաւոր խորհրդակցութիւն է նշանակուած նրա մօտ՝ մեր կուսակցութիւնների մէջ սկսած անհամութիւններին վերջ տալու համար:

ՄԱԳԹԱՂ.— Եթէ այդ կարգի չնորհք ունես՝ նախ քան տանը վերջ տուր կուսակցական անհամութիւններին:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ են բզբտում իրար, հա՛:

ՄԱԳԹԱՂ.— Բզբտելն էլ ինչպէ՞ս է լինում: Երբ

Սիրաքն ու Վահանը վէճի են բռնում՝ կարծես թշնամի բանակներ լինեն իրար դէմ կանգնած:

ՆԱՀԱՊԵՏ.— Բանի որ մեծերն են իրար ոտքի տակը փորում, ջահիլներից ի՞նչ պահանջես: Իսկ դու ո՞ւր ես այդպէս սարքուել:

ՄԱԳԹԱՂ.— Գնամ տեսնեմ ի՞նչ եմ ճարում ընթերիքի համար: Բանդուեն այսպիսի ժամանակները. դրամը գրպանումդ՝ ամէն բանի հասրաթ ես մնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ասում են թէ կօտեքատիւում բաւ բերնձ է ստացուած: Աշխէնին կամ Վահանին դրկիր, մի քիչ էլ մեզ համար բերեն:

ՄԱԳԹԱՂ.— Դու էլ բա՛ն ասացիր: Մի ժողովից դուրս են գալիս՝ միւս ժողովը խցկւում: Նրանց հետ այսպիսի բաների մասին խօսիլ կը լինի՞:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի հարկէ չի լինի: (Ժողովելով քրքերը) Մարդիկ յեղափոխութիւն են խորացնում: Եւ այնքան պիտի «խորացնեն», որ ամէնքս էլ խորխորատի մէջ ընկնենք: (Ելնում են՝ Մաքարը նախասենեակ, իսկ Նահապետը՝ աջ դռնով):

Դ Ա Տ Ա Ր Ե Բ Ե Մ

Տ Ե Ս Ի Լ 4.

Մտնում են ձախ դռնից **ԱՆԱՀԻՏ**՝ կտր անոխիս եւ **ԱՇՆԻՆ**՝ մի գիւղ ձեռքին:

ԱՇՆԻՆ.— Բայց մի՞թէ քեզ համար անսպասելի էք այդ պատմութիւնը:

ԱՆԱՀԻՏ.— Մի քիչ այո: Որովհետեւ ինձ թւում էր, թէ դու Աշոտին աւելի ես հաւանում, քան թէ Արտակիւն:

ԱՇՆԻՆ (Խնդրով).— Սկզբում իրօք որ այդպէս էր. բայց պատերազմից ի վեր նա այնքան է փոխուել, որ անճանաչելի է դարձել:

ԱՆԱՀԻՏ.— Ինչո՞վ է փոխուել:

ԱՇՆԻՆ.— Իր հայեացքներով: Ինչե՞ր էր քաբողում առաջ և ի՞նչ գործերի վրայ է հիմա...

ԱՆԱՀԻՏ.— Ես, հիշդն ասած, այլ կարծիք ունիմ Աշոտի մասին: Բայց ի հարկէ դու եւ Արտակը իրար աւելի լաւ կը հասկանաք, քանի որ միւսնոյն գործին էք ծառայում: Այս տեսակէտից՝ քո ընտրութիւնը միանգամայն ողջունելի է:

ԱՇԽԷՆ.— Միայն այդ տեսակէտից:

ԱՆԱՀԻՏ.— Ո՛չ, Արտակը իբրեւ անձնաւորութիւն էլ շատ համակրելի է: Բայց, այսու հանդերձ, կրկնում եմ, Աշխէն, որ եթէ Սիրաքն իմանայ, թէ Արտակը դեռ եւս Աշոտի... մօտ է պահուում, շատ կը բարկանայ: Դու գիտես, որ անցեալ օրը այս հարցի շուրջը մեծ անախորժութիւն է եղել ընկերների մէջ:

ԱՇԽԷՆ.— Այո՛, պէտք է այդ մասին մի կարգադրութիւն անել:

Տ Ե Ս Ի Լ Ծ.

ՆՐԱՆԳ ԵՒ ՎԱՀԱՆԸ

ՎԱՀԱՆ (Մտնելով նախասենեակից).— Հը՛, ի՞նչ էք քչփշուժ հարս ու տար:

ԱՆԱՀԻՏ.— Գնիչողը դու ես, անպիտա՛ն, արի մի թևիդ երկարութիւնը չափեմ:

ՎԱՀԱՆ.— Վա՛, արդէն թեւին հասա՞ր: Այդ հօմեքենայից էլ արագ ես աշխատում:

ԱՆԱՀԻՏ.— Հապա ի՞նչ ես կարծում: (Չափում ե շապիկի քեւը Վահանի վրայ): Տես ի՞նչ ծալքեր եմ արել կրծքի վրայ: Հաւանո՞ւմ ես թէ չէ:

ՎԱՀԱՆ.— Անահիտի կարած բանին չհաւանել կը լինի՞, իսկապէս որ շատ գեղեցիկ է: Ի դուր չէ մայրիկն ասում, թէ մատերդ ոսկի են:

ԱՆԱՀԻՏ.— Դէ, փուչ կենդանի, եթէ խելօք մնաս՝ այս շապիկին յարմար մի փողկապ էլ կը ստանաս ինձանից նուէր:

ՎԱՀԱՆ (Ծիծաղով).— Անշուշտ գոյնը դեղին կը լինի:

ԱՆԱՀԻՏ.— Ձէ, կաս-կարմիր գոյն պիտի ընտրեմ:

որպէսզի միտինգներում աւելի ես աքլորանաս: (Հաւաքով կարը եւ դիմելով դիմախոսի ձայնի դուր): Հիմա սպասի՛ր թեւերդ մեքենայի տակ տամ եւ մի քան արդուկեմ, որպէսզի ամենայն ինչ կատարեալ լինի (Ելնում ե, շտապով, ձայն դնելով):

ՎԱՀԱՆ (Աշխէնին).— Շատ անուշիկ հարս է մեր Անահիտը:

ԱՇԽԷՆ.— Այո՛, բայց լաւ կը լինէր որ մի քիչ էլ դու անուշիկ տագը լինէիր նրա համար:

ՎԱՀԱՆ.— Վա՛հ, ես նրան ի՞նչ եմ արել որ: Ինքդ էլ գիտես, որ այս տանը ամէնքից շատ Անահիտին եմ սիրում:

ԱՇԽԷՆ.— Կարծում ես նրա վրայ չի՞ ազդում, որ դու թշնամու պէս ես վերաբերում Սիրաքին:

ՎԱՀԱՆ.— Դու էլ բան ասացիր: Սիրաքը Սիրաք է, իսկ Անահիտը՝ Անահիտ:

ԱՇԽԷՆ.— Է՛, լա՛ւ, թողնենք: Լսիր ի՞նչ եմ ասում: Անահիտը յայտնեց ինձ, թէ Սիրաքն ու իր ընկերները անախորժութիւն են ունեցել Աշոտի հետ՝ թէ ինչո՞ւ Արտակին չի հեռացնում իր մօտից: Պէտք է այս մասին մի բան անել:

ՎԱՀԱՆ (Գրգռուած).— Հիմա ի՞նքդ ասա. ինչպէ՞ս կ'ուզէիր, որ ես վերաբերուէի դէպի Սիրաքը: Ձէ՞ նա գիտէ, որ մենչևիկները որսի շների պէս ընկել են Արտակի յետևից, որպէսզի նրան ծուրկ-ծուրկ անեն:

ԱՇԽԷՆ.— Դրա մասին խօսելու ժամանակը չէ: Պէտք է մի ուրիշ թագստոց գտնել:

ՎԱՀԱՆ.— Լաւ, հիմա Գեղամը կը գայ եւ միասին կը խորհրդակցինք այդ մասին: Բայց մինչեւ նրա գալը, մի բան պէտք է ասեմ քեզ: (Մտնում ե):

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ բան:

ՎԱՀԱՆ.— Կոմիտէտն այս առաւօտ ինձ վրայ մի պարտականութիւն դրաւ, որ պիտի դժուարանամ կատարել, առանց քո օգնութեան:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւմն է բանը:

ՎԱՀԱՆ (Ձայնը ցածցնելով).— Վերջին օրերս, Սիրաքը գաղտնի տեսակցութիւններ է ունեցել Երզնկայի ռազմաճակատից եկած երկու բարձրաստիճան սպաների հետ: Դու պէտք է իմանաս, թէ ինչի՞ մասին է եղել նրանց խօսակցութիւնը:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս իմանամ:

ՎԱՀԱՆ.— Կարող ես խօսք քաշել Անահիտից, որին Սիրաքն ընդհանրապէս տեղեակ է պահում իր գործերին:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ ինքդ չես անում այդ:

ՎԱՀԱՆ.— Որովհետեւ Անահիտը վայրկենապէս պապանձուում է, երբ ես մինչեւ իսկ ամենաանմեղ քաղաքական հարցեր եմ տալիս նրան:

ԱՇԽԷՆ.— Ես չեմ կարող օգտակար լինել այս գործում:

ՎԱՀԱՆ (Ձարմացած).— Ինչո՞ւ:

ԱՇԽԷՆ.— Որովհետեւ անազնուութիւն եմ համարում դաւելով խօսք դուրս քաշել մի մարդուց, որ վերաբերում է ինձ իբրեւ սրտազին բարեկամի եւ հարազատի:

ՎԱՀԱՆ.— Դու դեռ այդ երեխայական մտայնութեան մէջ ես:

ԱՇԽԷՆ.— Երեխան ինքդ ես:

ՎԱՀԱՆ.— Ձէ՛, տեսնում եմ, որ դու դեռ հասունացած չես բոլեւիզմի համար:

ԱՇԽԷՆ.— Բոլեւիզմը անազնուութիւն է պարտադրում իր հետեւորդներին:

ՎԱՀԱՆ.— Ոչ, բայց նա պարտադրում է զանազանել իրարից ազնիւն ու անազնիւր:

ԱՇԽԷՆ (Հեկնակով).— Բո հեղինակաւոր կարծիքով ի՞նչն է ազնիւ և ի՞նչն՝ անազնիւ:

ՎԱՀԱՆ.— Ազնիւն այն է, որ ես, պրոլետարական յեղափոխութեան համար պայքարելիս, ոչ հարազատ եմ հարցնում և ոչ անհարազատ իսկ անազնիւն էլ այն է, որ դու այդ յեղափոխութեան շահերն աւելի ստոր ես դասում, քան քո ազգակցական կամ բարեկամական կապերը: Հասկացա՞ր:

ԱՇԽԷՆ (Ահամարհանով).— Հասկացա՞յ:

ՎԱՀԱՆ.— Ի՞նչը հասկացար:

ԱՇԽԷՆ.— Այն՝ որ քո ասածը խիտաւթիւն է ևս քեզնից լաւ գիտեմ, որ յանուն գաղափարի կարելի է թշնամանալ նոյնիսկ ամենամօտիկ բարեկամի հետ: Բայց երբ մէկը վարւում է քեզ հետ համաձայն մարդկային բարոյական օրէնքների՝ դու էլ պարտաւոր ես չկորցնել քո մարդկային նկարագիրը: Հասկացա՞ր:

ՎԱՀԱՆ.— Ես թքել եմ քո այդ մարդկային բարոյական օրէնքների վրայ, որոնցով բուրժուազիան...

Ձանգահարութիւն

ՎԱՀԱՆ (Դիմելով դեպի նախասենեակ).— Եւ սա ի՞նչն դեռ բոլեւիզիան կուսակցութեան անդամ է համարում (Մտնում է նախասենեակ):

ԱՇԽԷՆ (Վառանքի յետից).— Բարեբախտաբար մեր կուսակցութիւնը քեզ պէս տխմարներից չէ կազմուած, թէ չէ իրօք որ...

Տ Ե Ս Ի Լ Ե

ԱՇԽԷՆ, ՎԱՀԱՆ, ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— Բարեւ, ընկ. Աշխէն: Ձեր հայրիկը ցանկութիւն էր յայտնել ինձ տեսնելու:

ՎԱՀԱՆ.— Հիմա կը կանչեմ: Բայց նախապէս կարգադրենք ընկ. Արտակի խնդիրը:

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ խնդիր:

ՎԱՀԱՆ.— Դաշնակները կատաղած են, որ Աշտուղ պահում է նրան:

ԳԵՂԱՄ.— Դա՞ ինչ ստորնութիւն է:

ԱՇԽԷՆ (Ակնհեւ յուզմունով).— Ընկ. Գեղամ, դուք կը համաձայնեի՞ք, որ Վահանը կամ ես պատասպարէինք մեր կուսակցութեան հակառակորդներին:

ԳԵՂԱՄ.— Ի հարկէ ոչ:

ԱՇԽԷՆ.— Հասկա ինչո՞ւ էք պահանջում, որ Աշտուղ

ընկերները համաձայնուեն:

ԳԵՂԱՄ (Ծիծաղով).— Որովհետեւ նրանք յիմար իդիալիստներ են և պարտաւոր են յիմարութիւն անելու ՎԱՀԱՆ (Հեղեղակով Աշխենին).— Հիմա հասկացա՞ր թէ բանը ինչու՞ն է:

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆԻ ՍԻ ՆԱՀԱՊԵՏ

...

ՆԱՀԱՊԵՏ (Գլուխը հանելով աջ դռնից կանչում է).— Աշխէ՛ն, (Յանկարծ ջնջելով Գեղամի՛ն՝ մտնում է ներս) Օ՛, դուք այստե՛ղ էք Պ. Գեղամ: Վերջապէս բարեհաճեցի՞ք չնորհ բերել մեզ մօտ (Բարեւում է):

ԱՇԽԵՆ.— Հայրի՛կ, դու բան է՛իր ուզում:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, Աշխէն ջան, մի սուրճ պատրաստիր ինձ համար: Գուցէ Պ. Գեղամն էլ...

ԳԵՂԱՄ.— Ո՛չ, ո՛չ, ես չնորհակալ եմ:

ՆԱՀԱՊԵՏ (Աշխենին).— Որ այդպէս է, ինձ համար պատրաստիր: Միայն շատ քաղցր չանես: (Աշխենը ելնում է աջ դռնով) Ե՛, պատմեցէք տեսնենք Պ. Գեղամ: Բայց ստուած է. «Ի ժողովել երիտասարդաց՝ կաքաւին դեք»: Հօ ձեզ չե՞մ խանդարում:

ԳԵՂԱՄ (Ծիծաղով).— Ո՛չ, ինչո՞ւ: Տունը ձերն է:

ՆԱՀԱՊԵՏ (Կասկով գարնանի՛մ անացնելով).— Ինչպէ՞ս թէ տունը իմն է: Զէ՞. որ մասնաւոր սեփականութիւնը...

ԳԵՂԱՄ (Խնդրով).— Պ. Նահապետեանը երևում է, լաւ տրամադրութեան մէջ է այսօր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչո՞ւ պէտք է վատ լինի տրամադրութիւնս, երբ ձեզ պէս քաջ երիտասարդներ ունինք, որոնք քափ-քրտինք մտած աշխատում են... (Ծիծաղով) Զի՞մարիտն ասած, չեմ իմանում ինչի համար:

ՎԱՀԱՆ.— Մի քիչ էլ համբերի, հայրիկ, եւ կ'իմանաս:

ՆԱՀԱՊԵՏ.— Համբերութեան կողմից, փառք Աստուծոյ, առատօրէն օժտուած եմ: Բայց դուք, սիրելիք,

այնպիսի բաներ էք անում, որ ինձ պէս հանգիստ մարդուն էլ համբերութիւնից կը հանէք:

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ բաներ:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց ասենք այն, որ աշխատում էք քայքայել անդրկովկասեան բանակը: Ի՞նչ է ձեր նպատակը:

ԳԵՂԱՄ.— Մեր նպատակն է, որ այս իմպերիալիստական պատերազմը վերջանայ:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ թո՞ւրքը:

ԳԵՂԱՄ.— Թուրքը մեղանից շատ է հեռու, Պ. Նահապետեան:

ՎԱՀԱՆ.— Թող մի թուրք ասկեարները մօտենան մեր սահմաններին, եւ դու կը տեսնես, թէ մենք ինչպէ՛ս նրանց ղէնքերն ուղղել կը տանք իրենց փաշաների դէմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Բանի որ այդքան չնորհք ունէք, ինչո՞ւ էք սպասում, որ ասկեարները մօտենան մեր սահմաններին: Փառք Աստուծոյ, ձեզ համար հայ, ռուս, թուրք միեւնոյն բաներն են: Մտէք հէնց հիմա թուրք զօրքերի մէջ և համոզեցէք, որ նրանք իրենց փաշաներին սուխնների ծայրը հանեն:

ԳԵՂԱՄ.— Ինչպէ՞ս մտնենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Գնանք Երզնկա, ես ձեզ ճանապարհը ցոյց տամ:

ՎԱՀԱՆ.— Ո՛չ, հայրիկ, մեզ զբաղեցնողը թուրքը չպէտք է լինի, այլ համաշխարհային յեղափոխութիւնը: Թո՛ղ այդ յեղափոխութեան հարուածների տակ միջազգային իմպերիալիզմը ջախջախուի, եւ դու կը տեսնես, որ թրքական վտանգն ինքն իրեն յօդս կը ցնդի:

ԳԵՂԱՄ.— Եւ արդէն այդ վտանգն էլ դաշնակիների կողմից չէ՞ հնարուած: Ոչ մէկ նշան չկայ, թէ թուրքիան ազգրեսիվ միտումներ ունի յեղափոխական Ռուսաստանի դէմ: Ընդհակառակը, նա ուզում է հաշտութիւն կնքել եւ միեւնոյն հիմա կնքած կը լինէր, եթէ Միւլիսկովներն ու Կերենսկիները չսարսափեցնէին նրան՝ Պոլսին տիրանալու իմպերիալիստական ախորժակով:

ՎԱՀԱՆ (Գեղարկին). Ինչո՞ւ ես մոռանում յիշել նաև դաշնակների իմպերիալիզմը, որ հիմա, կարծեմ, վեց վիլլայէթներով էլ չի գոհանում, այլ մինչեւ Կիլիկիա է տարածում.— Մովսիս ծով... Ա՛խ, այդ չպարտւած հակա-յեղափոխականները... Ամենից առաջ դրանց...

ՆԱՀԱՊԵՏ.— Դաշնակցականներն են հակայեղա-փոխականները:

ՎԱՀԱՆ.— Հապա ո՞վ:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղճօրեկն խայսկնփելով դեմքը).— Տէ՛ր Աստուած, տէ՛ր Աստուած: Մինչեւ հիմա կարծում էինք, թէ նրանց յեղափոխութիւնն է մեզ գլխացաւանք պատ-ճառում. իսկ բանից դուրս է գալիս, որ նրանք հակայե-ղափոխականներ են եղել...

ՎԱՀԱՆ.— Իսկական յեղափոխութեան մասին դա-ղափար չունեցողները միայն կարող են խաբուել նրանց յեղափոխական ֆրազէօլօգիացիայից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես չգիտեմ, թէ իսկական յեղափոխու-թիւն ասելով դուք ինչ էք հասկանում: Բայց գիտեմ, որ եթէ այսօր Դաշնակցութիւնն էլ չլինի մէջտեղ՝ մենք կա-րած ենք:

ԳԵՂԱՄ.— Ինչո՞ւ ենք կորած:

ՆԱՀԱՊԵՏ.— Աստուած մի՛ արասցէ, թող թաթարնե-րը օգտուելով ներկայ ընդհանուր քաոսից նորից գլուխ բարձրացնեն հայերի դէմ, և դուք կը տեսնէք, թէ ինչո՞ւ ենք կորած:

ՎԱՀԱՆ.— Եթէ Դաշնակցութիւնը չլինի՝ հայ եւ թաթար ժողովուրդների միջև ոչ մի բան էլ չի պատահի:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղճանով՝ Վահանին).— Ուրեմն, քո այդ երկար խնդրով, եթէ Դաշնակցութիւնը տապալէք, թուրքական գործակալները կարտւում, նախիջևանում և ուրիշ տեղեր չեն գրգռի թաթարներին հայերի դէմ և թա-թարներն էլ չեն մտածի հայերին թալանելու եւ կոտորե-լու մասին... Այսպէս է հա՞, Պ. Գեղամ:

ԳԵՂԱՄ.— Այդպէս է մի լրացումով:

ՆԱՀԱՊԵՏ.— Լրացումը որն է:

ԳԵՂԱՄ.— Լրացումը այն է, որ դաշնակների հետ միասին պէտք է սանձահարել նաեւ թաթար բէկերին, կուլակներին և մուլաներին, որոնք՝ գործիք դառնալով թուրքական էմիսարների ձեռքին՝ չեղում են թաթար ժո-ղովուրդը յեղափոխական գործից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վ պէտք է լինի դրանց սանձահա-րողը:

ԳԵՂԱՄ.— Դասակարգային գիտակցութեան եկած թաթար աշխատաւորութիւնը:

ՆԱՀԱՊԵՏ.— Լաւ չի՞ լինի արդեօք մի առժամա-նակ յետաձգել պայքարը Դաշնակցութեան դէմ, մինչեւ որ թաթար աշխատաւորութիւնը դասակարգային գիտակ-ցութեան գայ եւ ապա թէ...

ՎԱՀԱՆ.— Զարմանալի մարդ ես, հայրիկ. ինչո՞ւ ես ուղում, որ լաւ բաներն առաջ ուրիշներն սկսեն:

ՆԱՀԱՊԵՏ.— Որովհետեւ ձեր մտածածը լաւ բան չէ, որդիք, այլ ֆլասակար բան է: Դուք ուղում էք քայքայել հայ ժողովուրդի մէջ գոյութիւն ունեցող միակ կազմա-կերպուած ոյժը, մինչդեռ թաթար ժողովուրդը դեռ շատ հեռու է իր հայադաւ ղեկավարներին չէղքացնելու մըտ-քից: Ոտք չունիմ. նա էլ կարող է մի օր այդ մտքին գալ, բայց դեռ ջուրը չտեսած կօշիկ հանե՞ն ինչ է...

ՎԱՀԱՆ (Անհասկերութեամբ ընդհատելով).— Հայրիկ, կարծեմ բան ունէիր ասելու ընկ. Գեղամին:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո: Խնդրում եմ Պ. Գեղամ, որ մի ունկնդրութիւն յաջողեցնէք ինձ համար ձեր կոմիտէտի մօտ:

ԳԵՂԱՄ.— Ինչո՞ւ համար:

ՆԱՀԱՊԵՏ.— Ոտեղիք ունիմ ձեր ընկերների հետ:

ՎԱՀԱՆ.— Զօրքի եւ դաշնակների՝ մասին:

ՆԱՀԱՊԵՏ.— Թէ՛ դրանց և թէ՛ ուրիշ հարցերի մա-սին:

ՎԱՀԱՆ.— Հայրիկ, մեր կոմիտէտը ժամանակ չու-նի նման հարցերով զբաղուելու:

ՆԱՀԱՊԵՏ.— Քո կարծիքը քեզ համար պահիր: Ես

Պ. Գեղամի հետ եմ խօսում:

Գեղ.ԱՄ.— Ձերտեղ, թէ ո՞րքան յարմար կը լինի, բայց եւ այնպէս ես կը յայտնեմ ձեր ցանկութիւնը ընկերներին:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ եմ խնդրում:

Տ Ե Ս Ի Լ 8.

ՆՐԱՆԻ ԵՒ ԱՇԽԷՆ

ԱՇԽԷՆ (Մտնելով աջ դռնից).— Հայրիկ. սուրճդ սեղանին վրայ է, կ'ուզե՞ս այստեղ բերեմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, Աշխէն ջան, արդէն բաւական ժամանակ խլիցի մեր երիտասարդներէից: Մի քիչ էլ յոգնած եմ: (Գնդաւրին) Յուսում եմ, որ խնդրու չէք մոռանալ: Դէ, ինձ ներեցէ՛ք: (Ելնում է աջ դռնով):

ԱՇԽԷՆ.— Մի բան որոշեցի՞ք ընկ. Արտակի մասին:

Գեղ.ԱՄ.— Արդէն կոմիտէտի որոշումով նա այս շաբաթ պէտք է մեկնի Պետրոպոլս: Եթէ Աշոտը կարողա՜նար մի քանի օր եւս նրան պատսպարել...

Զանգահարութիւն

ՎԱՀԱՆ.— Սպասեցէ՛ք մի վայրկեան (Մտնում է նախասենեակ):

ԱՇԽԷՆ.— Պետրոպոլսից հեռագիր չստացուե՞ց:

Գեղ.ԱՄ.— Ո՛չ:

ԱՇԽԷՆ.— Բայց այս առաւօտ ասում էին, թէ հեռագրական հաղորդակցութիւնը վերականգնած է...

ՎԱՀԱՆ (Նախասենեակում).— Բարեւ: Հէնց նոր քո մասին էինք խօսում: Լաւ ժամանակին հասար:

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՐԱՆԻ ԵՒ ԱՇՈՏ

ԱՇՈՏ (Մտնելով նախասենեակից Վահանին հետ միասին).— Ի՞նչ կայ որ:

ՎԱՀԱՆ.— Ընկ. Արտակի տեղափոխութեան խըն-

դիրը...

ԱՇՈՏ.— Այդ գործն արդէն կարգադրուած է: Հէնց "ը մուտքն ընկնի" կը տեղափոխենք:

ՎԱՀԱՆ.— Եթէ միայն մինչեւ այդ քո ընկերները կողմից մի վատութիւն չլինի...

ԱՇՈՏ (Խոստիկ).— Դու ինձնից լաւ գիտես, Վահան, որ իմ ընկերները վատութեան ընդունակ չեն:

Գեղ.ԱՄ (Վահանին քեւը փաշելով).— Վահանը այսպէս է խօսում երեւի նկատի ունենալով. որ ձեր ընկերները շատ են գրգռուած ձեր դէմ՝ ընկ. Արտակին պահելու համար:

ԱՇՈՏ (Յուզուած).— Հազար անգամ էլ որ աւելի գրգռուած լինեն՝ նրանք իրենց թոյլ չեն տալ վատութիւն անել մի յեղափոխականի:

ԱՇԽԷՆ.— Վահանը միշտ այն տրամար կարծիքին է, թէ կուսակցական հակառակութիւնը...

Գեղ.ԱՄ (Ընդհատելով).— Լաւ, թողնենք այդ: (Աշոտին) Ուրեմն կարող ենք կատարելապէս ապահով լինել Արտակի մասին:

ԱՇՈՏ.— Կատարելապէս:

Գեղ.ԱՄ.— Դէ, ընկ. Վահան, հիմա կարող ենք գընալ:

ՎԱՀԱՆ.— Դնանք:

Գեղ.ԱՄ (Աշոտին եւ Աշխէնին).— Առայժմ ցը: (Մըտնում է նախասենեակ Վահանի հետ):

ԱՇՈՏ.— Աշխէն, Արտակին դու պէտք է ուղեկցես իր նոր թագստոցը:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս:

ԱՇՈՏ.— Ինքզիք կը ծառայես անձանաչիլի գաղնալու աստիճան, Արտակին էլ կը հագցնես մայրիկիդ հին զգեստներէից մէկը եւ այդպիսով միասին կը գնաք ուր կ'ասեմ: Ես, մի երկու ընկերներ ի հետ, հետեւից կը հետեւիմ ձեզ:

ԱՇԽԷՆ.— Շատ լաւ:

ՆՐԱՆԻՔ ԵՒ ԱՆԱՀԻՑ

ԱՆԱՀԻՑ (Մանկողնի ձախ դռնից՝ կարի շապիկը ձեռքին)։
— Բարեւ, Աշոտ (Աշոտին)։ Վահանը գնաց։

ԱՇԽԷՆ.— Այո՛ւ։

ԱՆԱՀԻՑ.— Վա՛յ անպիտան, չսպասեց էլ որ շապիկը ստանայ։ (Աշոտին) Ի՞նչ էր պատահել։ Շատ տաք-տաք էիք խօսում մեր երիտասարդների հետ։

ԱՇԽԷՆ.— Ձգիտե՞ս, որ նորընծայ յեղափոխականները տաք-գլուխ են լինում։

ԱՇԽԷՆ.— Նորընծա՞ս որն է. Վահանը արդէն չորրորդ տարին է մեր կուսակցութեան մէջ, իսկ Գեղամը աւելի եւս հին ընկեր է։

ԱՇԽԷՆ.— Չորս եւ աւելի տարիները բաւական երկար ժամանակ է, որպէսզի դրանք մի քիչ խելքի գային, բայց, ի՞նչ օգուտ։

ԱՇԽԷՆ.— Խելքի չգալը դու երեւի այն ես համարում, որ մարդիկ հեշտութեամբ չեն փոխում իրենց համոզմունքները։

ԱՆԱՀԻՑ (Ծիծաղով)։— Գիտե՞ս, Աշոտ, Աշխէնը քեզ ահնարելում. նա ասում է, թէ դու լքել ես քո սոցիալական համոզմունքները։

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՛ս թէ լքել եմ։

ԱՆԱՀԻՑ.— Ա՛յ, իրեն հարցրու։

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ պիտի ինձ հարցնի. ինքն էլ գիտէ որ այդպէս է։

ԱՇԽԷՆ.— Այսինքն՝ որ ես լքե՞լ եմ էմ սոցիալական համոզմունքները։

ԱՇԽԷՆ.— Այո՛ւ։

ԱՇԽԷՆ (Խնդրով)։— «Ո՛վ սուրբ միամտութիւն»։

ԱՇԽԷՆ.— Ուղում ես ասել, թէ քո երէկի եւ այսօրուան մէջ ոչ մի փոփոխութիւն չկա՞յ։

ԱՇԽԷՆ.— Մի փոփոխութիւն յամենայն դէպս կայ։ Նա այդ անձն է, որ այսօր ես յստակօրէն տեսնում եմ,

թէ մեր երկրի եւ ժողովրդի դժնդակ պայմանները ի՞նչ ահռելի դժուարութիւններ են ստեղծում ուղղաձիգ դասակարգային պայքարի և ընդհանրապէս սոցիալիստական գործունէութեան համար։ Մինչդեռ երէկ, երբ ես էլ քեզ պէս, Վահանի պէս եւ ձեր միւս ընկերների պէս վերացական հասկացողութիւն միայն ունէի հայ ժողովուրդի եւ նրա հայրենիքի մասին . . .

Զանգահարութիւն

ԱՇԽԷՆ (Մտնում է նահասենեակ։ Նահասենեակում)։— Բարեւ, Պ. Վարդան. Նորի՞ց ժողով։

ՍԻՐԱՔ (Նահասենեակում)։— Ձէ, Աշխէն ջան։ Բայց մի փոքր գործ ունենք։

ԱՆԱՀԻՑ, ԱՇԽԷՆ, ՍԻՐԱՔ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՍԻՐԱՔ (Մտնելով նահասենեակից)։— Օհօ՛, Աշոտն էլ այստեղ է։ Այդ լաւ է։ Դու էլ կ'օգնես մեզ, որպէսզի այսօրուան գրութիւնները շուտով աւարտենք։ Իսկ դո՛ւ ինչ բանի ես, Ահա՛հիտ։ Դեռ չվերջացրի՞ր այդ անպիտանի շապիկը։

ԱՆԱՀԻՑ.— Իսկի էլ անպիտան չէ։ Դու ես անպիտանը, որ ամբողջ օրը երեսդ չեմ տեսնում։

ՍԻՐԱՔ (Ծիծաղով ակնարկելով Վարդանին եւ Աշոտին)։— Սրանց ձեռքն ընկնողի մէջ հալ կը մնա՞յ, որ կնոջ կամ ընտանիքի մասին մտածի։

ՎԱՐԴԱՆ (Խնդրով)։— Իսկ քո ձեռքն ընկնողը, կարծեմ, կին կամ ընտանիք ունենալու երազն էլ կը մոռանայ։

ԱՇԽԷՆ (Ծիծաղով)։— Դու դեռ այդ երազներովն ես, ընկ. Վարդան։

ՎԱՐԴԱՆ.— Հապա կարծում ես թէ քեզ պէս մտադիր եմ վանակա՞ն դառնալ։ Մի քիչ էլ սպասի՛ր, տես թէ ի՞նչ առօք-փառօք հարսանիք եմ սարքելու, հէնց որ Ար-

ձէշը Հայաստանի մայրաքաղաք դարձաւ . . .

ՍԻՐԱՔ.— Լաւ, թողնենք կատակները եւ սկսինք մեր գործին: (Նստում ե գրասեղանի առաջ եւ քղեր հանում դարակից) Անահիտ ջան, մեզ համար թէյ պատրաստե՛ս: ԱՆԱՀԻՏ (Ոսկի ելնելով).— Ինչո՞ւ չէ:

Հանգստորոտքին

ՍԻՐԱՔ (Անահիտին) Մի տես ո՞վ է: (Անահիտը մտնում ե նստասենեակ):

Տ Ե Ս Ի Լ 12.

ՆՐԱՆՔ ԵՒ ՄՈՒՇԵՂ.

ԱՆԱՀԻՏ (Մուշեղի յետիւց մտնելով եւ շփոթուած).— Բայց ի՞նչ է պատահել, ընկ. Մուշեղ:

ՄՈՒՇԵՂ (Շնչահաս ընկնելով բազմոցի վրայ).— Էլ ի՞նչ պէտք է պատահի: Պետք դարձում բոլեւիկեան յեղաշրջում է տեղի ունեցել: Իշխանութիւնն անցել է Լենինի և Տրոցկի ձեռքը: Բաղաքացիական կռիւներ են սկսուած Պետք դարձել շուրջը, Մոսկուայում եւ ուրիշ տեղեր:

ՍԻՐԱՔ (Այրայրուած).— Յետո՞յ:

ՄՈՒՇԵՂ.— Յեղաշրջման լուրը ստացւում է կէսօրից քիչ անց: Միաժամանակ ընկում է բոլեւիկեան կենտրոնական կոմիտէի գաղտնագիր հեռագիրը այստեղի շրջանային կոմիտէին, որով հրահանգւում է անմիջապէս ասպետամբուլեան դրօշ բարձրացնել անդրկովկասեան խորհուրդների գէտ, եթէ սրանք ենթարկուելու չլինեն Պետք դարձելի ուղղապատրոններին: Այս հանգամանքն աչքի բռնում է նախ ձեռքակալի այստեղի ակաւաւոր բոլեւիկներին, եւ ապա հրապարակել յեղաշրջման լուրը:

ԱՇՈՏ.— Ձեռքակալութիւններն արդէն սկսուած են:

ՄՈՒՇԵՂ.— Այո՛: Պալատի լուսամուտից տեսայ, որ մի քանի ոռւս ե վրացի բոլեւիկներ, միլիցիոնէրներով շրջապատուած, բերին:

Տ Ե Ս Ի Լ 13.

ՆՐԱՆՔ, ՎԱՀԱՆԸ ԵՒ ԳԵՂԱՄԸ

ՎԱՀԱՆ (Դուռը շոնդալից թանաքով եւ խիստ զրգռուած).— Սիրա՛ք, սա պարզ դաւաճանութիւն է: Պահանջում եմ, որ անմիջապէս արձակել տաս ընկ. Արտակին:

ԱՇՈՏ.— Ի՞նչ . . . (Նստում ե նստասենեակ):

ՍԻՐԱՔ (Զարմացած).— Ի՞նչ է պատահել:

ԳԵՂԱՄ (Գրգռուած).— Դուք շատ լաւ գիտէք, թէ ի՞նչ է պատահել: Սակայն յայտարարում եմ ձեզ, որ եթէ նրա գլխից մի մազ պակսի՝ դուք ձեր ամբողջ գլխով պա՛տասխանատու կը ճանաչուէք մեր կոմիտէի առաջ:

ՄՈՒՇԵՂ (Գոռալով՝ Գեղամին).— Լռի՛ր, ցնդած սրիկայ:

Տ Ե Ս Ի Լ 14.

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՇԽԵՆ

ԱՇԽԵՆ (Մտնելով աջ դռնից).— Այս ի՞նչ աղմուկ է:

ՎԱՀԱՆ (Գոռալով՝ Մուշեղին).— Ցնդածը եւ սրիկաները դուք էք՝ որ պնակալիդութիւն էք անում մենչեւիկներին մօտ:

ՄՈՒՇԵՂ (Կստաղած).— Ի՞նչ ասացի՞ր . . . (Յարձակում ե վահանի վրայ):

ԱՆԱՀԻՏ (Մուշեղի առաջը կտրելով).— Ընկ. Մուշեղ, ի սէր Աստուծոյ . . .

ՎԱՐԴԱՆ (Վահանին).— Փառք տուր Աստուծուն, որ քո հօր յարկի տակ ենք գտնուում, թէ չէ . . .

ԳԵՂԱՄ.— Թէ չէ ձեր մաուղերխտներին մէյդան կը հանէիք, այնպէս չէ՞:

ԱՇԽԵՆ.— Բայց վերջապէս ի՞նչ է պատահել:

ՎԱՀԱՆ.— Այն է պատահել, որ այս պարոնները մատնել են ընկ. Արտակին մենչեւիկ դահիճներին ձեռքը:

ԱՇԽԵՆ (Գլուխն առնելով ափերի մէջ եւ ընկնելով բազմոցի վրայ).— Ա՛ . . .

ԱՆԱՀԻՏ (Թողնելով Մուշեղին՝ նստում ե Աշխենի մօտ).

— Աշխէ՛ն, հողիս, քեզ պահիր: Ի՞նչ մատնութիւն, ի՞նչ դահիճ, յիմարութիւններ են խօսում: (Շփում է Աշխէնի քունքերը):

ՍԻՐԱՔ (Շտապելով Աշխէնի մօտ).— Դու էլ այս խելագարների խելքովն ես ընկել:

Տ Ե Ս Ի Լ 15.

ՆՐԱՆՔ, ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՄԱԳԹԱՂ

ՄԱԳԹԱՂ (Մտնելով նախասենեակից՝ գնումների պայուսակը ձեռքին).— Այս ի՞նչ խաբար է:

ՎԱՀԱՆ (Սիրափին).— Ի հարկէ մենք խելագարներ ենք, որ ձեր ստորութիւնները ձեր երեսին ենք դարկում:

ՍԻՐԱՔ (Իրենից երած).— Լո՛ւի՛ր, անզգամ, թէ չէ այդ անպատկառ լեզուդ արմատից կը հանեմ: (Յարձակւում է Վահանի վրայ):

ԳԵՂԱՄ (Ձեռք բարձրացրած դիմելով դեպի Սիրափը).— Ապա՛ մի փորձեցէ՛ք:

ԱՆԱՀԻՏ (Թիկունքից գրկելով Սիրափին եւ հեռացնելով Վահանից).— Սիրա՛ք, խենթացա՞ր, ի՞նչ է:

ՄՈՒՇԵՂ (Նոյն միջոցին բռնելով Գեղամի կոկորդից).— Դո՛ւքս այստեղից, սրիկա՛յ:

ՎԱՀԱՆ (Ազատելով Գեղամին Մուշեղի ձեռքից).— Գնա՛նք, ընկ. Գեղամ: Մենք սրանց հաշիւը կը տեսնենք:

ՆԱՀԱՊԵՏ (Որ միկնէ հիւս, հողաքաղով եւ առանց օձիփի, փառացած կանգնած էր աջ դրան շեմին, առաջանում է դեպի բնիկները եւ խօսքը ուղղում Մագթաղին).— Այս ի՞նչ է կատարում մեր հին տանը...

Վ Ա Ր Ա Դ Ո Յ Ր

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Բեմը ներկայացնում է փոքրիկ պարտէզ՝ մի բանի ծառերով, որոնցից ամենախոտոր գտնում է բեմի կենտրոնում: Ծառերի արանքում ծաղկոցներ եւ կանաչ:

Պարտէզի ձախ կողմը երկարկանի մի փոքրիկ սան ճառագ՝ մոտֆի դռնով եւ լուսամուտներով: Այլ կողմը մի պատ՝ որից դուռ է բացում դեպի փողոցը: Խորքում դաշտային մի պէյզաձ, որի վրայ ցցւած են զոյգ Մասիսները:

Բեմի կենտրոնում, խոտը ծառի սակ, մի սեղան՝ ծածկուած սփռոցով: Չորս կողմը արոններ: Պարտէզի այս եւ այն կողմը հաս—հաս նստաբաններ:

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՆԱՀԻՏ ԵՒ ԱՇԽԷՆ

Վարագոյր բացուելու պահին Անահիթը, նստած սեղանի մօտ, առ խառնում է ձեռագործի վրայ, իսկ Աշխէնը նստած մօտը, նայում է քերթին:

ԱՇԽԷՆ.— Ուրիշ ի՞նչ է գրում Սիրափը:

ԱՆԱՀԻՏ.— Գրում է, որ շատ յոգնած է եւ ամէն կերպ պիտի աշխատի մինչեւ ամսոյս վերջը այստեղ լիւնել:

ԱՇԽԷՆ.— Յետո՞յ:

ԱՆԱՀԻՏ.— Յետոյ էլ՝ որ շատ է կարօտցել Բրիտանիկին:

ԱՇԽԷՆ (Ժպտալով).— Մենակ Բրիտանիկին:

ԱՆԱՀԻՏ (Ժպտալով զուխը բարձրացնում է).— Էհ, մի

քիչ էլ ինձ և մեղ ամէնքիս:

ԱՇԽԷՆ (Վշտացածի պես).— Ես այդ ամէնքի մէջ

չկամ, ի հարկէ:

ԱՆԱՀԻՏ.— Ինչպէ՞ս թէ չկաս, Աշխէն: Ինքդ էլ գիտես, որ Սիրաքը քեզ շատ է սիրում: Մանաւանդ Վահանի անհետանալուց յետոյ, նկատել եմ, որ նա մի առանձին քնքշանք է տածում դէպի քեզ:

ԱՇԽԷՆ.— Եթէ այդպէս լինէր՝ թող չէր տայ, որ ինձ հեռացնեն պաշտօնից:

ԱՆԱՀԻՏ.— Բայց մի մոռնար, Աշխէն, թէ դա ինչ պայմանների մէջ կատարուեց: Ամէն կողմը բռնակեան շարժումներ: Արեւմտեան դռնը, Կարսը, Սարիղամիշը, Նոր Բայազետը ապստամբներ ձեռքին: Այստեղ էլ խլրտումներ դռքի մէջ: Նման պայմաններում, ո՞ր կուսակցութիւն կը հանդուրժէր, որ իր հակառակորդները մնային պետական ծառայութեան մէջ՝ մանաւանդ որ նրանցից շատերի դաւադրական աշխատանքները յայտնի էին ամէնքին:

ԱՇԽԷՆ.— Ես կուսակցութեան մասին չեմ խօսում, այլ Սիրաքի մասին: Նա լաւ գիտէր, որ ես մասնակից չէի այդ շարժումներին:

ԱՆԱՀԻՏ.— Գիտէր, ի հարկէ, բայց եթէ նա այն ժամանակուան ընդհանուր գրգռութեան մէջ ուղեւոր բացառութիւն անել իր քրոջ համար, չէ՞ որ դա շատ անտակտ բան կը լինէր: Չեւ մոռացել անշուշտ, թէ այդ օրում Սիրաքի մեղմ քաղաքականութեան դէմ: Վերջապէս պաշտօնից ստացածդ ի՞նչ էր, որ սրտիդ դարդ ես չինել:

ԱՇԽԷՆ.— Մեծ բան չէր, ի հարկէ, բայց էլի մի բան էր: Եթէ ես իմ ոռճիկից չզրկուէի՝ մեր ամուսնութեան խնդիրը արդէն կարգադրուած կը լինէր:

ԱՆԱՀԻՏ.— Եթէ բանը այդ ողորմելի ոռճիկի վրայ է մնացել՝ Սիրաքը հաճոյքով կը հայթայթի քո տարեկան ոռճիկի չափ մի գումար, որպէսզի...

ԱՇԽԷՆ.— Ինչե՞ր ես ասում Անահիտ, Արտակը ոչ մի պայմանով չի համաձայնի դրան: Նոյնիսկ ես չեմ հա-

ԱՆԱՀԻՏ.— Շատ բարի: Մենք Սիրաքին էլ չենք դիմի (Հանկոյլ մասից մասնին) Վերցրո՞ւ այս մատանին և քո բանդ տես: Սրանից յամենայն դէպս աւելի դրամ կը ստացուի, քան քո երկու տարուան պաշտօնավարութիւնից:

ԱՇԽԷՆ.— Ձէ, թող մնայ: Գուցէ յաջողուի մի կերպ կարգադրել այս գործը:

ԱՆԱՀԻՏ.— Ինչպէ՞ս թէ մի կերպ:

ԱՇԽԷՆ.— Չգիտեմ: Արտակը որոշ ճրագիրներ ունի,

տեսնենք:

ԱՆԱՀԻՏ.— Դու ինձ լսի՛ր եւ վերցրու այս մատանին (Չորով դնում ե Այսկեմի մասը): Յոյսդ որ Արտակի վրայ դնես՝ շատ երկար պիտի սպասես:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ:

ԱՆԱՀԻՏ.— Արդէն մի ամիսից աւելի է, ինչ նա Հայաստանում է գտնւում, և այսքան գործերի մէջ չկարողացաւ մի բան յարմարեցնել իրեն համար: Աշոտն իրաւունք ունի, երբ ասում է, թէ Արտակի պէս անգործնակա՞ն մարդ գոռար է երեւակայել:

ԱՇԽԷՆ.— Ինքը շատ է գործնական:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ համեմատութիւն:

ԱՇԽԷՆ.— Լա՛ւ, դու էլ շատ մի գովի քո Աշոտին: Եթէ գործնական լինէր, մինչև հիմա մի բան արած կը լինէր՝ Վահանին բերել տալու համար: Մանաւանդ որ Սիրաքն այնքան խնդրեց նրան այդ մասին՝ Ձանդեղուր մեկնելուց առաջ:

ԱՆԱՀԻՏ.— Բայց ի՞նչ կարող է անել Աշոտը, երբ ոչ Վահանի ուր լինելն է յայտնի, ոչ էլ նրա ողջ կամ մեռած լինելը:

ԱՇԽԷՆ.— Ախ, ի՞նչ լաւ կը լինէր, այս գործը յաջողուէր: Խեղճ մայրիկը շատ է տառապում նրա կարօտից:

Տ Ե Ս Ի Լ 2.
ՆՐԱՆԻՔ ԵՒ ԱՐՏԱԿ

ԱՐՏԱԿ (Մաներով փողոցի դռնից).— Բարեւ ձեզ:
ԱՆԱՀԻՏ (Խնդրումով՝ Արտակին).— Վերջապէ՛ս: Դի-
տէ՞ք ինչ. եթէ ես Աշխէնի տեղը լինէի՝ փայտը կ'առնէի
և ձեզ կը խոկէի աշտեղից:
ԱՐՏԱԿ (Ժպտալով).— Ինչո՞ւ:
ԱՆԱՀԻՏ.— Մարդ այսքան երկար իր նշանածին
սպասել կը տա՞յ:
ԱՐՏԱԿ.— Ի՞նչ անենք մեղաւորներս, երբ ձեր այս
ընդարձակ հանրապետութեան մէջ չենք կարողանում
գլուխ դնելու տեղ գտնել:
ԱՆԱՀԻՏ.— Կարծեմ ձեր հանրապետութեան մէջ ա-
ւելի ևս դժուար է գլուխ դնելու տեղ գտնել, թէեւ նա
մի քանի հարիւր անգամ աւելի ընդարձակ է, քան մերը:
ԱՐՏԱԿ.— Ճիշդ էք ասում, այնտեղ էլ մի բան չէ:
Բայց խկապէս, հոգիս բերանս ելաւ, մինչեւ կարողացայ
մի սենեակ գտնել:
ԱՇԽԷՆ (Ուրախ).— Դտա՞ր, ո՞ւր:
ԱՐՏԱԿ.— Աբովեան փողոցի վրայ, Թեւոսեանի տան
երկրորդ յարկում:
ԱՇԽԷՆ.— Լա՞ւ սենեակ է:
ԱՐՏԱԿ.— Ինձ համար շատ լաւ է: Չգիտեմ քեզ
ինչպէս դուր կը գայ: Կ'ուզե՞ս, գնանք տեսնենք:
ԱՇԽԷՆ.— Լա՞ւ:
ԱՆԱՀԻՏ (Ոսփի ելնելով).— Ուրեմն, բարով վայելէք
ձեր նոր սենեակը (Շարժում է դեպի տան դուռ):
ԱՐՏԱԿ.— Ո՞ւր այդպէս:
ԱՆԱՀԻՏ (Ծիծաղով).— Դուք գիտէք, որ ես չեմ սի-
րում պահակութիւն անել սիրահարներին մօտ: (Ելնում է
տան դուռը):
ԱՐՏԱԿ (Աշխէնին).— Այս ի՞նչ երախայութիւն է:
ԱՇԽԷՆ.— Կատակ է անում: Ձեռագործի թելը հա-
տել էր, դրա համար գնաց: Դու այն ասա, տեսա՞ր Աշու-

տին:

ԱՐՏԱԿ.— Այո՛, նրա մօտից եմ գալիս:
ԱՇԽԷՆ.— Ի՞նչ էր կանչել:
ԱՐՏԱԿ.— Ինձ պաշտօն են առարջարկում պետա-
կան վերահսկողութեան մէջ:
ԱՇԽԷՆ.— Ի՞նչ է պատահել այդպէս յանկարծ:
ԱՐՏԱԿ.— Տրամադրութիւնները մեր հանդէպ հիմա
բաւական մեղմացած են: Երևի Աշոտի և Անահիտի միջ-
նորդութիւններն էլ որոշ դեր կատարել են:
ԱՇԽԷՆ (Ուրախ).— Տեսնում եմ, որ այսօր ուրախ
լուրերի պաշարով ես եկել ինձ մօտ:
ԱՐՏԱԿ.— Չէ, Աշխէն, կան նաև մտահոգիչ լուրեր:
ԱՇԽԷՆ.— Ի՞նչ:
ԱՐՏԱԿ (Չայնր ցածցնելով).— Այսօր Բագուից սուր-
հանդակ եկաւ: Երկու շաբաթ առաջ, մերոնք մեծ ուժեր
են զրկել Ղարաբաղ եւ Չանգեղուր:
ԱՇԽԷՆ.— Յետո՞յ:
ԱՐՏԱԿ.— Ուղարկուած զօրամասերի մէջ, քաղա-
քական կոմիտար է նշանակուած մեր վահանը:
ԱՇԽԷՆ (Ուրախ).— Ի՞նչ ես ասում, Աբտակ: Հէնց
քիչ առաջ, նրան Հայաստան բերել տալու մասին էինք
խօսում Անահիտի հետ: Իսկ նա իր ոտքովն է գալիս:
ԱՐՏԱԿ.— Այո՛, բայց եթէ նա եկաւ այս կողմերը՝
Հայաստանի անժամանակ խորհրդայնացման կողմնակից-
ները նորից պիտի գլուխ բարձրացնեն:
ԱՇԽԷՆ.— Ձեմ կարծում: Կոմիտէտն այնքա՞ն յըս-
տակ եւ վճռական որոշում ունի դրա դէմ:
ԱՐՏԱԿ.— Այս տարուան յունուարի կոնֆերենցիան
էլ յստակ որոշում ունէր: Բայց ինքդ էլ տեսար, թէ մեր
ձախակողմեանները ի՞նչ ձախլիկ զաւեշտ խաղացին Ալեք-
սանդրապոլում եւ ուրիշ տեղեր: Հին, փորձուած ընկեր-
ւանդրապոլում եւ ուրիշ տեղեր սկսուած կազմակերպա-
ների այնքա՞ն յաջողութեամբ սկսուած աւերակների կոյտի
կան աշխատանքը մի քանի օրում աւերակների երեսից...
Վերածուեց այդ տխմարների երեսից...
ԱՇԽԷՆ.— Այնուամենայնիւ շատ եմ ուզում, որ

երկու քայլ մնաց:

ՆԱՀԱՊԵՏ.— Հիմա որ երեւան ունենք, էլ Արճէ՞ն ինչացու է:

ՎԱՐԴԱՆ.— Երեւանը ժամանակաւոր բան է: Մեր մայրաքաղաքն Արճէ՛նը պիտի դառնայ, որպէսզի նրա հրաշալի տեսարաններից ամբողջ աշխարհի բերնի ջուրը վազի:

ՄԱԳԹԱՂ.— Դուք այն ասացէք, ո՞ւր էիք այս չորս հինգ ամիսը:

ՎԱՐԴԱՆ.— Մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեցի դէպի Պոլիս, Միջագետք եւ Կիլիկիա՝ մեր գաղթականներին այցելելու և Հայաստանի Հանրապետութեան ողջոյնները հաղորդելու համար:

ՆԱՀԱՊԵՏ (Անահիթին եւ Մաքրադին).— Այնպէս է խօսում, կարծես Խորում-Բուլախ* է գնացել զբօսանքի համար (Վարդանին) է՛, ի՞նչ վիճակի մէջ գտար մեր այդ գաղթական ժողովուրդը:

ՎԱՐԴԱՆ.— Նիւթապէս բաւական վատ: Իմ տարած դրամական օգնութիւնը կաթիլ էր նրանց ծով կարիքների մէջ: Բայց ի՞նչ խանդավառութիւն, ի՞նչ ոգեւորութիւն: Կարծես կոտորածի և տառադրութեան աղէտը նրանց գլխով անցած չլինի: Ամէնքն էլ օրեր են համբում հայրենիք գալու համար:

ՆԱՀԱՊԵՏ (Երզնայի).— «Մենք եղբայրների ունինք հեռու տեղերում», (Խնդրով) Կարծեմ այսպէս էիք երգում, չէ՞: Դէհ, Անահիտ ջան, այս գեղեցիկ երգի վրայ, խնդրեմ անցիր ներս և — հոգեպահուստ երեք շիշ գարեջուր է մնացել Աւետեանի նուէրից — բե՛ր խմենք:

ԱՆԱՀԻՏ (Ոսֆի եղևորով).— Այս ընդէիս (Երզնայի եւ Երզնայի).

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանին).— Հիմա պատմեցէք տեսնենք, թէ էլ ուրիշ ի՞նչ է գրում Սիրաքը ձեր ընկերների

*) Պարսկ-գրաստան Երեւանի մօտ, Զանգու գետի ափին.

բիւն:

ՄԱԳԹԱՂ.— Դուք է՞լ նամակ ունիք Սիրաքից:

ՎԱՐԴԱՆ.— Այո՛, այս առաւօտ սուրհանդակ եկաւ: (Նահապետին). Դրում է, թէ զանգեղուցիք սաստիկ զղջում են, որ զոհ են գնացել այդ բախտախնդիրների լուսեղանի յուրանների: Ձերբակալուածների ցուցմունքներից երեւում է, որ նրանց հաւատացրած են եղել, թէ ոչ միայն երեւանում, այլ եւ Թիֆլիսում Խորհրդային իշխանութիւն է հաստատուած:

ՆԱՀԱՊԵՏ.— Արեւնհեղութիւններ հօ չե՞ն եղեր:

ՎԱՐԴԱՆ.— Դրեթէ ոչ. միայն մի երկու վերաւորներ կան:

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՐԱՆԻՔ ԵՒ ԱՆԱՀԻՏ

Անահիթը բերում է մի սկսեցի վրայ երեք շիշ գարեջուր եւ երեք գաւաթ: Դնում է սեղանի վրայ եւ ձեռագործ ձեռք առնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ ուրախալի է, որ ամէն ինչ յաջող է վերջացել: Դրա վրայ արժէ մի գաւաթ պարպել: Շատ ընտիր տեսակիցն է: Վետցելի* գարեջրից յետ չէ մնում: (Էջնում է Վարդանի եւ իր գաւաթները) Մագթա՛ղ, դու էլ կ'ուզե՞ս:

ՄԱԳԹԱՂ.— Դիտես, որ ինձ խմիչքն արգելւած է:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ դո՞ւ, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ.— Շնորհակալ եմ, հայրիկ, ես գարեջուր չեմ խմում:

ՆԱՀԱՊԵՏ.— Մեղքը ձեր վրա: Դէ, Պ. Վարդան, ձեր կենացը, Բարբ, հազար բարի եկաք: Աստուծով, վաղը՝

միւս օրը Սիրաքն էլ կը գայ, եւ մի լաւ քէֆ կ'անենք:

ՄԱԳԹԱՂ (Սյեւր երկինք յառելով).— Լսող կատարող լինի:

*) Յայտնի գարեջրագործ Թիֆլիզում:

ՆԱՀԱՊԵՏ (Գաւաթը ցած դնելով).— Օխա՛յ, սիրտս հովացաւ: Բայց եթէ ես ձեր տեղը լինէի, Պ. Վարդան, կը գրէի Սիրաքին, որ ներող ընթացք բռնի ձերբակալուածներին հանդէպ:

ՎԱՐԴԱՆ.— Ես բնաւ համաձայն չեմ ձեր մտքին, Պ. Նահապետեան: Այդ անպիտանների հանդէպ որքան զիջող եղանք, այնքան նրանք երես առան: Պէտք է մի անգամ ընդմիջտ մաքրել երկիրը նրանցից:

ՆԱՀԱՊԵՏ.— Մաքրելը ո՞րն է: Կոտորել:

ՎԱՐԴԱՆ.— Ինչո՞ւ կոտորել:

ՆԱՀԱՊԵՏ (Ծիծաղով).— Որովհետեւ մաքրելը Դաշնակցականների բերնում մի քիչ այլ նշանակութիւն ունի:

ՎԱՐԴԱՆ (Ծիծաղով).— Ո՛չ, այս դէպքում խկական մտքով եմ ասում մաքրել:

ՆԱՀԱՊԵՏ.— Այսինքն:

ՎԱՐԴԱՆ.— Այսինքն աքսորել բոլշեւիկներին Հայաստանից:

ՆԱՀԱՊԵՏ.— Սխալ էք դատում, Պ. Վարդան: Դուրսը նրանք աւելի վտանգաւոր կը լինեն: Նրանց պէտք է կապած պահել երկրի հողին: Երկրի հողը, Պ. Վարդան, անշունչ տարերք է. նա կենդանի էակ է, որ ունի իր տրամագրութիւնները եւ իր հրամայական պահանջները: Նրա վրայ ապրողը վաղ թէ ուշ պիտի ենթարկուի այդ պահանջներին:

ԱՆԱՀԻՏ.— Ես էլ այդպէս եմ կարծում, ընկ. Վարդան: Ընկ. Աշոտն էլ, գիտէք արդէն, բոլշեւիկի պէս մի բան էր. բայց մի քանի տարի վաճի, էրզրումի եւ Մուշի կողմերը թափառելով՝ բոլորովին փոխւեց: Խորապէս համոզուած եմ, որ եթէ մեր վահանն էլ այստեղ լինէր եւ իր աչքով տեսնէր, թէ մեր երկիրն ինչպէ՛ս է յարուած թիւն առնում աւերակների միջից, նա հիմա բոլորովին այլ երգ կ'երգէր հայրենիքի մասին:

ՄԱԳԹԱՂ.— Ա՛խ, վահան ջան, վահան, ո՛ւր մնացիր, ի՞նչ եղար, զաւակա... (Այֆերը սրբում է):

ՆԱՀԱՊԵՏ (Տխուրեամբ).— Դո՛նէ կարողանայէ՛ք մի լուր առնել, գոնէ իմանայինք, որ ողջ է:

ԱՆԱՀԻՏ.— Ինչե՛ր ես ասում, հայրիկ: Ի հարկէ ողջ է: Մէկ էլ տեսար՝ յանկարծ լոյս ընկաւ: Այս վերջին ամիսներին անսպասելիօրէն ինչքա՛ն մարդիկ եկան Ռուսաստանից, Լեւոնիկայից, Բուլղարիայից, Ռումանիայից, Եգիպտոսից եւ մինչեւ անգամ Հունգարիայից եւ Հնդկաստանից: Սոսի ո՞վ կարող էր մտածել, թէ հայրենիք մի օր կը քաշէ այս մարդկանց դէպի իրեն:

ՆԱՀԱՊԵՏ (Լցնելով իր եւ վարդանի գաւաթները).— Որ այդպէս է, այս մէկ գաւաթն էլ խմենք մեր կորած մոլորած վահանի կենացը: Տա՛յ Աստուած, որ նա արժանանայ հայրենիքի տեսութեանը, մենք էլ արժանանանք իր տեսութեանը: (Խմում է):

ՄԱԳԹԱՂ.— Ամէ՛ն: (Ոսֆի կընկնում եւ վարդանին) Ինձ ներեցէք մի բուլէ (Ելնում է ասն ողնով):

ՎԱՐԴԱՆ.— Խնդրեմ, խնդրեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Գաւաթը ցած դնելով).— Ճիշդ է ասում Անահիտը: Հայրենիքի ձգողական ուժը շա՛տ մեծ է: Սրանում համոզուելու համար, պէտք է տեսնել այն անհուն հրճուանքը, որ ցոյց են տալիս ամէն օր եկող զաղթականական կարաւանները՝ գնացքից իջնելիս: Բայց որպէս զի այս ձգողական ոյժն աւելի եւս մեծնայ, պէտք է օր-առօր վերաշինել երկիրը եւ հրապուրել զարձնել:

ՎԱՐԴԱՆ.— Իմ կարծիքով, մենք այսօր մեր բոլոր վանդակ ուժերը պէտք է կենտրոնացնենք բացառապէս հայահալ արդէն պարտի վրայ: Իսկ սրա համար, ոչ թէ երկրի յահաւաքման գործի վրայ: Իսկ սրա համար, ոչ թէ երկրի վերաշինութեանը պէտք է նուիրուենք, որ երկար ժամանակի է կարօտում, այլ պէտք է ընդարձակենք երկրի սահմանները, որպէսզի Պոլսից, Միջագետքից եւ այլ վայրերից սպասուող զաղթականութեան համար տեղ բացուի:

ՆԱՀԱՊԵՏ (Ժպտալով եւ խորհրդաւոր).— Կարծեմ բաւական տեղ արդէն բացուած է, Պ. Վարդան:

ՎԱՐԴԱՆ.— Այո՛, բայց ոչ անհրաժեշտ չափով:

ՆԱՀԱՊԵՏ.— Տեսա՛նք, էլ ի՞նչ ես սեղում, երկու

տարի առաջ մենք կծկուած էինք Սեւանայ լճի շուրջը, իսկ հիմա Սարիղամիշից մինչեւ Ղարաբաղ մեր ձեռքն է։ Տե՛ղ ես ուզում գաղթականների համար. ահա քեզ Զանգիբա՛սարը, Վեդիբասարը, Շարուրը, Կարադոյունլուն և մինչեւ անգամ Զարիշատն ու Աղբարան, որոնք ամբողջովին կամ մեծ մասամբ մաքրուած են հակապետական տարրերից։

ՎԱՐԴԱՆ.— Իսկ Տաճկահայաստանը։

ՆԱՀԱՊԵՏ (Ծանրախոհ).— Տաճկահայաստանի խընդերը շատ լուրջ է, Պ. Վարդան։ Այդ խնդիրը լուծելու համար, դեռ պէտք է աւարտուի մի նախապատրաստական աշխատանք, որ սկսուած է արդէն և շատ յաջող կերպով։

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ նախապատրաստական աշխատանքի մասին է ձեր խօսքը։

ՆԱՀԱՊԵՏ (Ծոցից հանելով մի հստ օրար մեջը լիբր քոթերով).— Ա՛յ, սրա մասին։

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ բան է դա։

ՆԱՀԱՊԵՏ.— Ահա մէկ-մէկ ցոյց տամ ձեզ՝ թէ ի՞նչ բան է։ (Իրար յետեւից քոթեր հանելով) Այս մէկը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակն է։ Այս մէկը Անկուսակցականների Միութեան յայտարարութիւնն է։ Այս մէկը Հայ Ռամկավար Կուսակցութեան, կամ ինչպէս դուք կ'ասէիք, մէկը ձեր ատած ուսանայ բուրժուաներից հազմուած Հայ ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի յայտարարութիւնն է։ Այս մէկը Հայ Սոցիալ Դեմոկրատներին Կուսակցութեան թուղթիկն է։ Այս մէկն ալ Սոցիալ-Լիստ-Յեղափոխականների Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան յայտարարութիւնն է։

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ թղթեր են դրանք։

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչ թղթեր են դրանք, այլ մի-մի յուշարձաններ այն սրտառուէ համերաշխութեան, որ ցոյց տուին հայ ժողովրդի բոլոր հոսանքները՝ մայիսեան ապստամբութիւնների առթիւ՝ Հայաստանի կառավարութիւնը պաշտպանելու գործում, թէեւ այդ կառավարութիւնը կազմուած էր միմիայն ձեր կուսակցութեան

անդամներից։

ՎԱՐԴԱՆ.— Բայց ես չեմ հասկանում...

ՆԱՀԱՊԵՏ (Յափշտկուած).— Սպասէ՛ք մի քովէ, այս մէկը պէտք է կարգամ, որպէսզի գաղափար կազմէք միևնույնի մասին։ (Նայում է մի քոթի) Բայց աչքերու չեն ջուկում։ Ակնոցներս էլ չգիտեմ ո՛ւր եմ թողել (Որոնում է)։ Վնաս չունի։ Անահիտ, դո՛ւ կարգաւ։ Ա՛յ այստեղից սկսիր։

ԱՆԱՀԻՏ (Կարդում է).— «Թող հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդում տայ կազմ ու պատրաստ պաշտպանելու Հայաստանի անկախութիւնը բոլոր թշնամիների դէմ — ո՛վ, ո՛ր կողմից եւ ի՞նչ անուան տակ ուզում են, թող լինեն նրանք, իսկ դու, հայ ժողովուրդ, մի սիրտ, մի հոգի դարձած, պէտք է քո օյժն ու աջակցութիւնը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարութեանը՝ անշեղօքէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում»։ Ստորագրած են Հայ ժողովրդական կուսակցութեան Հայաստանի Կենտրոնական Կոմիտէ, Սոցիալ-Դեմոկրատ Բանուորական Կուսակցութեան Երեսանի կոմիտէ, Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Պարհուրդ, Անկուսակցականների Միութեան վարչութիւն։

ՆԱՀԱՊԵՏ (Թողքը առնելով Անահիտից եւ խօսքն ողորդելով Վարդանին).— Կ'ուզէ՞ք որ շարունակեմ։ Դեռ այսպիսի թղթեր շատ կան այս օրհնեալ ծրարում։

ՎԱՐԴԱՆ.— Բայց ես չեմ հասկանում, թէ ձեր այդ ժողովածուն ի՞նչ կապ ունի մեր վէճի հետ։

ՆԱՀԱՊԵՏ.— Ձե՛ք որ Տաճկահայաստանի գրաւման նախապատրաստութիւնների մասին էինք խօսում։

ՎԱՐԴԱՆ (Կիսահեղեակաւ).— Ի՞րա՞նք են նախապատրաստութիւնները։

ՆԱՀԱՊԵՏ (Բարձր տոնով).— Այո՛, այս է նախապատրաստութիւնը, Պ. Վարդան և ամենից առաջ այս։ Ապա պատրաստութիւնը, Պ. Վարդան և ամենից առաջ այս։ Տաճկահայաստանի գրաւումը ազգի բովանդակ ճիգով միայն կարող է գլուխ գալ։ Այդ գործին ձեռնարկելէ առաջ, պէտք է ազգի մէջ գտնուող բոլոր հատուածները, հոսանքները եւ ուժերը իրար բերել։ Դուք տեսնում էք,

որ հայրենիքն արդէն դաւլի չափով մերձեցրել է նրանց: Պէտք է այս մերձեցումը միութիւն դարձնել և այդ միութեանն էլ մասնակից անել հայ բոլշևիկներին:

ՎԱՐԴԱՆ.— Յետո՞յ:

ՆԱՀԱՊԵՏ.— Յետոյ՝ երբ այս եղաւ՝ թէ՛ Տաճկահայաստանի խնդիրը եւ թէ՛ մեր միւս գոտւարին խնդիրները լուծելը խաղ ու պար կը դառնան մեզ համար. հասկանում էք Պ. Վարդան, խաղ ու պար:

ՎԱՐԴԱՆ.— (Ուսերը քօթուելով).— Երանի ձեր համբերութեանը:

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆԻ ԵՒ ԱՇՈՏ

ԱՇՈՏ (Մտնելով փողոցի դռնից).— Օհօ, դուք արդէն իրար գտել էք: Բարեւ ձեզ: (Բարեւում ե նահապետին և Անահիթին):

ՆԱՀԱՊԵՏ.— Գտնելն էլ խօսք է: Ձեր մէջ մի հատիկ չէնքով-չորհքով մարդ կար, նրան էլ շատ տեսաք ինձ համար եւ հեռացրիք այստեղից: Մի ժամից աւելի է հետը խօսում եմ եւ չեմ կշտանում:

ԱՆԱՀԻՏ (Աշոտին).— Հայրիկն ուղղում է ասել, թէ ընկ. Վարդանի հետ վիճելուց չէ կշտանում: Հէնց որ իրար տեսան...

ԱՇՈՏ (Անահիթին).— Սպասէք, հիմա ես խաղաղութիւն կը հաստատեմ դրանց մէջ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ընդհակառակը, հէնց դու էիր մեզ պակասում՝ վէճը վերսկսելու համար:

ԱՇՈՏ.— Ինչպէ՞ս թէ:

ՆԱՀԱՊԵՏ.— Եղբայր, դու եւ ընկերներդ առաւօտից մինչեւ երեկոյ այս ու այն կողմն էք վազվզում, վե՛ է, թէ վերաշինական գործերը համար, իսկ քո այս ընկերը պնդում կաններով այս հերթական հակասութիւնը ինչպէ՞ս բացատրենք:

ԱՇՈՏ.— Պէտք է բացատրէք նրանով, որ ընկ. Վարդանի ականջներն այնպէս են դժգոհում Սարգսրաբադի, Ղարաքիլիսէի, Զօդի եւ Նախիջևանի կոիւններից, որ նա մուրճի ու զնդանի մեղեդիների քաղցրութիւնը չէ զգում:

ՎԱՐԴԱՆ.— Բեզնից էլ լաւ եմ զգում այդ քաղցրութիւնը: Դու ո՞ւր էիր, երբ ես մուրճի ու զնդանի հետ գիշերներ էի լուսացնում Պարսկաստանի մեր զինանոցներում:

ԱՇՈՏ.— Հապա ինչի՞ մասին է վէճը:

ՎԱՐԴԱՆ.— Վէճը նրա մասին է, թէ մենք առաջին հերթին ինչո՞վ պէտք է զբաղուենք. մեր սահմանների ընդարձակումով, թէ՞ մեր ձեռքը գտնուած գաւառների բարեշինութեամբ:

ԱՇՈՏ.— Երկուսն էլ առաջին հերթին զբոլած խընդիւրներ են:

ՎԱՐԴԱՆ (Կասկախաւորն հեղմանով).— Լաւ կը լինէր, որ մեր վսեմաշուք նախարարները չարհամարհէին ժողովրդական իմաստութիւնը, որ ասում է.

«Եթէ երկու որսի հետքից ընկնի մեծակ մի քաղի՝
Ոչ մէկին էլ նա չի հասնի, որքան արագ էլ վազի»:

ԱՇՈՏ.— Համոզուելու համար, որ քո բանաստեղծական համեմատութիւնը տեղին չէ, բարեհաճիր վաղը անցընելու իմ գրասենեակը:

ՎԱՐԴԱՆ.— Գամ ի՞նչ անեմ:

ԱՇՈՏ.— Ես քեզ համար կը կազմակերպեմ մի արշաւ դէպի գօրական, ներքին գործերի, գիւղատնտեսական, հաղորդակցութեան, ֆինանսների եւ կրթական գործերի նախարարութիւնները, որպէսզի դու քո բարի աչքերով տեսնես, թէ այս վերջին 4-5 ամիսների ընթացքին, Հանրապետութեան սահմանների ընդարձակման հետ միասին, բազմաթիւ սահմանների ընթացքն է կատարուել ի՞նչ ահագին վերաշինական աշխատանք է կատարուել մեր պետական և հանրային կեանքի բոլոր մարզերի մէջ:

ԱՆԱՀԻՏ.— Եւ միայն նախարարութիւնները չեն կոտորուել աշխատանքի. լծուած, ընկ. Վարդան, հապա

նաեւ հանրային կազմակերպութիւնները: Մօտիկից տեղեակ եմ մի քանի կանացի ընկերութիւններէ գործունէութեանը, ինչպէս, օրինակ, «Երևանի Հայուհեաց Միութիւնը», «Վասպուրականի Կանանց Միութիւնը», «Մանկապարտէզ» ընկերութիւնը եւն.: Ձէք կարող երեւակայել, թէ խնամատարութեան եւ բարեկարգութեան մարզերէ մէջ, ինչքան արժէքաւոր գործ են կատարում սրանք:

ԱՇՈՏ (Անահիթիսին).— Ինչո՞ւ ես մոռանում յիշատակել նաև Հայաստանի Գրական, Տեխնիքական, Իրաւաբանական, Բժշկական, Հրատարակչական, Զօրա-Տնտեսական, Մարմնամարզական եւ միւս ընկերութիւններէ վերաշինական աշխատանքները:

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանիսին).— Այս աշխատանքների անհրաժեշտութիւնը ըմբռնելու համար, ես ձեզ խորհուրդ կը տամ, Պ. Վարդան, որ մի քանի շաբաթ չըջագայէք մեր գիւղերը: Անցեալ ամիս, մասնակցելով Հնութեանց Պահպանման Կոմիտէի կազմակերպած արշաւին՝ այցելեցի բազմաթիւ գիւղեր և աւաններ: Գիտէ՞ք, աչքով տեսնելուց յետոյ էլ, դժուար է հաւատալ, որ մի ջարդուած ու քայքայուած ժողովուրդ, ընդամենը մի տարում, կարող է այս աստիճանի շտկել իր մէջքը: (Լցնելով զաւարները) Ձէ, այս խօսքի վրայ պէտք է խմենք մեր ժողովրդի կենացը: մեր սքանչելի ժողովրդի, որ լերկ ժայռերն էլ չէնութիւն կը դարձնի, եթէ միայն իրեն չխանգարեն: Կեցցէ՛ մեր ժողովուրդը (Խնոււմ է):

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Դրան խօսք չունիմ ի հարկէ: (Խնոււմ է):

ԱՇՈՏ.— Գալով մեր վերաշինական նախագծումներին՝ վաղը, եթէ կ'ուզես, ես քեզ կը ծանօթացնեմ Բաթում-Կարս-Սարգարաբադ երկաթուղագծի ծրագրին, որ արդէն հաստատուած է նախարարական խորհրդի կողմից, կը ծանօթացնեմ Գլխաւոր Ճարտարապետի Վարչութեան մշակած գործաբանական յատակագծերին, կը ծանօթացնեմ այն նախապատրաստական աշխատանքներին, որ կատարւում է Հայաստանի ջրային ուժերը եւ հանքային հարըս-

տութիւնները շահագործելու համար, եւ մենք կը տեսնենք, թէ դու սրանցից ո՞րն ես աւելի ստորագաս համարում քան ուրիշ այլ գործ:

ՎԱՐԴԱՆ.— Լա՛ւ, հերիք է ինձ լեզուախորով անէք: Կարծէք՝ լեռներից իջած քրդի պէս՝ ոչ չինարարութեան մասին գաղափար ունիմ եւ ոչ էլ նրա կարեւորութեան մասին:

ՆԱՀԱՊԵՏ.— Դիտենք, որ գաղափար ունիք, Պ. Վարդան: Մեր ուղածը այն է միայն, որ մեզ պէս հրճուէք և հպարտանաք՝ տեսնելով թէ Հայոց Աշխարհը ի՞նչ կորովով եւ ինչքան փայլուն հեռանկարներով է վերածնուում աւելի բարձր միջից: (Լցնելով զաւարները) Դէ, այս մի գաւաթըն էլ պարպենք մեր Հայոց Աշխարհի, մեր սիրուն հայրենիքի կենացը:

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Դրան էլ խօսք չունիմ (Խնոււմ է):

Տ Ե Ս Ի Լ Տ.

Ն. ԲԱՆԵՔ ՍԻ ՍՈՒՐՀԱՆԳԱՆԸ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Մենելով փողոցի դռնից և շտապով դուրս գալով Աշոտին).— Պ. Նախարար, վարչապետի գրասենեակից հիմա ստացուեց այս շտապողական ծրագրը: Պատուիրուած է անմիջապէս հասցնել ձեզ:

ԱՇՈՏ (Շտապով քանալով).— Ի՞նչ պէտք է լինի (Այլի անցնելուց յետոյ՝ Սուրհանդակին) Դուք կարող էք գլխաւոր (Սուրհանդակը ելնոււմ է փողոցի դռնով) Վերջապէս... (Ոսֆի է ելնոււմ):

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ է այդ...

ՆԱՀԱՊԵՏ.— Կարելի՞ է հարցնել...

ԱՇՈՏ (Ուրախ).— Հաշտութեան դաշինքը ստորագրուել է:

ՆԱՀԱՊԵՏ (Անհամար).— Յետո՞յ:

ԱՇՈՏ.— Յետոյ ինքներդ կարդացէք եւ տեսէք (Մեկնում է քուլքը Նահապետին):

ԱՆԱՀԻՏ.— Տուէք ես կարգամ: Հայրիկն ակնոցները կորցրել է: (Առնում է քողարկ Աշոտի ձեռքից եւ կարդում). «Պարոն վարչապետի կարգադրութեամբ, պատիւ ունինք յայտնելու ձեզ, որ համաձայն Փարիզի Պատուիրակութեան պաշտօնական հաղորդագրութեան, ամսոյս 10-ին, ցերեկ ուան ժամը 4-ին, Սեւրում կնքուած է հաշտութեան դաշնագիր Հայաստանի Պատուիրակութեան մասնակցութեամբ: Դաշնագրի գլխաւոր կէտերն են. առաջին՝ Թուրքիան յայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը, ինչպէս այդ արել են արդէն Դաշնակից պետութիւնները, իբրեւ ազատ ու անկախ պետութիւն: Երկրորդ՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանագիծը պիտի անցնի Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի եւ Վանի վերայէն: Երրորդ՝ Վերսալի իրաւարարութեամբ:

Այս առթիւ Պ. վարչապետը հրաւիրում է ձեզ անմիջապէս գալ նախարարական խորհուրդին»:

ԱՇՈՏ (Նահապետիկ).— Հիմա տեսա՞ք: Դէ, ընկ. վարդան, վե՛ր կաց: Պէտք է մի քանի անհրաժեշտ կարգադրութիւններ անել: Եւ, ամենից առաջ, պէտք է հեռագրել Սիրաքին: Ցտեսութիւն: (Շտապում է դիմել փողոցի դուռը):

ՎԱՐԴԱՆ (Շտապելով Աշոտի յետեւից).— Ցտեսութիւն, Պ. Նահապետեան:

ՆԱՀԱՊԵՏ (Շշնածի պէս, շարժուելով դեպի գնացողները).— Սպասե՛ք... Ի՞նչ եղաւ ձեզ... Լսեցէ՛ք ինչ եմ ասում:

ՎԱՐԴԱՆ (Կանգ առնելով, Աշոտի հետ միասին դրան շեմքի).— Ի՞նչ է:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձեր գործերը վերջացնելուց յետոյ, ձեր ցանկացած ընկերներին էլ հետներդ առնելով՝ եկէ՛ք այստեղ: Ես այս ծառի տակ ձեզ այնպիսի քէֆ տամ, այնպիսի քէֆ...

ՎԱՐԴԱՆ (Ծիծաղով).— Շատ բարի, Պ. Նահապետեան (Երևում է Աշոտի յետեւից):

ՆԱՀԱՊԵՏ (Ձղարկելով).— Անահիտ, պէտք է պատ-

րաստութիւն տեսնել: Առնուաղն քսանհինգ հոգու պատրաստութիւն (Կանչում է քարձր ձայնով) Մազթա՛ղ, Մազթաղ...

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՄԱԳԹԱՂ.

ՄԱԳԹԱՂ. (Ելնելով հան դռնից՝ իջ վախեցած).— Ի՞նչ խաբար է:

ՆԱՀԱՊԵՏ (Յափշտակաբար մեջ).— Արի այստեղ, Մազթաղ ջան, արի:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ է պատահել ա՛յ մարդ:

ՆԱՀԱՊԵՏ.— Մայրիկ, Սեւրում հաշտութեան դաշնագիր է կնքուել Տաճկաստանի հետ: Միացեալ եւ անկախ Հայաստանի պահանջն ընդունուած է:

ՄԱԳԹԱՂ. (Դեռ եւս շքմած).— Ինչե՞ք էք ասում, բան չեմ հասկանում:

ՆԱՀԱՊԵՏ (Մի ձեռքով գրկելով Մազթաղի մեջքը եւ յափշտակաբար մեջ).— Այո՛, սիրելիս, հայ ժողովրդի դաւաճող երազը իրականանում է: Ի՞նչ երջանկութիւն, Մազթա՛ղ, որ մենք ապրեցինք մինչեւ այս օրը...

ՄԱԳԹԱՂ.— Սա երա՞զ է, ի՞նչ է:

ՆԱՀԱՊԵՏ (Յափշտակաբար մեջ).— Ինչո՞ւ Յեսու Նաւիայի զօրութիւնը չու՛նիմ, որ ընդմիշտ կանգնեցնեմ այս չքնաղ արեգակը Հայոց Աշխարհի երկնակամարի վերայ...

Տ Ե Ս Ի Լ 10.

ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ԱՐՏԱԿ.

ԱՐՏԱԿ (Շտապով ներս մտնելով փողոցի դռնից եւ դուռը կողպելով հեռ ի հեռ գալիս է եւ ընկնում մի արքոյի վրայ: Կցկտւում եւ շնչահեղձ ձայնով).— Աշտոն այստեղ չէ՞:

ՆԱՀԱՊԵՏ (Շտապով նրան մօտենալով).— Ոչ, ի՞նչ կայ

որ:

ԱՐՏԱԿ.— Հապա ասացին...

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ է պատահել, Արտակ:

ԱՐՏԱԿ.— Ոչինչ չեմ հասկանում...

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչը չես հասկանում:

ԱՐՏԱԿ.— Մի ժամից ի վեր, ինձ փնտռում են ա՜մէն կողմ: Տակնավրայ են արել տանտիկնոջս բնակարանը, եղել են բոլոր ծանօթներին մօտ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վքեր:

ԱՐՏԱԿ.— Դաշնակցական մառզեղիստները:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ էք ասում, Արտակ: Աշտը եւ ընկ. վարդանը ընդամէնը մի քանի բոլակ առաջ մեզ մօտ էին: Այդպիսի բան որ լինէր... Թիւրիմացութեան մէջ էք:

ԱՐՏԱԿ.— Ոչ մի թիւրիմացութիւն չկայ: Կոմիտէ-տի անդամներն են եղել: Ասել են, որ ուր էլ ինձ գտնեն՝ տեղն ու տեղը պիտի գնդակահարեն:

ՄԱԳԹԱՂ.— Բայց, ի՞նչ է պատահել, վերջապէս:

ԱՐՏԱԿ.— Ոչինչ չեմ կարողանում հասկանալ: Երկու ժամ չկայ, որ ինձ պաշտօն էին առաջարկում, իսկ հիմա հալածում են իբրեւ որսի գաղան: Ինչպէ՞ս հասկանամ:

Պարսկի դուռը ծեծում են ուժգին:

ՆԱՀԱՊԵՏ (Շտապով).— Մագթա՛ղ, Անահիտ, տարէք Արտակին մառանը եւ թաղցրէք ղէնքի մեծ արկղում, մինչեւ որ տեսնենք, թէ սա ի՞նչ բան է:

Մագթաղն ու Անահիտը Արտակին հետ շտապով ելնում են քան դուռնով, իսկ Նահապետը գնում բանում է փողոցի դուռը:

Տ Ե Ո Ւ 1. 11.

ՆԱՀԱՊԵՏ, ՄՈՒՇԵՂ, ԵՒ ԵՐԵՈՒ ԶԻՆՈՒԱԾ ԵՐԵՍԱՍԱՐԳՆԵՐ

ՄՈՒՇԵՂ (Այլապրում դեմով եւ հեկարով).— Պ. Նահապետեան, ցոյց տուէ՛ք, թէ ո՞ւր է Արտակը:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ Արտակ:

ՄՈՒՇԵՂ.— Այն բուռնիկ Արտակը, որ շարունակ

պտտում է Օր. Աշխէնի հետ:

ՆԱՀԱՊԵՏ (Շփոթում).— Այստեղ Արտակ չկայ:

ՄՈՒՇԵՂ (Գոռալով).— Ինչպէ՞ս թէ չկայ: Ես ինքս տեսայ, որ յետեւի այգու ճանապարհով վազում էր դէպի ձեր տան կողմը:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ՛, մեր տունը չէ մտել: Ինքներդ տեսա՛ք, որ դուռը կողպած էր: Բայց ի՞նչ է պատահել:

ՄՈՒՇԵՂ (Գրգռում).— Պ. Նահապետեան, հերիք են այդ խաղերը: Օգտուելով ձեր որդու բացակայութիւնից, դուք ձեր տունը բուռնիկեան դաւադրութիւնների բոյն էք դարձրել: Վայել չէ դա ձեզ:

ՆԱՀԱՊԵՏ (Չայնր թարմացնելով).— Ի՞նչ, խելագար ուե՞լ էք, ինչ է, Պ. Մուշեղ:

ՄՈՒՇԵՂ (Խիստ գրգռում).— Խելագարը դուք էք: Պատմած ձերուկ, որ ձեր շողոքորթ միջնորդութիւններից արգելք հանդիսացա՛ք, որ ես այդ դաւաճանների ծուրով արգելք հանդիսացա՛ք, որ ես այդ դաւողները ձեր խը մարէի: Բազումից շարունակ մեր դէմ դաւողները ձեր վայրկյա՛ծ սրկականքն են: (Չարախեղ) Սակայն ոչինչ, հիմա կը հանգստանա՛ք...

ՆԱՀԱՊԵՏ (Վախեցած).— Բայց ի՞նչ է պատահել, վերջապէս:

ՄՈՒՇԵՂ (Նեկերով Նահապետի առաջ մի հեռախօսա-գիր).— Կարդացէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ (Վերցնելով քուլքը եւ որոնելով գրասնկերը).— Այդ անտէր ակնոցները...

ՄՈՒՇԵՂ (Խիչով հեռախօսագիրը Նահապետի դուռը դնելով).— Տուէ՛ք ինձ: (Կարդում է) Հեռախօսագիրը Քեչիշ-ձեղից).— Տուէ՛ք ինձ: (Կարդում է) Հայաստանի կենտր. Կոմիտէին այս բոլակի քեչից. "Հ. Յ. Դ. Հայաստանի կենտր. Կոմիտէի կողմ հասած սուբհանդակ մեզ յայտնեց Գորիսի կոմիտէի տեղա հասած սուբհանդակ մեր ջանգեղութիւնը վերջին կոմիտէի ժահետեւեալ երկտողը. " Ջանգեղութիւնը սպանուած մեր մանակ, գերի է ընկած եւ գաղանաբար սպանութիւնը սքանչելի ընկեր Սիրաք Նահապետեանը: Սպանութիւնը սքանչելի ընկեր Սիրաքի հարազատ եղբօր, տխրահռչակ չեկատարուած է Սիրաքի հարազատ եղբօր, տխրահռչակ չեկատարուած է Սիրաքի հարազատ եղբօր եւ նրա ներկայութեամբ" Հ. Յ. կիստ վահանի հրամանով եւ նրա ներկայութեամբ" Հ. Յ.

Դաշնակցութեան Բեռնիքներէ կոմիտէ" (Նահապետեանին)
Ահա՛ թէ ինչ է պատահել:

ՆԱ.ՀԱ.ՊԵՏ (Իրեն կորցրած).— Ինչպէ՛ս... Ինչպէ՛ս թէ
Սիրաքը... Վահան... սպաննութի՞ւն... (Մռչելով) Ինչ ա-
սացի՞ր. մի նորից կարգա՛:

Մռչելով տեսնելով իր ֆայլի սոսկալի ազդեցութիւնը՝ ակ-
նարկով կարգադրում է, որ իր ուղեկիցները դուրս գան փողոցի
դռնով եւ իե՛մ ել, ընկճուած, ընկրկելով եղևում է նրանց ետե-
ւից:

ՆԱ.ՀԱ.ՊԵՏ (Մռչելով՝ նրա եղևելու վայրկեանին).— Ըս-
պասի՛ր... Ի՞նչ եղաւ այդ թուղթը (Որոնում է)... Ի՞նչ էր
գրած... (Դառնում է դէպի սան դուռը, ոգում է Մագրադ
պողալ, բայց ձեռքով փակում է բերանը, խածնում բթմասի
արևսը եւ դառնալով դէպի սեղանը՝ յենում ծառի) Ուրեմն
այդպէ՛ս... Ուրեմն Վահանը Սիրաքի՛ն... Սիրաքի՛ն հա,
հա, հա... (Ծիծաղը փոխում է լացի) Սիրա՛ք, Սիրա՛ք...
(Ընկնում է արողի վրայ եւ ուժգին հեկեկում: Պահ մի ապշա-
հար շոթիւնից յետոյ): Կայէ՛ն, Կայէ՛ն, ո՞ւր է եղբայրդ...

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.

ՉՈՐՐՈՐԴ ՄԵՆՐ

Բեմը ներկայացնում է մեծ ընդունարան:

Խորհի պաթից դուռ՝ դէպի նախասենեակ: Զախ պաթից՝ խորում՝
դուռ դէպի նահապետի սենեակը: Այ պաթից՝ նախաբեմին մօտ՝ դուռ դե-
պի Արտակի եւ Աւետիսի սենեակները:

Դռների վրայ կարմիր վարագոյրներ:

«Պրոլետարական Կուլտուրայի» պահանջներին համապատասխան կա-
հառութիւն, կարմիր գոյնի գերակշռութեամբ: Նախաբեմի մօտ մի կլո-
բաւուն սեղան՝ շուրջը արթուներ:

Խորհի դրան վերելք կախուած է Լենինի մեծադիր պատկերը, աջ
պաթին՝ Մարքսի պատկերը, իսկ ձախ պաթին՝ սրբազան իւլյանկարը:

Տ Ե Ս Ի Լ 1.

Ա.ՆԱ.ՀԱՅ ՆԻ ԱՇԽԷՆ

Վարագոյրի բացւելու ժամանակ, Անահիթը՝ զլխարկով եւ վերա-
կումով, իսկ Աւետիսը՝ առաւօտեան զգեստով՝ նստած են նախաբեմի սեղանի
շուրջը:

Ա.ՆԱ.ՀԱՅ.— Զգիտե՞ս թէ հայրիկն ինչու համար է
կանչել ինձ:

ԱՇԽԷՆ.— Ոչ:

Ա.ՆԱ.ՀԱՅ.— Իսկ դու ինչո՞ւ ես այդպէս գունատ:

ԱՇԽԷՆ.— Արտակը գիշերը գործով դուրսն էր, ես
էլ չկարողացայ աչք փակել: Դու այստեղից ուղիղ կայա-
րա՞ն ես գնալու:

Ա.ՆԱ.ՀԱՅ.— Այո:

ԱՇԽԷՆ.— Հապա ինչո՞ւ երեխաներին տանը թո-
ղեցիք:

ԱՆԱՀԻՏ.— Քրիստիկը շատ պատառ-պատառ եղաւ հետս գալու համար։ Սակայն Սիմոնիկին մենակ ձգել չէր կարելի։

ԱՇԽԷՆ.— Ձեռ կարող երևակայել, Անահիտ, թէ ինչքա՞ն հմ կարօտցել Աշոտին։ Երեւի շա՛տ փոխուած կը լինի հիմա։

ԱՆԱՀԻՏ.— Այն էլ ինչպէ՞ս . . . Անցեալ տարի, երբ նրան վերջին անգամ այցելեցի Տաշկենտում՝ քիչ էր մնացել չճանաչէի. այնպէս էր մաշուել։

ԱՇԽԷՆ.— Ջարմանալի բան է։ Սամարղանդը, ուր մենք աքսորուած էինք, կլիմայական տեսակէտից գրեթէ նոյնն է, ինչ որ Տաշկենտը։ Բայց ո՛չ Արտակը և ո՛չ էլ ես մեզ առանձնապէս վատ չէինք զգում։

ԱՆԱՀԻՏ.— Ձեր բանն ուրիշ էր։ Դուք իբրեւ կոմունիստներ, պատուաւոր աքսորականներ էիք. բայց Աշոտը ենթակայ էր ամէն տեսակ նեղութիւնների եւ զըրկանքների։

ԱՇԽԷՆ (Փոփր ինչ մտածելուց ետոյ).— Գիտե՞ս ինչ, Անահիտ, ես երկիւղ եմ կրում, թէ Աշոտը, բանտի ու աքսորի դառնութիւններն էլ բարդելով իր հակաբոլշևիկեան տրամադրութիւնները վրայ՝ այստեղ այնպիսի գործերի մէջ նետուի, որոնք կարող են զրգուել մեր ընկերներին։ Նրա անակնկալ աղատուելը, առանց այդ էլ, շատ է կատաղեցրել Գեղամին և իր արբանեակներին։

ԱՆԱՀԻՏ.— Ինչո՞ւ անակնկալ։

ԱՇԽԷՆ.— Որովհետեւ Արտակը, չնայած իր բոլոր քանքերին. չկարողացաւ ապացուցանել, թէ Աշոտը դեր չէ ունեցել Սիրաքի սպանութեան առթիւ կատարուած տեւորների մէջ։

ԱՆԱՀԻՏ.— Հապա ինչպէ՞ս եղաւ, որ ամբիստիան Աշոտի վրայ ևս տարածուեց։

ԱՇԽԷՆ.— Դա եղաւ շնորհիւ Վահանի ազդու միջամտութեան։

ԱՆԱՀԻՏ (Վեր ցատկելով տեղից).— Ինչպէ՞ս։

ԱՇԽԷՆ (Բռնելով Անահիտի ձեռքը եւ աղերսական).— Ա-

նահի՛տ . . .

ԱՆԱՀԻՏ (կիսով գրգռուած).— Ոչ, այդ չի կարող լինել։ Աշոտը ոչ մի պայմանով չի հաշտուի այն մտքի հետ, որ մի եղբայրասպան եւ մի մայրասպան . . . (Այսինքն աչքերը ծածկում ե քաշկիմակով) Այո՛, այո՛, Աշխէ՛ն, դու շատ լաւ գիտես, որ մայրիկը Սիրաքի սպանութեան կըսկիծից մեռաւ . . .

ԱՇԽԷՆ (Արտասուելով).— Անահի՛տ, հո՛գիս, խնդրում եմ, հաւատա ինձ . . . Դու գիտես, թէ Սիրաքի մահն ինչպէս էր ազդել վրաս . . . Բայց հիմա . . . Ա՛խ, ինչպէ՞ս ասեմ, որ դու հասկանաս . . .

Ձախ դրան կողմից լսում ե նահապետի հազը եւ ոտնաձայնը։

ԱՇԽԷՆ (Սարսափած).— Հայրիկն է . . . Աղաչում եմ, Անահիտ, այս մասին ոչ մի խօսք նրա հետ . . . (Վազեղով երևում ե սը դռնից)։

Տ Ե Ս Ի Լ 2.

ԱՆԱՀԻՏ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնում ե ձախ դռնից, կիսով ծեւացած ե եւ երկար սպիտակ մօրուսով).— Դու արդէն այստեղ ես, հա՞։ (Բարեւում ե) Հապա ինչո՞ւ ես մենակ։

ԱՆԱՀԻՏ.— Աշխէ՛նը հիմա ելաւ։ Ինչո՞ւ էիք կանչել ինձ, հայրիկ։

ՆԱՀԱՊԵՏ.— Հետդ խօսելիք ունեմ։ Բայց դու գնաց քիչ չե՞ս ուշանայ։

ԱՆԱՀԻՏ.— Ոչ, դեռ մի քանի բոպէ ժամանակ կայ։

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ բարի։ (Ձայնը ցածցնելով) Արտասահմանից զրկուած ձեր ընկերը մեկնե՞ց արդէն։

ԱՆԱՀԻՏ.— Ոչ, հայրի՛կ, երբ լսեց, որ հեռագիր է ստացուած Աշոտի գալու մասին, յետաձգեց իր մեկնումը։

ՆԱՀԱՊԵՏ.— Կարո՞ղ եմ նրան մի կարճ յանձնարարութիւն անել։

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ ո՞ւր է:

ՆԱՀԱՊԵՏ.— Յանձնարարելը նրան իմ կողմից ասե-
լու պարոն Վարդանին եւ իր ընկերներին, որ հիմա աւելի
եւս չափաւորեն կամ նոյնիսկ խալառ դադարեցնեն իրենց
յարձակումները հայ բուլնիկներէ զէմ:

ԱՆԱՀԻՏ (Զարմացած).— Ի՞նչ ո՞ւր:

ՆԱՀԱՊԵՏ.— Որովհետեւ նրանց յարձակումները հի-
մա կարող են չիօթ առաջացնել մեր ժողովրդի մտածո-
ղութեան մէջ:

ԱՆԱՀԻՏ.— Ձեմ հասկանում քեզ, հայրի՛կ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչպէ՞ս չես հասկանում, աղջիկս: Շա-
բուհակ ինքդ ես ասում, թէ սրանք սկսել են հետեւել այն
ազգային-պետական քաղաքականութեանը, որ ձեր կու-
սակցութիւնն է պահանջում տարիներից ի վեր:

ԱՆԱՀԻՏ (Արհամարհանով).— Այո՛, սրանց մշտա-
կան արհեստն է եղել՝ գողանալ ուրիշների գաղափարները
և գլխատել սրանց հեղինակներին:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձեմ վիճում այդ մասին. բայց ներ-
կայ զէպրում, ես գողութիւնից բարձր մի բան եմ տես-
նում:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ բան:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես քեզ ասել եմ յաճախ, որ Հայաս-
տանի հողը հրամայական տրամադրութիւններ եւ պա-
հանջներ ունի, որոնց հարկադրաբար ենթարկւում են նրա
վրայ ապրողները: Արդ, հայ բուլնիկները, տարիների ըն-
թացքին ընտելանալով մեր հողին, սկսել են գիտակցել
նրա պահանջներին ենթարկուելու անխուսափելիութիւնը:
(Լռում է):

ԱՆԱՀԻՏ.— Էլ ուրիշ յանձնարարութիւն չունի՞ս,
հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ոչ, թո՛ղ ձեր ընկերը սրտագին բարե-
ներս յիշէ Վարդանին եւ միւսներին և ասի, որ ես նրանց
կարօտը չատ եմ զգում և ապրում եմ այն յուսով, որ մի
օր նրանց տեսնեմ աշատեղ, ամէնքիս հետ միասին, մեր
սիրուն հայրենիքի... (Յուզմունքից ձայնը կտրկերում է եւ

խօսքը մնում կիսաւարտ):

ԱՆԱՀԻՏ.— Մի՛ յուզուիր, հայրիկ, այդ օրն էլ կը
գայ:

ՆԱՀԱՊԵՏ (Սլփերը արեղով).— Անշուշտ կը գայ:
Պէ՛տք է որ գայ:

ԱՆԱՀԻՏ (Նայելով քեւի ժառանգոյցին).— Դէ, հայրիկ
ջան, ես պէտք է շտապեմ: Ի՞նչ ասեմ Աշոտին:

ՆԱՀԱՊԵՏ.— Կը համբուրես իմ կողմից նրա զոյգ
աչերը եւ կ'ասես, որ անհամբեր սպասում եմ իրեն՝ կըրկ-
նակի կարօտներս առնելու համար:

ԱՆԱՀԻՏ.— Իսկ ճաշի համար ինչպէ՞ս ենք անելու:

ՆԱՀԱՊԵՏ.— Աշոտի հետ միասին կը գաք ինձ կը
վերցնէք, եւ կ'երթանք ձեզ մօտ ճաշելու:

ԱՆԱՀԻՏ.— Շատ լաւ. այդպէս կ'անենք: (Ելնում է
նախասենեակ: Նախասենեակում).— Աչխէ՛ն, ես գնացի...

Հեռախօս

ՆԱՀԱՊԵՏ (Հեռախօսում է).— Այո՛... Այո՛...
Սպասեցէք մի րոպէ: (Դնում է ընկալուչը սեղանի վրայ եւ
նախասենեակի դռնից քարձաւայն կանչում) Աչխէ՛ն...

Տ Ե Ս Ի Լ 3.

ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ԱՇԽԷՆ

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ է հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Հեռախօս:

ԱՇԽԷՆ (Հեռախօսելով).— Այո՛... Այո՛... Սպա-
սուհին հիմա ղրկեցի... Շատ բարի... (Փակում է հե-
ռախօսը):

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վ էր:

ԱՇԽԷՆ.— Դպրոցից էին խօսում՝ երեխաների մա-
սին: Անահիտը ե՞րբ գնաց:

ՆԱՀԱՊԵՏ.— Քիչ առաջ: (Լռութիւն) Ի զուր ես էլ

չգնացի հետը՝ դիմաւորելու համար:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ ո՞ւր ես այդքան անհամբեր, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձգբեմ: Երէկուան հեռագրից ի վեր,

մի տեսակ անհանգստութիւն է եկել վրաս: Նոյն անհանգստութիւնը, որ, յիշում ես, ունէինք մի ժամանակ, երբ սպասում էինք Սիրաքի վերադարձին:

ԱՇԽԷՆ.— Չարմանալի է, հայրիկ, ես էլ նոյն ըզգացումն ունեմ: Կարծես թէ Սիրաք եղբայրն է վերադառնալու եւ ոչ թէ Աշոտը:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, միայն Աշոտը կարող էր մեզ համար Սիրաքի տեղը բռնել եւ, բարեբախտաբար, նա բռնեց: Բայց նա էլ բանտի եւ աքսորի երեսից մի կեանք չունեցաւ:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ արած, հայրիկ, դա շատերի ճակատագիրն էր: Մենք քիչ տառապանքների ենթարկուեցինք չարաբաստիկ «թեքումների» օրերին: Բանի՛ քանի՛ տարիներ լքուած ու քաղցած թափառում էինք քաղաքէ քաղաք: Վերջն էլ Թուրքիստանի աքսորը, որի ժամանակ քիչ էր մնացել Ստեփանիկը ձեռքէս գնար:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, տխուր օրեր էին ամէնքիս համար: Երանի էլ յետ չգան:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ ես կարծում, թէ կարող են յետ գալ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես ի՞նչ իմանամ: Մի օր այսպէս էք մի օր այնպէս:

ԱՇԽԷՆ.— Ձէ, հայրիկ, այս անգամուանը վերջնական է: «Ձախութեան» եւ «քեալլադէօղութեան» հիւանդութիւնների աղէտաբեր հետեւանքներն այնքա՛ն ակնեւբեւ են, որ Կոմիտասը ոչ մի պայմանով չի կարող թոյլ տալ նրանց կրկնութիւնը:

ՆԱՀԱՊԵՏ.— Տայ Աստուած:

Հեռախօս

ԱՇԽԷՆ (Հեռախօսելով).— Ալօ... Այո՛, ես եմ... Այո՛, այստեղ է... Սպասի՛ր հարցնեմ: (Նահապետին)

ՆԱՀԱՊԵՏ.— Ոչ:

ԱՇԽԷՆ (Հեռախօսելով).— Ալօ... Լսո՞ւմ ես... Այո՛... Հէնց հիմա՞ կը գաս... Բայց ես ինչպէ՞ս ասեմ...

Լա՛ւ: (Հեռախօսը փակում է եւ, Նահապետի փայ խորհրդաւոր հայեացքներ նետելով, դիմում իր տղային):

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վ էր:

ԱՇԽԷՆ.— Արտակն էր: Ասում էր, թէ քեզ հետ կաւրեւոր խօսելիք ունի:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց հիմա՞:

ԱՇԽԷՆ.— Այո՛:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ խօսելիք:

ԱՇԽԷՆ (ձիգ գործադրելով իր փայ).— Հայրիկ, մի բան պիտի յայտնեմ քեզ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ բան:

ԱՇԽԷՆ.— Վահանը եկել է:

ՆԱՀԱՊԵՏ (Այլայրուած).— Ի՞նչ վահան:

ԱՇԽԷՆ (Շփոքուած).— Վահանն էլի... Մեր վահանը...

ՆԱՀԱՊԵՏ (Խիստ շփոքուած).— Ինչպէ՞ս թէ...

ԱՇԽԷՆ.— Հապա՛, Համաժողովեցեալան լիազօր ներկայացուցի ժեղեցնովը, որի ժամանակ մասին գրուած է:

ՆԱՀԱՊԵՏ (Ձայնը բարձրացնելով).— Որտեղի՞ց գիտես:

ԱՇԽԷՆ.— Երէկ գիշեր, երբ դու պառկած էիր, Արտակը ստիպողաբար կանչեց ինձ հեռախօսով իր կարէնեւոր: Երբ ներս մտայ՝ ինձ համար ամէն ինչ պարզ եղաւ:

ՆԱՀԱՊԵՏ (Ձայնը բարձրացնելով).— Յետո՞յ:

ԱՇԽԷՆ.— Սաստիկ ցնցուած այս անակնկալից՝ ես չուարած կանգնել էի. բայց յետոյ, Արտակի ստիպողական ակնանկների տակ, մօտեցայ...

ՆԱՀԱՊԵՏ (Խիստ զրգռուած).— Դո՞ւ... Դու մօտեցար այդ Կայէնին...

ԱՇԽԷՆ (Ընկճուած).— Այո՛, հայրիկ, եւ ձեռքս էլ այնպէս երկա՛ր պահեց իր ափերի մէջ...

ՆԱՀԱՊԵՏ (Ձգուակով).— Ուզում ես ասել իր անբախտ ճանկերի մէջ... Խօսեցի՞ր հետը:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս չէ: Բայց, հայրիկ, նա այնպէ՛ս...

գունատ էր: Նրա աչքերն այնքան տխուր էին եւ զբո-
բախտութիւն էին արտայայտում . . .

ՆԱՀԱՊԵՏ (Չարախոսեմ).— Հարկաւ այդպէս պէտք
է լինի: Կայէնները ե՞րբ են ուրախ եւ բախտաւոր եղել . . .
Իսկ Արտա՞կը:

ԱՇԽԷՆ.— Արտակի երեսը դեռ չեմ տեսել: Կէս գի-
շերից բաւական անց էր, որ հեռախօսեց, թէ Վահանի
սենեակում պիտի գիշերի:

ՆԱՀԱՊԵՏ (Շշմա՜).— Սա ի՞նչ հանելուկ է: Արտա-
կը այդ Կայէնի հետ միեւնոյն սենեակում . . . Նա՛ որ
այնքան անդամադրելի պէզանք ունի բոլոր արիւնդուշտ
չեղիտներէր . . .

ԱՇԽԷՆ.— Վերջին ժամանակներս Արտակի վերա-
բերմունքը զգալիօրէն փոխուած է դէպի Վահանը:

ՆԱՀԱՊԵՏ.— Պատճա՞ռը:

ԱՇԽԷՆ.— Արտակի ասելով, Վահանը հիմա կատա-
րելապէս անճանաչելի է դարձել . . .

ՏԵՍԻՒ 4.

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՐՏԱԿ

ԱՐՏԱԿ.— Բարի լոյս ձեզ:

ՆԱՀԱՊԵՏ (Կշտախոսեմ՝ Արտակին).— Այդպէս, հա՞. . .

ԱՐՏԱԿ (Ժպտալով).— Երեւի հայրիկն արդէն գիտէ:

ՆԱՀԱՊԵՏ (Չորոքեալ).— Ես ոչինչ չգիտեմ:

ԱՐՏԱԿ.— Հայրի՛կ, խնդրում եմ հանդարտ լսիլ
ինձ, եւ քեզ համար ամէն ինչ պարզ կը լինի.— Այո՛,
Վահանն այստեղ է: Այս մասին առայժմ մի քանի մօտիկ
ընկերներ գիտեն, որովհետեւ նա կեղծանունով է եկել:

ՆԱՀԱՊԵՏ (Հեզմանով).— Իսկ դու ի՞նչ անունով
ճանաչեցիր եւ ընդունեցիր նրան:

ԱՐՏԱԿ.— Ես ճանաչեցի եւ ընդունեցի նրան իր
խական անունով: Եւ համոզուած եմ, հայրիկ, որ իմ
տեղս դու էլ այդպէս կը վարուէիր, եթէ իմանայիր, թէ
նա ի՞նչ անգնահատելի ծառայութիւններ է անում մեր
երկրին եւ ժողովրդին:

ՆԱՀԱՊԵՏ (Հեզմանով).— Զի՞ կարելի իմանալ, թէ
ի՞նչ ծառայութիւններ են դրանք:

ԱՐՏԱԿ.— Ինչո՞ւ չէ: Վահանի յամառ պնդումները
հետեւանքով էր, որ Մոսկուան հրահանգեց Անդրկովկաս-
եան Ֆեդերացիային՝ քննութեան դնել Խորհրդային Հա-
յաստանից անջատուած հայկական գաւառները մեր երկ-
րին միացնելու խնդիրը: Նրա ջանքերին ենք պարտական,
որ ներգաղթի խնդիրը այսքան մեծ ծաւալ ստացաւ: Յե-
տոյ՝ նրա միջնորդութիւնները շնորհիւ էր, որ դեռ մինչև
վերջին դեկրետների հրատարակութիւնը, մեր բամպակի,
պղնձի եւ միւս հանքերի արտադրութիւնը ազատուեց
Մոսկուայի ճանկերից, իսկ մեր լեռներն էլ ազատուեցին
Պրոստի քուրդներից: Բացի այս ամենից՝ եթէ Վահանը չը
դուր թուրդներէր: Բացի այս ամենից՝ եթէ Վահանը չը
լինէր՝ բանտից ու քսուրից չէին արձակուել Աշոտը եւ նրա
ընկերներէր շատերը, որոնք մեղադրուած լինելով տեղո-
րիստական գործերի մէջ՝ չէին կարող օգտուել ընդհանուր
ներումից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչի՞նչ է վերագրուում նրա այս ազդե-
ցութիւնը:

ԱՐՏԱԿ.— Այն հանգամանքին, որ Վահանը իրեւ-
անցեալ տարուայ յեղաշրջման ամենագլխաւոր գերակա-
տարներէր մէկը, ահագին հեղինակութիւն ունի Մոսկուա-
յում: Բայց ես այս մասին չէի ուզում խօսել քեզ հետ,
այլ մի ուրիշ բանի մասին:

ՆԱՀԱՊԵՏ (Խորատու գուած ինքն իր մէջ).— Խօսի՛ր տես-
նեմ:

ԱՐՏԱԿ.— Երէկ երեկոյ, Բաղդիւրոյի (Բաղաքական
Բիւրօ) նիստից յետոյ, երբ մենակ ֆուցինք, զգացի, որ
նա սոսկալի տանջուած է քո կարօտից: Հիւրանոց գնալու
պահին, այս տանջանքն այնքան տիրական դարձաւ նրա
մէջ, որ ես, վախենալով թէ մի բան կարող է պատահել,
մէջ, որ ես, վախենալով թէ մի բան կարող է պատահել,
ինձ մօտ կանչեցի Աշխէնին: Բայց սա էլ իր չորու-
թեամբ . . .

ԱՇԽԷՆ (Յուզուած).— Ի՞նչ անեմ, որ չեմ կարողա-
նում մոռանալ նրա . . . (Արցունքը սեղմում է կոկորդը):

ԱՐՏԱԿ.— Ինչպէս քանիցս քեզ ասել եմ, հաշուի առ, Աշխէն, այն այլասերող ազդեցութիւնները, որ պիտի թողնէին նրա պատանեկական հոգու վրայ քաղաքացիական կռուի սարսափները, Հաշուի առ, որ նրա կատարած ոճիւրը այն ժամանակները արտասովոր բան էր — եւ դու կը տեսնես, որ քո վերաբերմունքի մէջ շատ բան կը փոխուի Վահանի հանդէպ: (Լոռիքի): Ես համոզուած եմ, հայրիկ, որ եթէ դու տեսնես Վահանին այնպէս, ինչպէս որ նա է իր խորքի մէջ՝ սիրով կը բանաս գիրկդ նրա առաջ: Դրա համար էլ, առանց քո համաձայնութիւնն առնելու, նրան ասացի, որ դայ մեզ մօտ, որպէսզի դուք իրար հանդիպէք:

ԱՇԽԷՆ.— Ե՞րբ պիտի դայ:

ԱՐՏԱԿ.— Հիմա ուր որ է կը դայ:

ՆԱՀԱՊԵՏ (Ներքին պալատի ղեկավարն արտայայտութիւնից յետոյ).— Աշխէն, տո՛ւր ինձ վերաբերուս և գլխարկս:

ԱՇԽԷՆ (Վախեցած).— Ինչո՞ւ համար, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ (Բարձր ձայնով).— Տո՛ւր ասում եմ վերաբերուս և գլխարկս:

Աշխէնը բռնում է նախասեւեակից վերարկուն և գլխարկը: Նախասեւեակը հագնւում է և լուռ շարժում դիպի նախասեւեակը:

ԱՇԽԷՆ (Ընկճուած ձայնով).— Ո՞ւր, հայրիկ:

Նախասեւեակը առանց խօսելու ելնում է նախասեւեակի:

ԱՇԽԷՆ (Շփոթուած, կարճատեւ լռութիւնից յետոյ, Արտակն).— Իրիկունը քեզ չասացի՞, որ անխոհեմութիւն է Վահանին մեզ մօտ բերել՝ առանց հայրիկին նախապատրաստելու:

ԱՐՏԱԿ (Մտնեղած).— Այո՛, Աշխէն, բայց ես չեմ կարող հայրիկի պատճառով իմ դուռը փակել մի մարդու առաջ, անգամ եթէ նա ազգական եւ ընկեր չլինի, որից կախուած է մեր ամենակենսական հարցերի լուծումը:

ԱՇԽԷՆ (Այլերը լայն բացած).— Ինչպէ՞ս թէ՛ չես կարող հայրիկի պատճառով... (Յուզմունքով) Գիտե՞ս, դա այն հայրիկն է, որ Սիրաքի սպանութեան լուրն առած

գիշերը մերկ ձեռքերով դուռս եկաւ մառազներխտներ զէմ եւ, իր կեանքը վտանգի ենթարկելով, պաշտպանեց քեզ՝ մինչեւ որ Աշոտը մեզ օգնութեան հասաւ...

ԱՐՏԱԿ (Մտնալով).— Գիտեմ, Աշխէն, ինչպէ՞ս չգիտեմ: Բայց խօսքը հիմա Վահանի մասին է: Նա այնքան է յուսահատուած, թէ հայրիկը կարող է նրան ներել, որ ուզում է ընդմիջտ հեռանալ ոչ միայն Հայաստանից, այլ և Խորհրդային Միութիւնից: Իսկ դու գիտե՞ս թէ սա ի՞նչ հարուած կը լինի այս երկրին:

ԱՇԽԷՆ.— Բայց հայրիկն էլ, կարծեմ, շատ է մղրտկացել այս երկրի համար:

ԱՐՏԱԿ.— Անկասկած: Եւ հէնց դրա համար էլ մենք աւելի ևս պէտք է ջանք թափենք, որ նա խաղաղ հողիով փակի իր աչքերը: Մենք չպէտք է թոյլ տանք, որ հայրիկը իր մի գաւկի համար կսկիծ, իսկ մի գաւկի համար նշուք ունենալով իր սրտում՝ իջնի գերեզման:

ԱՇԽԷՆ (Մտնալով այլերը).— Լաւ ես ասում: Բայց ինչպէ՞ս անենք... Դու տեսար չէ՞...

ԱՐՏԱԿ.— Լսի՛ր, Աշխէն: Երբ Վահանը գայ՝ դու մի ձեռով զբաղեցրու նրան, իսկ ես կգնամ հայրիկի յետեւից: Չգիտեմ ինչո՞ւ, բայց այն զգացումն ունիմ, որ կը կարողանամ նրան վերադարձնել: Դու չնկատեցի՞ր թէ նա բողբոջում նրան վերադարձնել: Դու չնկատեցի՞ր թէ նա ի՞նչ մեծ ուշադրութեամբ էր լսում ինձ, երբ ես պատմում էի Վահանի ունեցած օգտակարութիւնները մասին:

ԱՇԽԷՆ.— Փորձիր, տեսնենք:

ԱՐՏԱԿ.— Լաւ: Դէ՛ գու գնա՛ կարգադրութիւն արա՛ ճաշի համար, որովհետեւ մտադիր եմ Վահանին պահել ճաշի:

ԱՇԽԷՆ.— Իսկ դու ի՞նչ ես անելու հիմա:

ԱՐՏԱԿ.— Ներսը մի քանի թղթեր պիտի ստորա-

գրեմ:

Ելնում են. Աշխէնը՝ նախասեւեակ, իսկ Արտակը՝ աջ դռնով: Դասարկ բեմ.

Տ Ե Ս Ի Լ 5.

Ն. Ա. Հ. Ա. Պ. Ե Տ

ՆԱ.ՀԱ.ՊԵՏ (Մանկավարժական, վերարկուով եւ գլխարկով, կամաց խօսում ե ինքն իրեն).— Ձեմ կարող... Ոչ, չեմ կարող... Գո՛հէ մի անգամ... Գո՛հէ մի անգամ, թէկուզ հեռուից... (Պահ մը անորոշութեան մեջ այսպէս կողմը մայեղաց յետոյ՝ յուշիկ խաղերով մտնում ե իր սենեակը եւ դուռը ծածկում):

Դասարկ քեւ

Խուլ զանգահարութիւն

Տ Ե Ս Ի Լ 6.

ԱՐՏԱԿ ԵՒ ՎԱՀԱՆ

Արտակը մտնում է աջ դռնից եւ անցնում նախասենեակ, որտեղից մտնում է նորից քեւ Վահանին հետ միասին:

ՎԱՀԱՆ (Կամաց եւ խշուկով).— Հայրիկը տա՞նն է: ԱՐՏԱԿ.— Ձէ: Հիմա կզնամ կկանչեմ: Երեւի բուլ՝ վարն է իջել զբօսնելու: (Կանչելով նախասենեակի դռնից դուռ) Աչխէ՛ն...

ԱՇԽԷՆ (Ներսից).— Այս վայրկեանիս:

ԱՐՏԱԿ (Վահանին).— Դու չասացիր, սակայն, թէ ի՞նչ պէտք է անել Գեղամի եւ իր համախոհների հետ, եթէ նրանք շարունակեն իրենց էլը քշել:

ՎԱՀԱՆ.— Նրանց պէտք է, առանց այլեւայլութեան չէզոքացնել ամէն մի գործից: Նոր կուրսի կողմնակիցներ հի հանդէպ ստեղծուած ժողովրդական համակրանքը երկար չի տեւի, եթէ ժողովուրդը գործի վրայ տեսնի այդ կարիէրիստներին, որոնք իրենց կեղծ ինտելեկտուալ զուգահեռներու համար, արհամարհում էին այս երկրի արդար եւ կենսական շահերը:

ԱՐՏԱԿ.— Կարծում ես, որ նրանք հանգիստ կը մնան իրենց չէզոքացած վիճակում:

ՎԱՀԱՆ.— Այն էլ ինչպէ՛ս... Տիպերը լաւ եմ ճա-

նաչում. բաւական է, որ օրուայ իշխանութեան բոլորները ուժեղ տեսնեն:

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆԻ ԵՒ ԱՇԽԷՆ

ԱՇԽԷՆ (Մանկավարժական).— Բարեւ, Վահան, գիշերն ինչպէ՞ս անցրիր: ՎԱՀԱՆ.— Գրեթէ լուսացրինք, Արտակի հետ զբոսնելով:

ԱՐՏԱԿ.— Դէ, հիմա էլ դուք զբոսն արէք, մինչեւ ես հայրիկին կանչեմ: (Ելնում ե նախասենեակ):

ԱՇԽԷՆ.— Լաւ ասաց Արտակը: Քանի որ աղատ եմք, շարունակիր երէկուայ պատմութիւնը:

ՎԱՀԱՆ.— Նորից իմ մասին: Կամաց բացում ե խորի մախ դուռը եւ երեւում ե նախապէս զուխը, որ երբեմն յետ ե խաղում եւ երբեմն դուռը ցցում՝ զարուարթիւն ձգելով, որ նախապէս շուտ ե խօսակցութիւնը: Այս տեսարանը շարունակում ե, մինչեւ 8-րդ ժամի շուրջը:

ԱՇԽԷՆ.— Այո՛, երէկ դու կանգ առար գրեթէ բացառապէս քո այն գործերի եւ ապրումների վրայ, որոնք առնչութիւն ունին վերջին յեղաշրջման հետ: Բայց քո կեանքի սկզբնական շրջանի մասին բան չասացիր:

ՎԱՀԱՆ.— Իրաւունք ունիմ Պէտք էր սկզբից սկսել: (Թախիծով) Որովհետեւ բոլոր չարիքների արմատը այդ սկզբի մէջն է:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս: ՎԱՀԱՆ.— Դու յիշում ես, Աչխէն, թէ այն օրերին, երբ ես անդամադրուեցի մեր կուսակցութեանը՝ ի՞նչ անգուղակ թշնամական վերաբերում ունէի դէպի դաշնակցականները, էս-էրները եւ նոյնիսկ մենչեւիկները, թէեւ այդ ժամանակ մենք վերջիններից դեռ ես պաշտօնապէս չէինք անջատուած:

ԱՇԽԷՆ.— Այո՛, Յիշում եմ նաեւ, թէ հայրիկն ինչ-

քան էլ յանդիմանում քեզ դրա համար:

ՎԱՀԱՆ.— Եւ ոչ միայն հայրիկը, այլ եւ ուրիշները: Բայց չեղաւ մի վայրկեան, որ ես աղանջ կախէի այդ յանդիմանութիւններին: Եւ գլխե^օ ինչու:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ:

ՎԱՀՄԱՆ.— Որովհետեւ մեր կուսակցութեան գաղափարներն ինձ ներկայացրել էին իբրեւ բացարձակապէս անառարկելի ձգտարտութիւն, եւ ես էլ, հաւատացեալի ջերմեռանդութեամբ, ծնրադրել էի նրանց առջեւ: Որ այդ գաղափարները կարող էին պակասաւոր լինել, որ նրանցից զուրս էլ կարող էր ձգտարտութիւն լինել՝ դա ինձ համար նուազ հասկանալի էր, քան միջնադարեան ճգնաւորի համար ոեւէ կասկած Դրիստոսի յարութեան մասին: (Լոռն Կ):

ԱՇԽԷՆ.— Յետո՞ւյ:

ՎԱՀԱՆ.— Յետոյ էլ, մի օր այդ հաւատացող հոգու
մէջ դրին մի սոսկալի միտք՝ թէ մեր գաղափարները յաղ-
թանակի համար, կարելի է դիմել ամէն միջոցի՝ որքան
էլ նա ստոր լինէր:

ԱՇԽԵՆ.— Գիտե՞մ, Գեղամն էլ այլ ցնդած միտքը
քեզ ներշնչողը:

ՎԱՀԱՆ.— Ինչո՞ւ միայն Գեղամը եւ ոչ նաեւ Նահումեանը, Աբուլլաճէն, Սարովիրը եւ ուրիշները, Մենք ամէնքս համոզուած էինք, որ իրաւունք ունինք և մինչեւ իսկ պարտաւոր ենք կեղծել, խաբել, դաւել, կեղեքել եւ սպանել՝ եթէ միայն դա անհրաժեշտ էր մեր նպատակների իրականացման համար:

ԱՇԽԷՆ.— Բարեբախտաբար ո'չ ամէնքս, Մեղանից շատերն անթոյլատրելի էին համարում ոտքի տակ տալ մարդկային-բարոյական օրէնքները:

ՎԱՀՄԱՆ.— Ես չգիտեմ, թէ այդ շատերը ի՞նչ թիւ էին կազմում մեր կուսակցութեան մէջ: Գիտեմ միայն, որ նրանք էլ անարգանքի սիւնին չէին դամու՛մ մարդո՛ւ կային-բարոյակա՛ն օրէնքները ոտնահարողներին: Սակայն կարեւորն այս չէ, այլ այն, որ երբ մի պարզ հոգու մէջ

գաղափարի անսխալականութիւնը և միջոցների անխտրականութիւնը համադրուեցին՝ այդ պարզ հոգին, եթէ քրիստոնեայ է, կարող է հեշտութեամբ դառնալ եղուիտական ինկլիլիտոր, իսկ եթէ բուլեիկ է՝ կարող է դառնալ արիւննուշտ չէկիստ. բաւական է միայն, որ համապատասխան պայմաններ լինեն:

ԱՇԽԷՆ.— Բո պարագայում, համապատասխան պայմաններ հանդիսացան, անշուշտ, Հիւսիսային Կովկասի քաղաքացիական կռիւները:

ՎԱՅՄ.Ն.— Այո՛, ես նետուեցի այդ կոհնեբրի մէջ
 իբրեւ մի կատաղի գազան, կամ, աւելի արդար կը լինէր
 ասել՝ իբրեւ մի լարուած մեքենայ: Որովհետեւ սպանու-
 թիւնների մէջ երեք գազանական հաճոյք չեմ զգացել,
 ինչ որ ինձ վերագրուում է: Մեր հակառակորդներին ոչոն-
 չացնելն ինձ համար նոյնն էր, ինչ որ մորեխ կամ բա-
 ցիլ ոչնչացնելը մի բարեխաղճ գիտնականի համար:

ԱՇԽԷՆ (Դառնութեամբ).— Եւ այդպէս, մարդ-մո-
րեխ կամ մարդ-բացիլ ոչնչացնելով՝ թաւալդլոր հասար
մինչեւ քո հարազատ եղբայրը...

ՎԱՀԱՆ.— Անարգարու թիւն է, Աշխէն, ասել, թէ ես
եղբայր եմ սպանել: Մեր հակառակորդները երբեք մարդ-
կային արժէք չեն ունեցել իմ աչքում, որպէսզի եղբօր
արժէք ունենային: (Թախծով) Սիրաքի զէպից յետոյ
միայն իմ հողու աչքերը բացուեցին, և ես զգացի, որ իմ
դոհները մարդկային էակներ են եղել:

ԱՇԽԵՆ.— Ինչպէ՞ս:

ՎԱՀԱՆ (Բուռն ձիգ գործ դնելով իր վրայ)
թխեր շարունակելու համար)։— Երբ Սիրաքը ինկաւ, նա
դեռ մեռած էէր, այլ կիսախուփ աչքերով պառկած էր
մէջքի վրայ, եւ պատրաստուում էին կարդադրել, որ նրա
մէջքի վրայ, եւ պատրաստուում էին կարդադրել, որ նրա
միւս ընկերներին էլ վերջացնեն, երբ Սիրաքը վերջին
անգամ բացաւ աչքերը... (Ձայնը խեղդում է) Ա՛խ այդ
աչքերը... Նրանք այնքա՞ն տխուր էին, եւ միեւնոյն
ժամանակ այնքա՞ն խոհուն եւ բարի... (Այսինը լուռ
արտատում է) Շարունակե՞մ, Աշխէ՛ն:

ԱՇԽԷՆ (Թաշխինակով աշխեր ծածկած).— Շարունակի՛ր:

ՎԱՀԱՆ (Ձեռնով տրոհելով աշխեր).— Այդ հայեացքից մի ելեք տրական դող անցաւ ոտքիցս մինչեւ գլուխս, և ես, չփոթութեան մատնուելով, կարգադրեցի, որ միւսներն գործը յետաձգեն յաջորդ գիշերուան: Սակայն որոշեալ ժամին, երբ գնացի բանտ՝ նորից մի անվճռականութիւն եկաւ վրաս: Իսկ երբ ձերբակալուածներին բերին իմ առաջ՝ ինձ այնպէս թւաց, թէ բոլորն էլ Սիրաքի աշփերն ունէին. նրա տխուր, խոհուն և բարի աչքերը . . . Իմ կամքս վերջնականապէս անդամալուծուած էր: Ես մի քանի անկապ հարցեր տուի ձերբակալուածներին եւ հրամայեցի, ի զարմանս իմ օգնականներին, որ նրանց ազատ արձակեն: Նոյն գիշերը ինչ որ պատրուակով Պաքու մեկնեցի՝ այլեւս չվերադառնալու պայմանով:

ԱՇԽԷՆ.— Իսկ այդ օրերին մայրիկը, հայրիկը, Անահիտը և ես ինչքա՞ն էինք կարօտում քեզ: Եւ խեղճ Աշոտը, Սիրաքին հաճոյք պատճառելու համար, ինչքա՞ն էր չարչարուում, որպէսզի քո տեղն իմանայ եւ քեզ Հայաստան բերել տայ . . .

ՎԱՀԱՆ (Սասիկ ցալի արտայայտութեամբ).— Մի՛, մի՛, Աշխէն . . .

ԱՇԽԷՆ (Աշխեր արեղով).— Յետո՞յ ուր գնացիր:

ՎԱՀԱՆ (Կարճ լուրջ խոսքով).— Սիրաքի մահը դարձակէտ եղաւ իմ կեանքում: Ո՛ւր գնում էի, ի՛նչ անում էի՝ միշտ նրա հայեացքն էր զգում իմ վրայ: Անդադար քաղաքից-քաղաք եւ պաշտօնից-պաշտօն էի թափառում՝ առանց մի տեղ հանգիստ գտնելու . . . Այս հոփառում՝ առանց մի տեղ հաւանօրէն խելագարութեամբ վերջագեկան տագնապը հաւանօրէն խելագարութեամբ վերջանալ, եթէ ընկ. Սմիլնովը, որի կեանքն ազատել էի Կրասնոդարի կողմի ժամանակ, չյաջողեցնէր, որ ինձ արտասահման ղրկեն բժշկուելու:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ էիր անում արտասահմանում:

ՎԱՀԱՆ.— Երկար ժամանակ բժշկուելուց յետոյ՝ ծառայութեան կանչուեցի Վիեննայի Խորհրդային առևտրա-

կան ներկայացուցչութեան մէջ, բաւական բարձր պաշտօնով: Իսկ յետոյ, երբ ինձ էլ՝ իբրեւ «գեներալնայա լինիալի» (ընդհանուր քաղաքական ուղեգիր) հակառակորդի՝ հեռացրին պաշտօնից՝ ես մտայ տեղական համալսարանը և սկսայ կատաղօրէն պարապել՝ ամէն ինչ մոռնալու համար (Լոռքիւն): Սակայն իմ հոգեկան հանգիստը գտայ այն ժամանակ միայն, երբ վճռական որոշում կայացրի ամբողջ ուժերս ի սպաս գնել մեր ժողովրդի և մեր երկրի բախտաւորութեան գործին:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս եղաւ, որ դու յանկարծ այսպիսի որոշման եկար:

ՎԱՀԱՆ.— Իմ հոգեկան տագնապի ժամանակ, յաճախ էի մտածում, թէ ինչո՞ւ Սիրաքի հետ թշնամացայ: Այս մտածումը մղեց ինձ մօտից ծանօթանալու Սիրաքի գործերին, որոնց համար աշխատում էր Սիրաքը եւ այն գործերին, որոնց համար աշխատում էր խոտոր անցան: որոնց պատճառով մեր ճանապարհները խոտոր անցան: Գրեթէ երկու տարի ես անցրի այս աշխատանքների մէջ՝ Գրեթէ երկու տարի ես անցրի այս աշխատանքների մէջ՝ նախ Վիեննայի Միլիթարեան մատենադարանում, յետոյ և Փարիզում: Ես հանգամանօրէն ծանօթացայ օսմանեան կայսրութեան լծի տակ տառապած ժողովուրդների վիճակին, բարեխղճօրէն ուսումնասիրեցի հայկական շարժումները, պատմութիւնը, համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի գլխին պայթած արհաւիրքը, Հայաստանի Հանրապետութեան ծագման եւ զարգացման յատկանիշները և Հայաստանի խորհրդայնացումից յետոյ մեզ համար ստեղծուած վիճակը:

ԱՇԽԷՆ (Ձայնագած).— Յետո՞յ:

ՎԱՀԱՆ (Ընկճուած).— Ես խորին ցաւով զգացի, թէ ի՞նչ սոսկալի թիւրիմացութիւն է եղել մեր վերաբերմունքի մէջ դէպի Սիրաքի փափայլած գործերը:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւն է կայանում թիւրիմացութիւնը:

ՎԱՀԱՆ.— Նրանում, որ մենք այս գործերի հետապնդման մեթոդները չփոթել ենք նրանց էութեան հետ: ԱՇԽԷՆ.— Ձեմ հասկանում:

ՎԱՀԱՆ.— Սիրաքը եւ իր ընկերները հարկադրաբար թէ ոչ հարկադրաբար յաճախ այնպիսի միջոցներէն գիտում իրենց նպատակները հետապնդելիս, որ մենք պէտք է տղայական եւ մինչեւ իսկ փաստակար համարէինք: Բայց սրա պատճառով կարելի էր ժխտել այդ պահանջները արդարութիւնն ու անհրաժեշտութիւնը, երբ նրանք բոլորն էլ բնականօրէն բխում են ազգերի ինքնորոշման իրաւունքից, որ մենք իւրաքանչիւր ժողովրդի անկապտելի սեփականութիւնն ենք յայտարարել . . . ԸնդՎզեցուցիչ է եղել մասնաւորապէս մեր վերաբերմունքը դէպի կոտորածներից հրաշքով ազատուած թուրքահայ ժողովրդի բեկորները: (Յուզուած) Մենք, որ մեզ կոմունիստներ էինք համարում և պէտք է տողորուած լինէինք մարդկային գերագոյն արդարութեան իդէալով, մենք ինչպէ՞ս կարողացանք հաշտուել այն փաստի հետ, որ այդ աղէտահար բեկորները անտուն-անտիրական յաճում են աշխարհի բոլոր անկիւններում, մինչդեռ նրանց հայրենական տները, մարդկային բնակչութիւնից զուրկ լինելու պատճառով, այսօր, բառիս բուն իմաստով, վայրի գաղանհների որջ են դարձել . . .

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ կարող էինք անել թուրքահայ ժողովրդի համար, երբ այստեղ էլ մենք մեր գլխի եւ մեր տան տէրը չէինք:

ՎԱՀԱՆ.— Ծիշդ այդ եղրակացութեանը յանգայ եւ ես: Դրա համար էլ, հէնց որ կարմիր բանակի խլրտումները ծայր տուին՝ անմիջապէս ամէն բան թողի արտասահմանում եւ շտապեցի Մոսկուա:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ Մոսկուա եւ ոչ թէ Երևան:

ՎԱՀԱՆ.— Որովհետեւ Երևանում մի բան անելու համար, պէտք էր նախ մեր երկիրն ու ժողովուրդը սեփական ոտքերի վրայ դնել եւ զօրացնել: Իսկ դա չէր կարող լինել, մինչև որ համամիութենական կենտրոնում չջախջախուէր այն ընթացքը, որ ամէն մի ինքնուրոյնութիւնից զրկել էր ընդհանրապէս բոլոր ազգային հանրապետութիւնները և մասնաւորապէս մեր հանրապետութիւնը:

ԱՇԽԷՆ.— Իսկ հիմա՞ ինչ ես մտադիր անելու:

ՎԱՀԱՆ (Կարճատեղ լուսինից յետոյ և քսիծով).— Մտադիր եմ քաշուել մի կողմ:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ:

ՎԱՀԱՆ.— Իմ դերը Մոսկուայում գրեթէ վերջացած է: Այն բոլորը, ինչ որ կարելի էր անել անտեղ մեր իրաւունքների եւ շահերի պաշտպանութեան համար, արուած է արդէն: Մինչեւ այս առաւետ մտածում էի հաստատուել այստեղ եւ աջակցել Արտակին եւ միւս ընկերներին՝ մեր նախագծումներն իրականացնելու գործում: Բայց տեսնում եմ որ դա կապուած է մեծ անյարմարութիւնների հետ:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ անյարմարութիւններ:

ՎԱՀԱՆ.— Իմ ներկայութիւնն այստեղ պէտք է չարունակ ծանր յիշողութիւններ առաջ բերի հայրիկի, Անահիտի և ուրիշների մէջ եւ թունաւորի նրանց տրանսիտի և ուրիշների մէջ եւ թունաւորի նրանց տրամադրութիւնները: Դրա համար էլ ես որոշեցի, առժամապէս գոնէ, հեռանալ այստեղից: Ապագայում . . . Ո՞վ գիտէ . . . Դուցէ . . .

ԱՇԽԷՆ (Զգածուած գրկելով Վահանին).— Չէ, Վահան, դու չպէտք է հեռանաս: Դու պէտք է մնաս մեզ մօտ: Հայրիկն էլ, եթէ իմանայ, չի ուզի որ դու հեռանաս:

ՎԱՀԱՆ.— Ի դուր ես յուզւում, Աշխէն: Ինքզինքդ եւ Վահան, որ ես ճիշդ եմ ըմբոսնում կացութիւնը: (Դառն ժպիտով) Դու կարծում ես՝ ես չեմ հասկանում, թէ ինչո՞ւ է հայրիկն այս ժամին բացակայ տնից . . . (Յուզուած) Եւ ինչ է Արտակը փողոցում ցոյց տուեց Բրիտիկին, բայց ես չհամարձակուեցի մօտենալ նրան . . . Սիրաքի զաւակին . . . (Յուզմունքով զայելով) Կան անդունդներ, որոնց վրայից . . .

Տ Ե Ս Ի Լ 8.

Վ. ՄԱՆՆԻՍ ԵՒ ԱՐՏԱԿ

ԱՐՏԱԿ (Մտնելով նախասենեակից).— Չարմանալի է, թէ ո՛ւր է անհետացել մեր հայրիկը: Ո՞չ բուլվարում, ո՞չ

Անահիտենց մօտ . . .

ԱՇԽԷՆ.— Արտա՛կ, Վահանն ուղղում է նորից հեռա-
նալ մեզնից: Ասա՛ նրան, որ մնայ: Ես կը խօսիմ հայրիկի
հետ: Հայրիկը եթէ իմանայ . . . (Լալիս է):

ԱՐՏԱԿ (Աշխենին).— Հանգստացի՛ր սիրելիս, մենք
չենք թողնի, որ նա հեռանայ:

ՎԱՀԱՆ.— Արտակ, մենք ուշացանք: Զօրական կո-
միտարը և սպաները հիմա սպասում են մեզ:

ԱՐՏԱԿ.— Շտապելու կարիք չկայ: Կը ճաչենք եւ
ապա կ'երթանք: Աշխէն, սպասուհին եկաւ արդէն. ասա,
որ . . .

ՎԱՀԱՆ (Վճռական).— Ո՛չ, ո՛չ աւելորդ է: Պէտք է
գնամ: (Գրկելով Աշխենին) Մնաս բարով, Աշխէն: Ների՛ր,
որ քեզ յուզմունք պատճառեցի: (Արագ հանքուրում է Աշ-
խենին եւ շարժում է դեպի նախասենեակ) Գնա՛նք, Արտակ:

ԱՇԽԷՆ (Տարածելով ձեռքերը դեպի Վահանը եւ փաշե-
լով նրա յետից).— Վահա՛ն, Վահա՛ն . . . (Լալիս է):

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՐԱՆԻՔ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնում է ձախ դռնից դողդոջ փաշեղով,
դեմքը գունատ եւ ողորդած արցունքով).— Վահա՛ն:

ԱՇԽԷՆ (Ապշահար).— Հայրի՛կ, դու այստե՞ղ . . .

ԱՐՏԱԿ.— Այս ե՞րբ եկար:

ՆԱՀԱՊԵՏ.— Վահա՛ն, զաւա՛կս, մօտ արի:

ՎԱՀԱՆ (Նետելով նահապետի դիրքը).— Հայրի՛կ . . .
(Հէկեկում է):

ՆԱՀԱՊԵՏ (Վերացած).— Մօտի՛կ, մօտի՛կ . . . Սեղ-
մուի՛ր կրծքիս . . . Այդպէ՛ս . . . Այդպէ՛ս . . . Ա՛խ,
Աստուած իմ . . . Կորած էր գտնուեց, մեռած էր՝ յարու-
թիւն առաւ . . .

Խույզ գանգահարութիւն

ԱՐՏԱԿ.— Եւ յարութիւն առաւ հէնց այն ժամա-
նակ, երբ այնքան կարիք էինք զգում իրեն:

ՎԱՀԱՆ (Բարձրացնելով արսառաղից ափերը նահա-
պետի վրայ).— Հայրիկ, մի՞թէ դու ինձ կարող ես ներել . . .

Տ Ե Ս Ի Լ 10.

ՆՐԱՆԻՔ, ԱՇՈՏ ԵՒ ԱՆԱՀԻՏ

Այս պահին Վահանն ու նահապետը այնպէս են կանգնած, որ նա-
խասենեակից մտնող Աշոտն ու Անահիտը չպիտի կարողանային իսկոյն նկա-
սել Վահանին:

ՆԱՀԱՊԵՏ (Ձեռքերը սարածելով դեպի Աշոտը).— Ա-
շո՛տ, Աշո՛տ . . .

ԱՇՈՏ (Նետելով նահապետի դիրքը).— Հայրի՛կ . . .
(Հաւրայր) Ա՛խ, ինչքա՛ն կարօտեցի եմ քեզ . . . (Դառնա-
լով Արսակին) Արտակ ջան, այդ ինչպէ՛ս փոխուել ես . . .
(Հաւրայր):

ԱՐՏԱԿ (Խնդարով).— Կարծում ես դու առաջուա՞ն
ես մնացել: Մի մաղբերի՛դ հայրի՛ր:

ԱՇՈՏ.— Այս էլ մեր Աշխէնը. միշտ իրեն նման և
միշտ ա՛նուշ (Հաւրայր):

ԱՆԱՀԻՏ (Ծիծաղով Աշխենին).— Հիմա կարօտդ ա-
ռա՞ր:

ԱՇԽԷՆ (Ուրախ).— Մի քիչ:

ՆԱՀԱՊԵՏ (Բռնելով Վահանի ափ ձեռքը).— Աշո՛տ,
մօտ արի: Դու էլ, Անահի՛տ, եկ այստեղ:

ԱՇՈՏ (Զուարթ մօտենալով).— Ի՞նչ է, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ (Առաջ փաշելով Վահանին).— Ծանաչո՞ւմ
ես սրան:

ԱՇՈՏ (Մօտից դիտելով Վահանին եւ ցնցուելով).— Ա՛յս
ինչ է:

ԱՆԱՀԻՏ (Սարսափած).— Հայրի՛կ, դո՞ւ . . .

ԱՇԽԷՆ (Լացականաց).— Անահիտ ջան, աղաչում
եմ . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Հանգստացէ՛ք, զաւակներս, սա մեր
Վահանն է: Ոչ այն Վահանը, այլ մեր Վահանը: Եւ սա իր
կամքով չէ եկել այստեղ: Սրան Սիրաքն է ներչնչել, որ
գայ և իր հայրիկն է հրաւիրել . . . (Բարձրացնելով Վա-
հանի աջ ձեռքը) Աշոտ, սեղմի՛ր այս ձեռքը և իմացի՛ր, որ
մի թանկագին եղբօր ձեռք ես սեղմում:

ԱՇՈՏ (Տառափունքով).— Բայց հայրի՛կ . . .

ՆԱՀԱՊԵՏ (Աշոտին, հրաւայականօրէն).— Սեղմի՛ր

այս ձեռքը, ասում եմ քեզ: (Աշոտը քոնում է Վահանին ձեռքը) Դու էլ, Անահիտ, առաջուան պէս գուրգուրա՛սրա՛ վրայ: Սա հին օրերի կորովի Վահանն է և նոր օրերի հասուն Սիրաքը...

Վ.Ա.Ն. (Յուզումով).— Անահիտ, ների՛ր ինձ...

ՆԱՀԱՊԵՏ (Վահանին).— Մի՛ խօսիր ներելու մասին, դաւա՛կա: Երբ հայրիկը ներկայ է, ուրիշին ներողութեան խօսք չի հասնի: Դուք ջանացէ՛ք միայն իրար հասկանալ: Մնացածը ինքն իրեն կը լինի: Եթէ ժամանակին լսէիք հայրիկին եւ փորձէիք իրար հասկանալ՝ շատ ազդեանք խնայուած կը լինէին մեզ համար... Այսօր էլ իրար հասկանալու անհրաժեշտութիւնը եւ հնարաւորութիւնը կայ: (Վահանին) Դու ուզում ես ՆՈՐ հայրենիք: (Յոյց տալով Աշոտի վրայ) սա ուզում է ՀԶՕՐ հայրենիք: Իսկ մեր բանաստեղծը գեռ շատ տարիներ առաջ համադրել էր ձեր երկուսիդ ձգտումները մի գողտրիկ տողի մէջ... (Յիշելով ձիգով) Ինչպէ՛ս էր այդ տողը... Յիշեցի. «Իմ նո՛ր հայրենիք, հզօ՛ր հայրենիք»... Այո՛, դաւակներս, նոր եւ Հզօր. Որովհետեւ (Վահանին) Ի՞նչ արժէք ունի նորը, երբ նա կիսակատար է, երբ նրա ողնայարը ամուր չէ, երբ նրա վտիտ մարմինը ենթակայ է ամէն պատահարի: Եւ (Աշոտին) կարո՞ղ է մի հայրենիք հզօր լինել, երբ նա ներքուստ չէ վերանորոգուած ժամանակի ոգով եւ արդարութեան պահանջներով... (Երազանքի մեջ) Միմոն Մերունին, այսպիսի մի երջանիկ վայրկեանի, կ'ուզէր իր աչքերը փակել: Սակայն ծերունի Նահապետը այսօր տրամադիր չէ փակելու իր աչքերը... Աչխէ՛ն, մեզ ճաշ տուր: Մի լա՛ւ ճաշ՝ «Արարատ»ի կոնեակով եւ Նախիջեւանի զինիով...

ԱՇՈՒՆ (Շարժուելով դեպի նահաստեսակի դուռը).—

Այս բողէիս, հայրիկ ջան:

ՆԱՀԱՊԵՏ.— Հայրի՛կ, աւելի լաւ է գնանք ամէնքս մեզ մօտ: Մեր ճաշը առաւօտից պատրաստ է: Գրիստիկն ու Միմոնիկն էլ անհամբեր մեզ են սպասում:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ լաւ կը լինի, աղջիկա: Աչխէ՛ն, Ստեփանիկին եւ Րոզիկին պատրաստի՛ր, որ հետներս տանք: Այսօր Նահապետ Նահապետեանի համար ուրախութեան մեծ տօն է, եւ պէտք է, որ նա իր բոլոր որդիներով եւ թոռներով շրջապատուած լինի: Դէ՛ գնա՛նք, դաւակներս:

(Նահապետ մի ձեռքով Աւոտի, միւս ձեռքով Վահանի քեւ մը տալով՝ շարժում է դեպի նահաստեսակի դուռը: Միւսները հետեւում են նրանց:)

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.

ՀՀ Ազգային գրադարան



NL0123860

54040

ԳԻՆ 7.50 ՖՐԱՆԲ